

የኢትዮጵያ ፊዴራል

የኢትዮጵያ ፊዴራል

^աՏէրը Մովսէսի խօսեցաւ Սինայի անապատը՝ Հանդիպումի վրանին մէջ, անոնց եգիպտոսի երկրէն ելլելուն երկրորդ տարուան երկրորդ ամսուան առաջին **օրը**՝ ըսելով. ² «Առէք Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքին գումարը՝ իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, բոլոր արուները **համրելով իրենց** անուններուն թիւով՝ ^բմէկ առ մէկ»: ³ Դուն ու Ահարոն թուարկեցէք Իսրայէլի մէջ քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան ^գգացողները՝ իրենց զօրաբաժիններուն համեմատ: ⁴ Չեզի հետ ամէն տոհմէն մէկական մարդ թող ըլլայ. **անոնցմէ** իւրաքանչիւրը՝ իր նահապետութեան գլխաւորը **ըլլայ:**

⁵ Ահա՛ւասիկ այն մարդոց անունները՝ որոնք ծեզի հետ պիտի կայնին. – ⁶ Ռուբէնէ՝ Սեղիուրի որդին Եղիսուր, ⁷ Շմաւոնէ՝ Սուլիսադայի որդին Սաղամիէլ, ⁷ Յուտայէ՝ Ամինադարի որդին Նաստն, ⁸ Իսաքարէ՝ Սովգարի որդին Նաթանայէլ, ⁹ Զաբուղոնէ՝ Քեղոնի որդին Եղիաբ, ¹⁰ Յովսէփի որդիններէն՝ Եփրեմէ՝ Ամիուդի որդին Եղիսամա, Մանասէն՝ Փադասուրի որդին Գամաղիէլ, ¹¹ Բենիամինէ՝ Գեղէոնիի որդին Արիդան, ¹² Դանէ՝ Ամիսադայի որդին Աքինզեր, ¹³ Ասերէ՝ Եքրանի որդին Փաքիէլ, ¹⁴ Գաղէ՝ Դագուէլի որդին Եղիասափ, ¹⁵ Նեփաղիմէ՝ Ենանի որդին Աքիրէ»: ¹⁶ Ասոնք էին համայնքին անուանները, իրենց հայրերուն տոհմերուն իշխանները, իսրայէլի հազարապետները:

¹⁷ Մովսէս եւ Ահարոն առին այս մարդիկը, որոնք **իրենց** անուններով որոշուած էին, ¹⁸ ու երկրորդ ամսուան առաջին **օրը** ամբողջ համայնքը հաւաքեցին. իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր եղող բոլորը ^բմէկ առ մէկ՝ **արձանագրեցին իրենց** ծնունդները՝ անուններուն թիւով: ¹⁹ Ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր, այնպէս ան թուարկեց զանոնք Սինայի անապատին մէջ:

²⁰ Իսրայէլի անդրանիկ որդիին՝ Ռուբէնի որդինները իրենց ծնունդներով, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները, բոլոր թուարկուած արուները **իրենց** անուններուն թիւով՝ ^բմէկ առ մէկ», ²¹ Ռուբէնի տոհմէն թուարկուածները՝ քառասունվեց հազար հինգ հարիւր **հոգի** էին:

²² Շմաւոնի որդինները՝ իրենց ծնունդներով, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները, բոլոր թուարկուած արուները **իրենց** անուններուն թիւով՝ ^բմէկ առ մէկ», ²³ Շմաւոնի տոհմէն թուարկուածները յիսունինը հազար երեք հարիւր **հոգի** էին:

²⁴ Գաղի որդինները՝ իրենց ծնունդներով, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները **իրենց** անուններուն թիւով, ²⁵ Գաղի տոհմէն թուարկուածները քառասունհինգ հազար վեց հարիւր յիսուն հոգի էին:

^ա **Եբր.**՝ Եհովան

^բ **Եբր.**՝ մարդ գլուխ

^գ **Եբր.**՝ դուրս ելլողները

^դ **Եբր.**՝ մարդ գլուխ

^ե **Եբր.**՝ մարդ գլուխ

^գ **Եբր.**՝ մարդ գլուխ

26 Յուղայի որդիները՝ իրենց ծնունդներով, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները, **իրենց** անուններուն թիւով, **27** Յուղայի տոհմէն թուարկուածները եօթանասունչորս հազար վեց հարիւր **հոգի** էին:

28 Իսաքարի որդիները՝ իրենց ծնունդներով, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները, **իրենց** անուններուն թիւով, **29** Իսաքարի տոհմէն թուարկուածները յիսունչօթը հազար չորս հարիւր **հոգի** էին:

30 Զաքուղոնի որդիները՝ իրենց ծնունդներով, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները, **իրենց** անուններուն թիւով, **31** Զաքուղոնի տոհմէն թուարկուածները յիսունչօթը հազար չորս հարիւր **հոգի** էին:

32 Յովսէփի որդիներէն Եփրեմի որդիները՝ իրենց ծնունդներով, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները, **իրենց** անուններուն թիւով, **33** Եփրեմի տոհմէն թուարկուածները քառասուն հազար հինգ հարիւր **հոգի** էին:

34 Մանասէի որդիները՝ իրենց ծնունդներով, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները, **իրենց** անուններուն թիւով, **35** Մանասէի տոհմէն թուարկուածները երեսուններկու հազար երկու հարիւր **հոգի** էին:

36 Բենիամինի որդիները՝ իրենց ծնունդներով, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները, **իրենց** անուններուն թիւով, **37** Բենիամինի տոհմէն թուարկուածները երեսունհինգ հազար չորս հարիւր **հոգի** էին:

38 Դանի որդիները՝ իրենց ծնունդներով, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները, **իրենց** անուններուն թիւով, **39** Դանի տոհմէն թուարկուածները վաթսուններկու հազար եօթը հարիւր **հոգի** էին:

40 Ասերի որդիները՝ իրենց ծնունդներով, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները, **իրենց** անուններուն թիւով, **41** Ասերի տոհմէն թուարկուածները քառասունմէկ հազար հինգ հարիւր **հոգի** էին:

42 Նեփրադիմի որդիները՝ իրենց ծնունդներով, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները, **իրենց** անուններուն թիւով, **43** Նեփրադիմի տոհմէն թուարկուածները յիսուններեք հազար չորս հարիւր **հոգի** էին:

44 Ասոնք են այն թուարկուածները, որ Մովսէս, Ահարոն ու Իսրայէլի իշխանները թուարկեցին. **այս** **իշխանները** տասներկու մարդիկ էին, իրաքանչիւրը իր նահապետութեան համար **որոշուած**: **45** Այսպէս թուարկուեցան Իսրայէլի բոլոր որդիները՝ իրենց նահապետութիւններուն համեմատ, Իսրայէլի մէջ քսան տարեկանէն վեր բոլոր զինուորութեան գացողները. **46** Բոլոր թուարկուածները վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն **հոգի** էին:

47 Բայց Ղետացիները՝ իրենց հայրերուն տոհմով՝ ասոնց հետ չթուարկուեցան, **48** քանի որ **Տէրը** խօսեր էր Մովսէսի՝ ըսելով. **49** «Միայն Ղետացիներուն տոհմը մի՛ թուարկեր, ու Իսրայէլի որդիներուն հետ անոնց գումարը մի՛ առներ: **50** Բայց Ղետացիները վերակացո՛ւ նշանակէ Վկայութեան խորանին, անոր բոլոր առարկաներուն եւ անոր **վերաբերեալ** բոլոր բաներուն. անո՞նք պիտի կրեն խորանն ու անոր բոլոր

առարկաները, անո՞ք պիտի կատարեն անոր պաշտօնը, եւ անո՞ք պիտի բանակին խորանին շուրջը: **51** Խորանին մեկնելու ատենը՝ Ղետացիները պիտի քակեն զայն, ու խորանին բանակելու ատենը՝ Ղետացիները պիտի կանգնեցնեն զայն. **անոր** մօտեցող օտարը պիտի մեղցուի:

52 Իսրայէլի որդիները իրենց զօրաբաժիններով թող բանակին՝ իրաքանչիւրը իր բանակավայրին մէջ, իրաքանչիւրը իր դրօշին քով: **53** Բայց Ղետացիները Վկայութեան խորանին շուրջը թող բանակին, որպէսզի Իսրայէլի որդիներուն համայնքին վրայ զայրոյթ չըլլայ, ու Ղետացիները Վկայութեան խորանին ^ևպաշտօնը թող կատարեն»: **54** Եւ Իսրայէլի որդիները՝ *Տէրոց Մովսէսի* բոլոր պատուիրածներուն համաձայն ըրին. այնպէս ըրին:

ՏՈՀՄԵՐՈՒ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻՆ ՄԷԶ

2

Տէրը խօսեցաւ *Մովսէսի* ու *Ահարոնի*՝ ըսելով. **2** «*Իսրայէլի որդիներէն իրաքանչիւրը իր դրօշին քով թող բանակի, իր նահապետութեան նշանով. Հանդիպումի վրանին դիմաց՝ բոլորածեւ թող բանակին:*

3 *Առջեւի կողմը՝ դէպի արեւելք՝ Յուտայի բանակին դրօշին **տակ** եղողները թող բանակին, իրենց զօրաբաժիններուն կարգով, եւ Ամինադարի որդին՝ Նասան, Յուտայի որդիներուն իշխանը.* **4** (անոր թուարկուած զօրաբաժինը եօթանասունչորս հազար վեց հարիւր **հոգի էր:**) **5** *Անոր քով բանակողները՝ Իսաքարի տոհմը, ու Սովգարի որդին՝ Նաթանայէլ, Իսաքարի որդիներուն իշխանը թող ըլլան.* **6** (անոր թուարկուած զօրաբաժինը յիսունչորս հազար չորս հարիւր **հոգի էր:**) **7** **Յետոյ՝ Զաբուղոնի** տոհմը, եւ **Քեղոնի** որդին՝ Եղիաբ, **Զաբուղոնի** որդիներուն իշխանը. **8** (անոր թուարկուած զօրաբաժինը յիսունեօթը հազար չորս հարիւր **հոգի էր:**) **9** (Յուտայի բանակին մէջ բոլոր թուարկուածները, իրենց զօրաբաժիններուն համեմատ, հարիւր ութսունվեց հազար չորս հարիւր **հոգի էին:**) *Ասոնք առջեւէն թող մեկնին:*

10 *Հարաւային կողմը՝ Ռուբէնի բանակին դրօշը թող ըլլայ, իր զօրաբաժիններուն կարգով, եւ Ռուբէնի որդիներուն իշխանը, Սեղիուրի որդին՝ Եղիսուր. **11** (անոր թուարկուած զօրաբաժինը քառասունվեց հազար հինգ հարիւր **հոգի էր:**) **12** *Անոր քով բանակողները՝ Շմաւոնի տոհմը, ու Շմաւոնի որդիներուն իշխանը, Սուրիսադայի որդին՝ Սաղամիէլ թող ըլլան.* **13** (անոր թուարկուած զօրաբաժինը յիսունինը հազար երեք հարիւր **հոգի էր:**) **14** **Յետոյ՝ Գաղի** տոհմը, եւ **Գաղի** որդիներուն իշխանը, **Դագուէլի** որդին՝ Եղիասափ. **15** (անոր թուարկուած զօրաբաժինը քառասունհինգ հազար վեց հարիւր յիսուն **հոգի էր:**) **16** (Ռուբէնի բանակին մէջ բոլոր թուարկուածները, իրենց զօրաբաժիններուն համեմատ, հարիւր յիսունմէկ հազար չորս հարիւր յիսուն **հոգի էին:**) *Երկրորդ **անզամ** ասոնք թող մեկնին:**

17 **Յետոյ՝ Ղետացիներու** բանակին **հետ՝ Հանդիպումի** վրանը թող մեկնի, բանակներուն մէջտեղը: **Ինչպէս** բանակեցան՝ այնպէս թող մեկնին, իրաքանչիւրը իր տեղը՝ իր դրօշին քով:

18 *Արեւմտեան կողմը՝ Եփրեմի բանակին դրօշը թող ըլլայ, իր զօրաբաժիններուն կարգով, ու Եփրեմի որդիներուն իշխանը, Ամիուրի որդին՝ Եղիսամա. **19** (անոր թուարկուած զօրաբաժինը քառասուն հազար հինգ հարիւր **հոգի էր:**) **20** *Անոր քով՝ Մանասէի* տոհմը, եւ *Մանասէի* որդիներուն իշխանը, *Փաղասուրի* որդին՝ Գամադիէլ. **21** (անոր թուարկուած զօրաբաժինը երեսուներկու հազար երկու հարիւր **հոգի էր:**) **22** **Յետոյ՝***

^է **Երը.**՝ պահպանութիւնը թող պահեն

ԲԵՆԻԱՄԻՆԻ տոհմը, ու ԲԵՆԻԱՄԻՆԻ որդիներուն իշխանը, ԳԵՂԷՆԻԻ որդին՝ Աբիդան. **23** (անոր թուարկուած զօրաբաժինը երեսունհինգ հազար չորս հարիւր **հոգի** էր:) **24** (Եփրեմի բանակին մէջ բոլոր թուարկուածները, իրենց զօրաբաժիններուն համեմատ, հարիւր ութ հազար հարիւր **հոգի** էին:) Երրորդ **անգամ** ասոնք թող մեկնին:

25 Հիւսիսային կողմը՝ Դանի բանակին դրօշը թող ըլլայ, իր զօրաբաժիններուն կարգով, ու Դանի որդիներուն իշխանը, Ամիսադայի որդին՝ Աքիեզեր. **26** (անոր թուարկուած զօրաբաժինը վաթսուներկու հազար եօթը հարիւր **հոգի** էր:) **27** Անոր քով բանակողները՝ Ասերի տոհմը, եւ Ասերի որդիներուն իշխանը, Եզրանի որդին՝ Փագիէլ թող ըլլան. **28** (անոր թուարկուած զօրաբաժինը քառասունմէկ հազար հինգ հարիւր **հոգի** էր:) **29** **Յետոյ՝** Նեփրադիմի տոհմը, ու Նեփրադիմի որդիներուն իշխանը, Ենանի որդին՝ Աքիրէ. **30** (անոր թուարկուած զօրաբաժինը յիսուներեք հազար չորս հարիւր **հոգի** էր:) **31** (Դանի բանակին մէջ բոլոր թուարկուածները հարիւր յիսունեօթը հազար վեց հարիւր **հոգի** էին:) Ասոնք ամենէն ետք թող մեկնին՝ իրենց դրօշներով»:

32 Ասոնք են հսրայէլի որդիներէն թուարկուածները՝ իրենց նահապետութիւններով: Բանակներուն մէջ բոլոր թուարկուածները, իրենց զօրաբաժիններուն կարգով, վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն **հոգի** էին: **33** Բայց Դեւտացիները չթուարկուեցան հսրայէլի որդիներուն հետ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր: **34** Հսրայէլի որդիները՝ Տէրոց Մովսէսի բոլոր պատուիրածներուն համաձայն ըրին: Այսպէս կը բանակէին՝ իրենց դրօշներով, եւ այսպէս կը մեկնէին, իլրաքանչիւրը իր գերդաստանին կարգով եւ իր նահապետութեամբ:

ԱՀԱՐՈՆԻ ՈՐԴԻՆԵՐԸ

3

Ահա՛ասիկ Ահարոնի ու Մովսէսի ծնունդները՝ Տէրոց Մովսէսի հետ Սինա լերան վրայ խօսած օրը: **2** Ահա՛ասիկ Ահարոնի որդիներուն անունները.— անդրանիկը՝ Նադար, Աբիուտ, Եղիազար եւ Իթամար: **3** Ասոնք էին Ահարոնի որդիներուն՝ օծուած քահանաներուն անունները, որոնք նուիրուած էին քահանայութիւն կատարելու: **4** Նադար ու Աբիուտ մեռան Տէրոց առջեւ, երբ Սինայի անապատին մէջ Տէրոց առջեւ օտար կրակ մատուցանեցին. անոնք որդի չունէին: Իսկ Եղիազար եւ Իթամար քահանայութիւն կատարեցին իրենց հօր՝ Ահարոնի առջեւ:

ԴԵՒՏԱՑԻՆԵՐԸ ԿԸ ՍԱՀՄԱՆՈՒԻՆ ԹԱՀԱՆԱԿԱՆԵՐՈՒ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ

5 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **6** «Դեկի տոհմը մօտեցուր եւ զանոնք կեցուր Ահարոն քահանային առջեւ, որպէսզի անոր սպասարկեն, **7** ու ^ակատարեն անոր պաշտօնը» եւ ամբողջ համայնքին պաշտօնը Հանդիպումի վրանին առջեւ՝ խորանին ծառայութիւնը ընելով: **8** Հանդիպումի վրանին բոլոր առարկաներն ու հսրայէլի որդիներուն բաշտօնը թող կատարեն՝ խորանին ծառայութիւնը ընելով: **9** Եւ Ահարոնի ու անոր որդիներուն տուր Դեւտացիները. ասոնք հսրայէլի որդիներէն **ամբողջութեամբ** անոր տրուած են: **10** Նշանակէ՛ Ահարոնը եւ անոր որդիները՝ որպէսզի իրենց քահանայական պաշտօնը կատարեն. իսկ մօտեցող օտարը պիտի մեռցուի»:

11 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **12** «Ահա՝ հսրայէլի որդիներուն մէջէն

^ա **Երր.**՝ պահեն անոր պահպանութիւնը

^բ **Երր.**՝ պահպանութիւնը թող պահեն

Ղետացիները առի, հսրայէլի որդիներուն մէջ ամէն **մօրը** արգանդը բացող անդրանիկին տեղը. ուստի Ղետացիները իմս պիտի ըլլան, **13** քանի որ ամէն անդրանիկ իմս է: Երբ Եգիպտոսի երկրին մէջ բոլոր անդրանիկները զարկի, հսրայէլի բոլոր անդրանիկները՝ մարդէն մինչեւ անասուն՝ սրբացուցի ինձի համար. անոնք իմս պիտի ըլլան: Ե՞ս եմ **Տէրը**:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐՈՒՆ ՄԱՐԴԱՀԱՍԱՐԸ

14 **Տէրը** Սինայի անապատին մէջ խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **15** «Թուարկէ՛ Ղեփի որդիները իրենց նահապետութիւններուն եւ գերդաստաններուն համեմատ. մէկ ամսականէն վեր եղող ամէն արու թուարկէ՛»: **16** Մովսէս Տէրոց գրամանին համաձայն թուարկեց զանոնք, ինչպէս իրեն պատուիրուեցաւ: **17** Ահա՛ւասիկ Ղեփի որդիները՝ իրենց անուններով. Գերսոն, Կահաթ ու Մերարի: **18** Ահա՛ւասիկ Գերսոնի որդիներուն անունները՝ իրենց գերդաստաններով. Ղոբենի եւ Սեմէի. **19** Կահաթի որդիները՝ իրենց գերդաստաններով. Ամրամ, Իսահառ, Թեքրոն ու Ոզիէլ. **20** Եւ Մերարիի որդիները՝ իրենց գերդաստաններով. Մոհողի ու Մուսի: Ասոնք էին Ղետացիներուն տոհմերը՝ իրենց նահապետութիւններուն համեմատ:

21 Գերսոնէ՛ Ղոբենեաններու գերդաստանը եւ Սեմէեաններու գերդաստանը եղան. ասոնք են Գերսոնեաններու գերդաստանները: **22** Ասոնցմէ թուարկուածները – մէկ ամսականէն վեր եղող բոլոր արուներուն թիւին համեմատ թուարկուածները – եօթը հազար հինգ հարիւր **հոգի** էին: **23** Գերսոնեաններու գերդաստանները խորանին ետեւի կողմը՝ դէպի արեւմուտք կը բանակէին, **24** նաեւ Գերսոնեաններու նահապետութեան իշխանը, Լայէլի որդին՝ Եղիսափի: **25** Հանդիպումի վրանին մէջ Գերսոնի որդիներուն **պաշտօնին յանձնուած էին** խորանն ու վրանը, անոր ծածքը եւ Հանդիպումի վրանին մուտքի վարագոյրը, **26** խորանին ու զոհասեղանին շրջակայ սրահին վարագոյրները, սրահին մուտքի վարագոյրը, եւ անոր չուանները՝ **խորանին** ամբողջ ծառայութեան համար:

27 Կահաթէ՛ Ամրամեաններու գերդաստանը, Իսահառեաններու գերդաստանը, Թեքրոնեաններու գերդաստանն ու Ոզիէլեաններու գերդաստանը եղան. ասոնք են Կահաթեաններու գերդաստանները: **28** Մէկ ամսականէն վեր եղող բոլոր արուները՝ **իրենց** թիւին համեմատ՝ ութ հազար վեց հարիւր **հոգի** էին, որոնք սրբարանին **պաշտօնը** կը կատարէին»: **29** Կահաթի որդիներուն գերդաստանները խորանին հարաւային կողմը կը բանակէին, **30** նաեւ Կահաթեաններու գերդաստաններուն նահապետութեան իշխանը, Ոզիէլի որդին՝ Եղիսափիան: **31** Անոնց **պաշտօնին յանձնուած էին** տապանակն ու **առաջադրութեան հացին** սեղանը, աշտանակը, զոհասեղանները եւ սրբարանին առարկաները՝ որոնցմով պաշտօն կը կատարեն, վարագոյրն ու անոր ամբողջ ծառայութիւնը: **32** Իսկ Ղետացիներու իշխաններուն իշխանը, Ահարոն քահանային որդին՝ Եղիազար, սրբարանին **պաշտօնը** կատարողներուն՝ վրայ վերատեսուց էր:

^գ **Եբր.**՝ բերանին

^դ **Եբր.**՝ պահպանութեան

^ե **Եբր.**՝ պահպանութիւնը կը պահէին

^գ **Եբր.**՝ պահպանութեան

^է **Եբր.**՝ պահպանութիւնը պահողներուն

33 Մերարիէ՝ Մոհողեաններու գերդաստանը եւ Մուսեաններու գերդաստանը եղան. ասոնք են Մերարիի գերդաստանները: **34** Ասոնցմէ թուարկուածները – մէկ ամսականէն վեր եղող բոլոր արունները՝ **իրենց** թիւին համեմատ – վեց հազար երկու հարիւր **հոգի** էին: **35** Ասոնք եւ Մերարեաններու գերդաստաններուն նահապետութեան իշխանը, Արիքէլի որդին՝ Սուլրիէլ, խորանին հիւսիսային կողմը կը բանակէին: **36** Մերարիի որդիններուն վերակացութեան **յանձնուած էին իրը** ^{Պաշտօն}՝ խորանին տախտակները, անոր նիգերը, սիւներն ու խարիսխները, անոր բոլոր առարկանները եւ անոր ամբողջ ծառայութիւնը, **37** նաեւ շրջակայ սրահին սիւները, անոնց խարիսխները, ցիցերն ու չուանները:

38 Խորանին առջեւի կողմը, **այսինքն** Հանդիպումի վրանին առջեւ՝ դէպի արեւելք բանակողները Մովսէս, Ահարոն եւ անոր որդիններն էին, որ սրբարանին ^{Պաշտօն} կատարեն՝ Իսրայէլի որդիններուն **յանձնուած** ^{Պաշտօնին} համար. բայց անոր մօտեցող ունի օտար պիտի մեոցուէր: **39** Ղետացիններէն բոլոր թուարկուածները, որ իրենց գերդաստաններով Մովսէս ու Ահարոն թուարկեցին՝ **Տէրոց հրամանին համաձայն**, մէկ ամսականէն վեր եղող բոլոր արունները՝ քսաններկու հազար էին:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԸ ԿԸ ԳՐԱԻԵՆ ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐՈՒԻՆ ՏԵՂԸ

40 **Տէրը** Մովսէսի ըսաւ. «Թուարկէ՛ Իսրայէլի որդինները՝ մէկ ամսականէն վեր եղող բոլոր անդրանիկ արունները, եւ անոնց անուններուն թիւը առ: **41** Իսրայէլի որդիններուն բոլոր անդրանիկներուն տեղը՝ Ղետացինները առ ինծի համար – ե՞ս եմ **Տէրը** –, նաեւ Ղետացիններուն անասունները՝ Իսրայէլի որդիններուն անասուններուն բոլոր առջենեկներուն տեղը»: **42** Մովսէս թուարկեց Իսրայէլի որդիններուն բոլոր անդրանիկները, ինչպէս **Տէրը** իրեն պատուիրեր էր: **43** Բոլոր անդրանիկ արունները՝ **իրենց** անուններուն թիւով, մէկ ամսականէն վեր թուարկուողները, քսաններկու հազար երկու հարիւր եօթանասուններեք **հոգի** էին:

44 **Տէրը** խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **45** «Իսրայէլի որդիններուն մէջ՝ բոլոր անդրանիկներուն տեղը՝ Ղետացինները առ, եւ անոնց անասուններուն տեղը՝ Ղետացիններուն անասունները, որպէսզի Ղետացինները իմս ըլլան. ե՞ս եմ **Տէրը**: **46** Իսկ Ղետացիններուն **թիւէն** աւելցած՝ Իսրայէլի որդիններուն երկու հարիւր եօթանասուններեք անդրանիկներուն փրկանք ըլլալու համար, **47** **մարդ** գլուխ հինգ սիկդ առ. սրբարանի սիկդին համեմատ ա՛ռ – մէկ սիկդ քսան կերատ է –, **48** եւ անոնց մէջ աւելցածներուն փրկանքին դրամը Ահարոնի ու անոր որդիններուն տուր»: **49** Մովսէս Ղետացիններով փրկուածներուն աւելցածներէն առաւ փրկութեան դրամը. **50** Իսրայէլի որդիններուն անդրանիկներէն հազար երեք հարիւր վաթսունինգ սիկդ արժաթ առաւ՝ սրբարանի սիկդին համեմատ, **51** ու Մովսէս՝ **Տէրոց հրամանին համաձայն**՝ փրկուածներուն դրամը Ահարոնի եւ անոր որդիններուն տուրաւ, ինչպէս **Տէրը** Մովսէսի պատուիրեր էր:

ՂԵՒԻԻ ՈՐԴԻՆԵՐԷՆ ԿԱՀԱԹԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐԸ

4

¹ **Երր.**՝ պահպանութիւն

² **Երր.**՝ պահպանութիւնը պահեն

³ **Երր.**՝ պահպանութեան

Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով. **2** «Ղեւիի որդիներուն մէջէն՝ Կահաթի որդիներուն գումարը առ, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ: **3** **Թուարկէ՝** երեսուն տարեկանէն վեր մինչեւ յիսուն տարեկան բոլոր անոնք, որ սպասարկութեան մէջ կը մտնեն՝ Հանդիպումի վրանին մէջ գործ կատարելու համար: **4** Հանդիպումի վրանին մէջ Կահաթի որդիներուն պաշտօնը՝ ամենասուրբ բաները պիտի ըլլան: **5** Երբ բանակը մեկնի, Ահարոն ու անոր որդիները թող գան, ծածկող վարագոյրը իշեցնեն եւ անով Վկայութեան տապանակը ծածկեն: **6** Իշղարի մորթերէ ծածքը անոր վրայ թող դնեն, ամբողջովին “կապուտակէ լաթ մը տարածեն անոր վրայ, ու անոր ծողերը անցընեն: **7** Առաջադրութեան **հացի** սեղանին վրայ կապուտակէ լաթ մը թող տարածեն, եւ անոր վրայ դնեն ափսէները, խնկամանները, թասերն ու ^բթափելիք նուեր ընծայելու” բաժակները. մշտատեւ հացն ալ անոր վրայ պիտի ըլլայ: **8** Անոնց վրայ “կրկնակի կարմիրէ” լաթ մը թող տարածեն, իշղարի մորթերէ ծածքով ծածկեն զայն եւ անոր ծողերը անցընեն: **9** Կապուտակէ լաթ մը թող առնեն ու ծածկեն լուսակալին աշտանակը, անոր ճրագները, ունելիները, ճրագաբերանները եւ անոր բոլոր իւղի անօթները, որոնցմով անոր պաշտօնը կը կատարեն: **10** Զայն իր բոլոր առարկաներով թող դնեն իշղարի մորթերէ ծածքի մը մէջ, ու ծողի մը վրայ դնեն զայն: **11** Ուկի զոհասեղանին վրայ կապուտակէ լաթ մը թող տարածեն, իշղարի մորթերէ ծածքով մը ծածկեն զայն եւ անոր ծողերը անցընեն: **12** Պաշտօնին բոլոր առարկաները՝ որոնցմով պաշտօն կը կատարեն սրբարանին մէջ՝ թող առնեն, կապուտակէ լաթի մը մէջ փաթթեն, իշղարի մորթերէ ծածքով ծածկեն զանոնք, ու ծողի մը վրայ դնեն: **13** **Ողջակէզի** զոհասեղանէն մոխիրները հանելով՝ անոր վրայ ծիրանիէ լաթ մը թող տարածեն, **14** անոր վրայ թող դնեն անոր բոլոր առարկաները՝ որոնք անոր պաշտօնին համար **կը գործածուին, այսինքն՝** կրակարանները, մսահանները, թիակներն ու կոնքերը (զոհասեղանին բոլոր առարկաները), անոր վրայ իշղարի մորթերէ ծածք մը թող տարածեն եւ անոր ծողերը անցընեն: **15** Բանակին մեկնած ատենը՝ երբ Ահարոն ու անոր որդիները աւարտեն սրբարանը եւ սրբարանին բոլոր առարկաները ծածկելը, յետոյ Կահաթի որդիները թող գան **զանոնք** կրելու. բայց սուրբ բաներու թող չդպչին, որպէսզի չմեռնին»: Ասո՞նք են Կահաթի որդիներուն **կրելիք բեռները՝ Հանդիպումի վրանէն:**

16 Ահարոն քահանային որդին՝ Եղիազար վերատեսուչ թող ըլլայ լուսակալին իւղին, անուշաբոյր խունկին, մշտատեւ **հացի** ընծային եւ օծումի իւղին վրայ. ամբողջ խորանին, անոր մէջի բոլոր բաներուն, սրբարանին ու անոր առարկաներուն վրայ վերատեսուչ ըլլայ»:

17 Տէրը խօսեցաւ Մովսէսի եւ Ահարոնի՝ ըսելով. **18** «Մի՛ **թողուք որ** Ղեւտացիներուն մէջէն Կահաթեաններու գերդաստաններուն տոհմը բնացնջուի. **19** հապա սա՛ ըրէք անոնց, որպէսզի երբ ամենասուրբ բաներուն մօտենան՝ ողջ մնան ու չմեռնին: Ահարոն ու իր որդիները թող գան եւ անոնցմէ իւրաքանչիւրին պաշտօնն ու բեռը որոշեն: **20** Բայց երբ սուրբ բաները կը ծածկուին, անոնք տեսնելու համար թող ներս չմտնեն, որպէսզի չմեռնին»:

^ա **Այսինքն՝** կապուտակով ներկուած կերպասէ

^բ **Երբ.**՝ թափելու

^գ **Այսինքն՝** կրկնակի կարմիրով ներկուած կերպասէ

^դ **Այսինքն՝** ծիրանիով ներկուած կերպասէ

ՂԵՒԻԻ ՈՐԴԻՆԵՐԸՆ ԳԵՐՍՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

21 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **22** «Գերսոնի որդիներուն գումարն ալ առ, իրենց նահապետութիւններուն եւ գերդաստաններուն համեմատ: **23** Թուարկէ՛ երեսուն տարեկանէն վեր մինչեւ յիսուն տարեկան բոլոր անոնք, որ սպասարկութեան մէջ կը մտնեն՝ Հանդիպումի վրանին մէջ ծառայութիւն ընելու համար: **24** Ահա՛ ասիկ Գերսոննեաններու գերդաստաններուն ծառայելու եւ բեռ կրելու պաշտօնը.— **25** Անո՞նք պիտի կրեն խորանին վարագոյրներն ու Հանդիպումի վրանը, անոր ծածքը եւ անոր վրայի իշղարի ծածքը, Հանդիպումի վրանին մուտքի վարագոյրը, **26** խորանին ու զոհասեղանին շրջակայ սրահին վարագոյրները եւ սրահի դրան մուտքի վարագոյրը, անոնց չուաններն ու ծառայութեան բոլոր առարկաները, ամէն ինչ որ շինուած է անոնց համար. այսպէս պիտի ծառայեն: **27** Գերսոննեաններու որդիներուն ամբողջ պաշտօնը, իրենց բոլոր բեռներուն եւ ամբողջ ծառայութեան համար, Ահարոնի ու անոր որդիներուն հրամանով պիտի ըլլայ: Անոնց բոլոր բեռները իրենց վերատեսչութեան՝ **յանձնեցէք իբր**^բ պաշտօն: **28** Այս է Գերսոննեաններու որդիներուն գերդաստաններուն ծառայութիւնը Հանդիպումի վրանին մէջ. անոնց պաշտօնը Ահարոն քահանային որդիին՝ հթամարի ձեռքին տակ պիտի ըլլայ»:

ՂԵՒԻԻ ՈՐԴԻՆԵՐԸՆ ՄԵՐԱՐԻԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

29 «Թուարկէ՛ նաեւ Մերարիի որդիները, իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ. **30** Թուարկէ՛ երեսուն տարեկանէն վեր մինչեւ յիսուն տարեկան բոլոր անոնք, որ սպասարկութեան մէջ կը մտնեն՝ Հանդիպումի վրանին ծառայութիւնը ընելու համար: **31** Ահա՛ ասիկ իրենց բեռներուն պաշտօնը՝ Հանդիպումի վրանին մէջ իրենց ամբողջ ծառայութեան համեմատ.— խորանին տախտակներն ու անոր նիգերը, սիւները եւ խարիսխները, **32** շրջակայ սրահին սիւները, անոնց խարիսխները, ցիցերն ու չուանները՝ անոնց բոլոր առարկաներով, իրենց ամբողջ ծառայութեան համեմատ. անոնց բեռներուն պաշտօնին առարկաները անուններով՝ նշանակեցէք: **33** Այս է Մերարիի որդիներուն գերդաստաններուն պաշտօնը Հանդիպումի վրանին մէջ, իրենց ամբողջ ծառայութեան համեմատ, Ահարոն քահանային որդիին՝ հթամարի ձեռքին տակ»:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐՈՒԻՆ ՄԱՐԴԱՀԱՍԱՐԸ

34 Մովսէս, Ահարոն ու համայնքին իշխանները թուարկեցին Կահաթեաններու որդիները՝ անոնց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, **35** երեսուն տարեկանէն վեր մինչեւ յիսուն տարեկան բոլոր անոնք, որ սպասարկութեան մէջ մտան՝ Հանդիպումի վրանին մէջ ծառայելու համար. **36** անոնցմէ թուարկուածները՝ իրենց գերդաստաններով՝ երկու հազար եօթը հարիւր յիսուն հոգի էին: **37** Ասոնք են

^բ Եբր.[։] պահպանութիւն

^գ Եբր.[։] պահպանութիւնը

^է Եբր.[։] պահպանութիւնը

^լ Եբր.[։] պահպանութեան

Կահապեաններու գերդաստաններէն թուարկուածները, Հանդիպումի վրանին մէջ բոլոր ծառայողները, որ Մովսէս ու Ահարոն թուարկեցին, ինչպէս Տէրը Մովսէսի Պմիջոցով հրամայեր էր:

38 Գերսոնի որդիններէն թուարկուածները՝ իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, **39** Երեսուն տարեկաննեն վեր մինչեւ յիսուն տարեկան բոլոր անոնք, որ սպասարկութեան մէջ մտան՝ Հանդիպումի վրանին մէջ ծառայելու համար, **40** **այսինքն** անոնցմէ թուարկուածները՝ իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ՝ երկու հազար վեց հարիւր երեսուն **հոգի** էին: **41** Ասոնք են Գերսոնի որդիններուն գերդաստաններէն թուարկուածները, Հանդիպումի վրանին մէջ բոլոր ծառայութիւն ընողները, որ Մովսէս ու Ահարոն թուարկեցին Տէրոց հրամանին համաձայն:

42 Մերարիի որդիններուն գերդաստաններէն թուարկուածները՝ իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, **43** Երեսուն տարեկաննեն վեր մինչեւ յիսուն տարեկան բոլոր անոնք, որ սպասարկութեան մէջ մտան՝ Հանդիպումի վրանին մէջ ծառայելու համար, **44** **այսինքն** անոնցմէ թուարկուածները՝ իրենց գերդաստաններով՝ երեք հազար երկու հարիւր **հոգի** էին: **45** Ասոնք են Մերարիի որդիններուն գերդաստաններէն թուարկուածները, որ Մովսէս ու Ահարոն թուարկեցին Տէրոց հրամանին համաձայն՝ Մովսէսի Պմիջոցով **տրուած**:

46 Ղետացիններէն բոլոր թուարկուածները՝ որ Մովսէս, Ահարոն ու Իսրայէլի իշխանները թուարկեցին իրենց գերդաստաններուն եւ նահապետութիւններուն համեմատ, **47** Երեսուն տարեկաննեն վեր մինչեւ յիսուն տարեկան բոլոր անոնք՝ որ մտան՝ Հանդիպումի վրանին մէջ պաշտօնի ծառայութիւնը ու բեռ **կրելու** ծառայութիւնը ընելու, **48** **այսինքն** անոնցմէ թուարկուածները՝ ութ հազար հինգ հարիւր ութսուն **հոգի** էին: **49** Անոնք Տէրոց հրամանին համաձայն թուարկուեցան Մովսէսի ծեռքով, իւրաքանչիւրը իր պաշտօնին համեմատ եւ իր բեռին համեմատ. այսպէս թուարկուեցան անոնք, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր:

ԱՆՄԱՔՈՒՐ ՄԱՐԴԻԿ

5

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **2** «Պատուիրէ՛ Իսրայէլի որդիններուն, որ բանակավայրէն դուրս հանեն ամէն բորոտ, ամէն ծորում ունեցող եւ Պմեռելի մը դպչելով ամէն անմաքուր եղող: **3** Արո՛ւն ալ, Է՛գն ալ դո՛րս հանեցէք. բանակավայրէն դո՛րս հանեցէք զանոնք, որպէսզի անմաքուր չընեն իրենց բանակավայրերը՝ որոնց մէջտեղը ես կը բնակիմ»: **4** Իսրայէլի որդինները այդպէս ըրին, ու բանակավայրէն դուրս հանեցին զանոնք: Ինչպէս Տէրը խօսեցաւ Մովսէսի, այնպէս ըրին Իսրայէլի որդինները:

ԱԽԱԼՆԵՐՈՒ ՀԱՏՈՒՅՈՒՆ

5 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **6** «Խօսէ՛ Իսրայէլի որդիններուն. «Երբ մարդ մը կամ կին մը Տէրոց հանդէպ ուխտազանց ըլլայ՝ մարդոց բոլոր մեղքերէն մէկը գործելով, այդ

^Պ **Երբ.**՝ ծեռքով

^Ժ **Երբ.**՝ ծեռքով

^Ա **Երբ.**՝ անձի

անձը յանցաւոր կ'ըլլայ: **7** Ան իր գործած մեղքը թող խոստովանի եւ իր յանցանքին **Վճար** լման թող հատուցանէ. ատոր վրայ մէկ հինգերորդը թող աւելցնէ ու զայն տայ անոր՝ որուն դէմ յանցաւոր եղած է: **8** Եթէ այդ **վճառ կրող** մարդը ո՛չ մէկ ազգական ունի՝ որուն հատուցանուի յանցանքին **Վճար**, թող **Տէրոց** հատուցանուի յանցանքին **Վճար**, **այսինքն՝** քահանային, քաւութեան խոյէն զատ, որով այդ **յանցաւոր մարդուն** համար քաւութիւն պիտի ըլլայ: **9** Իսրայէլի որդիներուն բոլոր սուրբ բաներէն ամէն բարձրացնելիք ընծայ՝ որ կը մատուցանեն քահանային, անո՞ր պիտի ըլլայ: **10** Իւրաքանչիւրին սուրբ բաները անո՞ր պիտի ըլլան. մարդ ի՞նչ որ տայ քահանային, անո՞ր պիտի ըլլայ□»:

ԿԱՍԿԱԾՈՏ ԱՍՈՒՄԻՆՆԵՐՈՒ ԿԻՆԵՐՈՒ ՊԱՐԱԳԱՆԵՐ

11 **Տէրը** խօսեցաւ **Մովսէսի՝ ըսելով.** **12** «Խօսէ՝ Իսրայէլի որդիներուն եւ ըսէ՝ անոնց. «Եթէ մարդու մը կինը խոտորի ու անոր հանդէպ ուխտազանց ըլլայ **13** – մէկը անոր հետ զուգաւորութեան համար պառկի, ատիկա անոր ամուսինին աշքերէն թաքնուի եւ **քանը** բածկուի, անոր պղծուած ատենը ⁴տեսնող մը չըլլայ ու կինը չբռնուի –, **14** եւ **ամուսինին** վրայ նախանձախնդրութեան ոգի գալով՝ իր կնոջ պղծուելուն համար նախանձախնդիր ըլլայ, կամ եթէ **ամուսինին** վրայ նախանձախնդրութեան ոգի գայ ու իր կնոջ համար նախանձախնդիր ըլլայ՝ **թէեւ** ան պղծուած չըլլայ, **15** **այդ** մարդը իր կինը քահանային թող բերէ եւ անոր իբր մատաղ՝ գարիի ալիւրէն արդուի մը մէկ տասներորդ **մասը** բերէ: Իւղ թող չթափէ անոր վրայ, ո՛չ ալ կնդրուկ դնէ վրան, որովհետեւ նախանձախնդրութեան ընծայ մըն է ան, յիշատակի ընծայ՝ որ անօրէնութիւնը կը յիշեցնէ: **16** Քահանան կինը թող մօտեցնէ ու **Տէրոց** առջեւ կայնեցնէ: **17** Քահանան Դինցիէ անօրով սուրբ ջուր թող առնէ, եւ քահանան խորանին յատակը եղող հողէն թող առնէ ու ջուրին մէջ դնէ: **18** Քահանան կինը **Տէրոց** առջեւ թող կայնեցնէ, կնոջ գլուխը բանայ եւ յիշատակի ընծան, այսինքն նախանձախնդրութեան ընծան, անոր ափերուն վրայ դնէ. իսկ անէծքի լեղի ջուրը՝ քահանան իր ձեռքը թող ունենայ: **19** Քահանան թող երդում ընել տայ անոր եւ ըսէ կնոջ. «Եթէ մարդ մը քեզի հետ չպառկեցաւ, ու խոտորելով չպղծուեցար՝ ամուսինէդ զատ **ուրիշի մը հետ ըլլալով,** այս անէծքի լեղի ջուրէն անպատի՛ժ եղիր: **20** Բայց եթէ խոտորելով պղծուեցար՝ ամուսինէդ զատ **ուրիշի մը հետ ըլլալով,** եւ ամուսինէդ զատ ուրիշ մարդ մը քեզի հետ պառկեցաւ, **21** (քահանան թող անէծքի երդում ընել տայ կնոջ ու քահանան թող ըսէ կնոջ.) **Տէրը** քեզ անէծքի եւ երդումի **օրինակ** թող ընէ քու ժողովուրդիդ մէջ, երբ **Տէրը** քու զիստդ ⁵բորբոսեցնէ ու քու փորդ ուռեցնէ. **22** այս անէծքի ջուրը քու որովայնիդ մէջ թող երթայ, որպէսզի փորդ ուռեցնէ ու զիստդ բորբոսեցնէ»: Եւ կինը թող ըսէ. «Ամէն, ամէն»: **23** Քահանան այս անէծքները գիրքի մը մէջ թող գրէ ու **այդ** լեղի ջուրով թող ջնջէ: **24** Յետոյ անէծքի լեղի ջուրը թող խմցնէ **այդ** կնոջ. անէծքի ջուրը անոր ներսը պիտի մտնէ ու լեղի **ըլլայ:** **25** Քահանան կնոջ ձեռքէն նախանձախնդրութեան ընծան թող առնէ, **Տէրոց** առջեւ ընծան երերցնէ եւ զայն զոհասեղանին վրայ մատուցանէ: **26** Քահանան ընծայէն բուռ մը թող առնէ՝ յիշատակի համար, ու զայն զոհասեղանին վրայ այրէ. յետոյ **այդ** ջուրը կնոջ թող խմցնէ: **27** Ջուրը անոր խմցնելէն ետք, եթէ ան

¹ **Եբր.**՝ թաքնուելով ծածկուի

² **Եբր.**՝ անոր դէմ վկայ

³ **Այսինքն՝** թրծուած կաւէ

⁴ **Եբր.**՝ իյնալ տայ

պղծուած է՝ իր ամուսինին հանդէաւ ուխտագանց ըլլալով, անէծքի ջուրը պիտի մտնէ անոր ներսը **ու լեղի ըլլայ.** անոր փորը պիտի ուռի եւ անոր զիստը գրորբոսի, ու կինը իր ժողովուրդին մէջ անէծքի օրինակ պիտի ըլլայ: **28** Իսկ եթէ կինը պղծուած չըլլալով մաքուր է, անպատիժ պիտի ըլլայ եւ պիտի սերնդագործէ□: **29** Այս է նախանձախնդրութեան օրէնքը, երբ կին մը խոտորելով պղծուի՝ իր ամուսինէն զատ ուրիշի մը հետ ըլլալով. **30** Կամ երբ մարդու մը վրայ նախանձախնդրութեան ոգի գայ եւ իր կնոց համար նախանձախնդիր ըլլայ, **Տէրոց առջեւ թող կայնեցնէ կինը ու քահանան** անոր վրայ գործադրէ այս ամբողջ օրէնքը: **31** Մարդը անօրէնութենէ անպարտ պիտի ըլլայ, բայց այդ կինը իր անօրէնութիւնը պիտի կրէ»:

ՈՒԽՏԱՀՈՐՆԵՐՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

6

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **2** «Խօսէ՛ հսրայէլի որդիներուն եւ ըսէ՛ անոնց. “Եթէ մարդ մը կամ կին մը ինքզինք զատորոշէ ու **Տէրոց նուիրաբերուելու** համար բուխտաւորի ուխտ ընէ, **3** գինիէ եւ օղիէ թող անջատուի, գինիի քացախ կամ օղիի քացախ թող չխմէ, խաղողի որեւէ օշարակ թող չխմէ, ու խաղող կամ չամիչ թող չուտէ: **4** Իր նուիրաբերումի բոլոր օրերը՝ գորթատունկէն եղած ո՛չ մէկ բան թող ուտէ, կուտերէն մինչեւ կեղեւը: **5** Իր նուիրաբերումի ուխտին բոլոր օրերը՝ իր գլուխին վրայ ածելի թող չանցնի. ինք սուրբ թող ըլլայ **եւ** իր գլուխին մազերուն գանգուրները թողու որ աճին՝ մինչեւ որ իր **Տէրոց նուիրաբերումին** օրերը լրանան: **6** Իր **Տէրոց նուիրաբերումին** բոլոր օրերը՝ ո՛չ մէկ մեռած նմարմինի թող մօտենայ. **7** Իր հօր համար կամ մօր համար, իր եղբօր համար կամ քրոջ համար ինքզինք թող անմաքուր չընէ՛ երբ անոնք մեռնին, քանի որ իր **Աստուծոյն** բուխտը իր գլուխին վրայ է: **8** Իր նուիրաբերումին բոլոր օրերը՝ ինք սուրբ է **Տէրոց:** **9** Եթէ իր քով յանկարծ մարդ մը մեռնի եւ իր նուիրաբերուած գլուխը պղծուի, գլուխը թող ածիլէ իր մաքրուելու օրը. Եօթներորդ օրը թող ածիլէ զայն, **10** եւ ութերորդ օրը երկու տատրակ կամ աղաւնիի երկու ծագ թող բերէ քահանային՝ Հանդիպումի վրանին մուտքը: **11** Քահանան մէկը իբր մեղքի պատարագ ու միւսը իբր ողջակէզ թող ընծայէ, եւ թող քատութիւն ընէ անոր՝ քանի որ մեղանչած էր գմեռելին պատճառով: Նոյն օրը ան իր գլուխը թող սրբացնէ, **12** իր նուիրաբերումին օրերը **դարձեալ** թող նուիրաբերէ **Տէրոց** ու յանցանքի պատարագի համար մէկ տարեկան գառ մը բերէ. նախկին օրերը պիտի **չ**շհամրուին, որովհետեւ իր նուիրաբերումը պղծուեցաւ□:

^գ **Եբր.**՝ իյնայ

^ա **Եբր.**՝ անջատուելու

^բ **Եբր.**՝ անջատուածի

^գ **Եբր.**՝ գինիի որթատունկէն

^դ **Եբր.**՝ անձի

^ե **Եբր.**՝ անջատումը, **կամ** պսակը

^գ **Եբր.**՝ անձին

^է **Եբր.**՝ իյնան

13 Ահանասիկ ուխտաւորին օրէնքը. երբ իր նուիրաբերումին օրերը լրանան, ան Հանդիպումի վրանին մուտքը թող բերուի **14** եւ իր մատաղը Տէրոց թող մատուցանէ... մէկ տարեկան անարատ արու գառ մը՝ ողջակէզի համար, մէկ տարեկան անարատ **Եգ** գառնուկ մը՝ մեղքի պատարագի համար, անարատ խոյ մը՝ խաղաղութեան **զոհի** համար, **15** ու սակառ մը բաղարց, կարկանդակներ՝ իւղով շաղուած ւնաշինէ, անխմոր լաւաշներ՝ իւղով օծուած, եւ անոնց **հացի** ընծան ու թափելիք նուէրը: **16** Քահանան **զանոնք** մօտեցնելով Տէրոց առցեւ՝ անոր մեղքի պատարագը եւ անոր ողջակէզը թող ընծայէ: **17** Խոյը իբր խաղաղութեան զոհ թող ընծայէ Տէրոց՝ բաղարցին սակառով. քահանան անոր **հացի** ընծան ու թափելիք նուէրը թող ընծայէ: **18** Ուխտաւորը իր նուիրաբերուած գլուխը թող ածիլէ՝ Հանդիպումի վրանին մուտքը, իր նուիրաբերուած գլուխին մազը թող առնէ եւ խաղաղութեան զոհին տակ եղող կրակին մէջ դնէ: **19** Քահանան խոյին եփած թելք, սակառէն անխմոր կարկանդակ մը ու լաւաշ մը թող առնէ եւ ուխտաւորին ափերուն վրայ դնէ՝ իր նուիրաբերուած մազերուն ածիլուելէն ետք, **20** ու քահանան զանոնք իբր երեցնելիք ընծայ թող մատուցանէ Տէրոց առցեւ: Ասոնք սուրբ են քահանային համար՝ երեցնելիք երբուծին ու բարձրացնելիք զիստին հետ: Յետոյ ուխտաւորը գինի թող խմէ: **21** Այս է ուխտ ըրած ուխտաւորի մը **եւ** իր նուիրաբերումին համար Տէրոց **խոստացած** իր մատաղին օրէնքը՝ իր **Կարողացածէն** զատ: Ան իր ըրած ուխտը թող կատարէ՝ իր նուիրաբերումի օրէնքին համաձայն»:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

22 Տէրը խօսեցաւ **Մովսէսի՝ ըսելով.** **23** «Խօսէ՛ Ահարոնի ու անոր որդիներուն, եւ ըսէ՛. “Սա՛պէս օրհնեցէք հսրայէլի որդիները՝ անոնց ըսելով. **24** “Տէրը օրհնէ՛ քեզ ու պահէ՛ քեզ: **25** Տէրը իր երեսը՝ պայծառացնէ՛ քու վրադ եւ ողորմի՛ քեզի: **26** Տէրը իր երեսը վերցնէ՛ քու վրադ ու խաղաղութիւն տայ քեզի”: **27** Եւ իմ անունս հսրայէլի որդիներուն վրայ պիտի դնեն, ու ես զանոնք պիտի օրհնեմ□»:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒՄ

7

Այն օրը՝ երբ **Մովսէս** խորանը ամբողջովին կանգնեցուց, զայն օծեց ու սրբացուց՝ անոր բոլոր առարկաներով, եւ զոհասեղանն ու անոր բոլոր առարկաները օծեց եւ զանոնք սրբացուց, **2** հսրայէլի իշխանները – իրենց նահապետութեան գլխաւորները, **ժողովուրդին** թուարկուելուն վրայ վերատեսուչ եղող **տոհմապետները** – **մատաղ** մատուցանեցին: **3** Տէրոց առցեւ բերին իրենց մատաղները՝ վեց ծածկուած սայլ եւ տասներկու եզ – մէկ սայլ՝ երկու իշխանի, ու մէկ եզ՝ **ամէց** մէկուն –, եւ մօտեցուցին զանոնք խորանին առցեւ: **4** Տէրը խօսեցաւ **Մովսէսի՝ ըսելով.** **5** «Ա՞ն անոնցմէ ու տո՛ր ատոնք Ղետացիներուն՝ իւրաքանչիւրին իր պաշտօնին համեմատ, որպէսզի Հանդիպումի վրանին ծառայութեան համար գործածուին»: **6** **Մովսէս** առաւ սայլերն ու եզները, եւ զանոնք Ղետացիներուն

¹ **Այսինքն՝** նուրբ ալիւրէ

² **Եբր.**՝ ձեռքը հասածէն

³ **Եբր.**՝ լուսաւորէ՛

⁴ **Եբր.**՝ տոհմերու իշխանները

տուաւ: **7** Երկու սայլ ու չորս եզ Գերսոնի որդիներուն տուաւ՝ անոնց պաշտօնին համեմատ. **8** Չորս սայլ եւ ութ եզ Մերարիի որդիներուն տուաւ, Ահարոն քահանային որդիին՝ Իթամարի ^բվերատեսչութեամբ եղող անոնց պաշտօնին համեմատ. **9** Բայց Կահարի որդիներուն չտուաւ, քանի որ անոնց ըլլալով սրբարանին ծառայութիւնը՝ իրենց ուսերով՝ պիտի կրէին:

10 Իշխանները **մատաղ** մատուցանեցին գոհասեղանին նաւակատիքին համար՝ անոր օծումին օրը. իշխանները գոհասեղանին առջեւ մատուցանեցին իրենց մատաղները: **11** Տէրը Սովորութեամբ իրենց մատաղները թող մատուցանեն՝ **ամէց** մէկ իշխան իր օրուան մէջ, գոհասեղանին նաւակատիքին համար»:

12 Առաջին օրը իր մատաղը մատուցանողն էր Յուդայի տոհմին **իշխանը**, Ամինադարի որդին՝ Նաատն: **13** Անոր մատաղն էր մէկ արծաթէ ափսէ՛ հարիւր երեսուն **սիկող** կշիռով, մէկ արծաթէ կոնք՝ Եօթանասուն սիկող – սրբարանի սիկողին համեմատ –, երկուքն ալ լեցուած **հացի** ընծային համար իւղով շաղուած նաշիհով, **14** մէկ ոսկի խնկաման՝ տասը **սիկող**, խունկով լեցուած, **15** արջառներէն մէկ զուարակ, մէկ խոյ **ու** մէկ տարեկան մէկ գառ՝ ողջակէզի համար, **16** այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագի համար, **17** եւ խաղաղութեան գոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ **եւ** հինգ հատ մէկ տարեկան գառ: Այս էր Ամինադարի որդիին՝ Նաատնի մատաղը:

18 Երկրորդ օրը մատուցանողն էր Խաքարի **որդիներուն** իշխանը, Սովորի որդին՝ Նաթանայէլ: **19** Անոր մատուցանած մատաղն էր մէկ արծաթէ ափսէ՛ հարիւր երեսուն **սիկող** կշիռով, մէկ արծաթէ կոնք՝ Եօթանասուն սիկող – սրբարանի սիկողին համեմատ –, երկուքն ալ լեցուած **հացի** ընծային համար իւղով շաղուած նաշիհով, **20** մէկ ոսկի խնկաման՝ տասը **սիկող**, խունկով լեցուած, **21** արջառներէն մէկ զուարակ, մէկ խոյ **ու** մէկ տարեկան մէկ գառ՝ ողջակէզի համար, **22** այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագի համար, **23** եւ խաղաղութեան գոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ **եւ** հինգ հատ մէկ տարեկան գառ: Այս էր Սովորի որդիին՝ Նաթանայէլի մատաղը:

24 Երրորդ օրը **մատուցանողն** էր Զաքուլոնի որդիներուն իշխանը, Քեղոնի որդին՝ Եղիաք: **25** Անոր մատաղն էր մէկ արծաթէ ափսէ՛ հարիւր երեսուն **սիկող** կշիռով, մէկ արծաթէ կոնք՝ Եօթանասուն սիկող – սրբարանի սիկողին համեմատ –, երկուքն ալ լեցուած **հացի** ընծային համար իւղով շաղուած նաշիհով, **26** մէկ ոսկի խնկաման՝ տասը **սիկող**, խունկով լեցուած, **27** արջառներէն մէկ զուարակ, մէկ խոյ **ու** մէկ տարեկան մէկ գառ՝ ողջակէզի համար, **28** այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագի համար, **29** եւ խաղաղութեան գոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ **եւ** հինգ հատ մէկ տարեկան գառ: Այս էր Քեղոնի որդիին՝ Եղիաքի մատաղը:

30 Չորրորդ օրը **մատուցանողն** էր Ռուբէնի որդիներուն իշխանը, Սեղիուրի որդին՝ Եղիսուր: **31** Անոր մատաղն էր մէկ արծաթէ ափսէ՛ հարիւր երեսուն **սիկող** կշիռով, մէկ արծաթէ կոնք՝ Եօթանասուն սիկող – սրբարանի սիկողին համեմատ –, երկուքն ալ լեցուած **հացի** ընծային համար իւղով շաղուած նաշիհով, **32** մէկ ոսկի խնկաման՝ տասը **սիկող**, խունկով լեցուած, **33** արջառներէն մէկ զուարակ, մէկ խոյ **ու** մէկ տարեկան մէկ գառ՝ ողջակէզի համար, **34** այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագի համար, **35** եւ խաղաղութեան գոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ **եւ** հինգ հատ մէկ տարեկան գառ: Այս էր Սեղիուրի որդիին՝ Եղիսուրի մատաղը:

36 Հինգերորդ օրը **մատուցանողն** էր Շմաւոնի որդիներուն իշխանը, Սուրիսադայի որդին՝ Սաղամիէլ: **37** Անոր մատաղն էր մէկ արծաթէ ափսէ՛ հարիւր երեսուն **սիկող** կշիռով, մէկ արծաթէ կոնք՝ Եօթանասուն սիկող – սրբարանի սիկողին համեմատ –, երկուքն

^բ Երք.՝ Ճեղքով

ալ լեցուած **հացի** ընծային համար իւղով շաղուած նաշիհով, **38** մէկ ոսկի խնկաման՝ տասը **սիկղ**, խունկով լեցուած, **39** արջառներէն մէկ զուարակ, մէկ խոյ **ու** մէկ տարեկան մէկ գառ՝ ողջակէզի համար, **40** այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագի համար, **41** եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ **եւ** հինգ հատ մէկ տարեկան գառ: Այս էր Սուրիսադայի որդիին՝ Սաղամիկլի մատաղը:

42 Վեցերորդ օրը **մատուցանողն** էր Գաղի որդիներուն իշխանը, Դագուէլի որդին՝ Եղիսաբի: **43** Անոր մատաղն էր մէկ արծաթէ ափսէ՝ հարիւր երեսուն **սիկղ** կշիռով, մէկ արծաթէ կոնք՝ Եօթանասուն սիկղ – սրբարանի սիկղին համեմատ –, երկուքն ալ լեցուած **հացի** ընծային համար իւղով շաղուած նաշիհով, **44** մէկ ոսկի խնկաման՝ տասը **սիկղ**, խունկով լեցուած, **45** արջառներէն մէկ զուարակ, մէկ խոյ **ու** մէկ տարեկան մէկ գառ՝ ողջակէզի համար, **46** այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագի համար, **47** եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ **եւ** հինգ հատ մէկ տարեկան գառ: Այս էր Դագուէլի որդիին՝ Եղիսաբի մատաղը:

48 Եօթներորդ օրը **մատուցանողն** էր Եփրեմի որդիներուն իշխանը, Ամիուտի որդին՝ Եղիսամա: **49** Անոր մատաղն էր մէկ արծաթէ ափսէ՝ հարիւր երեսուն **սիկղ** կշիռով, մէկ արծաթէ կոնք՝ Եօթանասուն սիկղ – սրբարանի սիկղին համեմատ –, երկուքն ալ լեցուած **հացի** ընծային համար իւղով շաղուած նաշիհով, **50** մէկ ոսկի խնկաման՝ տասը **սիկղ**, խունկով լեցուած, **51** արջառներէն մէկ զուարակ, մէկ խոյ **ու** մէկ տարեկան մէկ գառ՝ ողջակէզի համար, **52** այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագի համար, **53** եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ **եւ** հինգ հատ մէկ տարեկան գառ: Այս էր Ամիուտի որդիին՝ Եղիսամայի մատաղը:

54 Ութերորդ օրը **մատուցանողն** էր Սանասէի որդիներուն իշխանը, Փադասուրի որդին՝ Գամաղիէլ: **55** Անոր մատաղն էր մէկ արծաթէ ափսէ՝ հարիւր երեսուն **սիկղ** կշիռով, մէկ արծաթէ կոնք՝ Եօթանասուն սիկղ – սրբարանի սիկղին համեմատ –, երկուքն ալ լեցուած **հացի** ընծային համար իւղով շաղուած նաշիհով, **56** մէկ ոսկի խնկաման՝ տասը **սիկղ**, խունկով լեցուած, **57** արջառներէն մէկ զուարակ, մէկ խոյ **ու** մէկ տարեկան մէկ գառ՝ ողջակէզի համար, **58** այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագի համար, **59** եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ **եւ** հինգ հատ մէկ տարեկան գառ: Այս էր Փադասուրի որդիին՝ Գամաղիէլի մատաղը:

60 Իններորդ օրը **մատուցանողն** էր Բեճամամինի որդիներուն իշխանը, Գեղէոնիի որդին՝ Աբիդան: **61** Անոր մատաղն էր մէկ արծաթէ ափսէ՝ հարիւր երեսուն **սիկղ** կշիռով, մէկ արծաթէ կոնք՝ Եօթանասուն սիկղ – սրբարանի սիկղին համեմատ –, երկուքն ալ լեցուած **հացի** ընծային համար իւղով շաղուած նաշիհով, **62** մէկ ոսկի խնկաման՝ տասը **սիկղ**, խունկով լեցուած, **63** արջառներէն մէկ զուարակ, մէկ խոյ **ու** մէկ տարեկան մէկ գառ՝ ողջակէզի համար, **64** այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագի համար, **65** եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ **եւ** հինգ հատ մէկ տարեկան գառ: Այս էր Գեղէոնիի որդիին՝ Աբիդանի մատաղը:

66 Տասներորդ օրը **մատուցանողն** էր Դանի որդիներուն իշխանը, Ամիսադայի որդին՝ Աքիեզեր: **67** Անոր մատաղն էր մէկ արծաթէ ափսէ՝ հարիւր երեսուն **սիկղ** կշիռով, մէկ արծաթէ կոնք՝ Եօթանասուն սիկղ – սրբարանի սիկղին համեմատ –, երկուքն ալ լեցուած **հացի** ընծային համար իւղով շաղուած նաշիհով, **68** մէկ ոսկի խնկաման՝ տասը **սիկղ**, խունկով լեցուած, **69** արջառներէն մէկ զուարակ, մէկ խոյ **ու** մէկ տարեկան մէկ գառ՝ ողջակէզի համար, **70** այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագի համար, **71** եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ **եւ** հինգ հատ մէկ տարեկան գառ: Այս էր Ամիսադայի որդիին՝ Աքիեզերի մատաղը:

72 Տասնմէկերորդ օրը **մատուցանողն** էր Ասերի որդիներուն իշխանը, Եքրանի որդին՝ Փագիէլ: **73** Անոր մատաղն էր մէկ արծաթէ ափսէ՝ հարիւր երեսուն **սիկղ** կշիռով, մէկ

արծաթէ կոնք՝ եօթանասուն սիկղ – սրբարանի սիկղին համեմատ –, երկուքն ալ լեցուած հացի ընծային համար իւղով շաղուած նաշիհով, 74 մէկ ոսկի խնկաման՝ տասը սիկղ, խունկով լեցուած, 75 արջառներէն մէկ գուարակ, մէկ խոյ ու մէկ տարեկան մէկ գառ՝ ողջակէզի համար, 76 այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագի համար, 77 եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ եւ հինգ հատ մէկ տարեկան գառ: Այս էր Եքրանի որդիին՝ Փագիէլի մատաղը:

78 Տասներկրորդ օրը **մատուցանողն** էր Նեփիթաղիմի որդիներուն իշխանը, Ենանի որդին՝ Աքիրէ: 79 Անոր մատաղն էր մէկ արծաթէ ափսէ՛ հարիւր երեսուն սիկղ կշիռով, մէկ արծաթէ կոնք՝ եօթանասուն սիկղ – սրբարանի սիկղին համեմատ –, երկուքն ալ լեցուած հացի ընծային համար իւղով շաղուած նաշիհով, 80 մէկ ոսկի խնկաման՝ տասը սիկղ, խունկով լեցուած, 81 արջառներէն մէկ գուարակ, մէկ խոյ ու մէկ տարեկան մէկ գառ՝ ողջակէզի համար, 82 այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագի համար, 83 եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ եւ հինգ հատ մէկ տարեկան գառ: Այս էր Ենանի որդիին՝ Աքիրէի մատաղը:

84 Ասո՞նք էին զոհասեղանին նաւակատիքին համար Խորայէլի իշխաններուն **մատուցանած մատաղները**՝ անոր օծուած օրը – տասներկու արծաթէ ափսէ՛, տասներկու արծաթէ կոնք ու տասներկու ոսկի խնկաման: 85 Ամէն մէկ արծաթէ ափսէ՛ հարիւր երեսուն սիկղ կը կշռէր, եւ ամէն մէկ կոնք՝ եօթանասուն սիկղ. այս անօթներուն ամբողջ արծաթը երկու հազար չորս հարիւր սիկղ կը կշռէր՝ սրբարանի սիկղին համեմատ: 86 Տասներկու ոսկի խնկամանները խունկով լեցուած էին. ամէն մէկ խնկաման տասը սիկղ կը կշռէր՝ սրբարանի սիկղին համեմատ. խնկամաններուն ամբողջ ոսկին հարիւր քսան սիկղ կը կշռէր: 87 Ողջակէզի համար բոլոր արջառները տասներկու գուարակ էին, խոյերը՝ տասներկու, մէկ տարեկան գառները՝ տասներկու, իրենց հացի ընծայով, իսկ մեղքի պատարագի համար՝ այծերէն տասներկու նոխազ: 88 Խաղաղութեան զոհի համար բոլոր արջառները քսանչորս գուարակ էին, խոյերը՝ վաթսուն, նոխազները՝ վաթսուն, մէկ տարեկան գառները՝ վաթսուն: Ասո՞նք էին զոհասեղանին նաւակատիքին **մատաղները**՝ անոր օծուելէն ետք:

89 Երբ Մովսէս Հանդիպումի վրանը մտնէր՝ ^ԳՏէրոց հետ խօսելու, իրեն հետ խօսողին ձայնը կը լսէր Վկայութեան տապանակին վրայ եղող Քատութեան վրայէն, երկու քերովքէներուն մէջտեղէն, եւ ինք ^ԴՏէրոց հետ կը խօսէր:

ԼԱՊՏԵՐՆԵՐՈՒՆ ՁԵՏԵՂՈՒՄԸ

8

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. 2 «Խօսէ՛ Ահարոնի ու ըսէ՛ անոր. “Երբ ճրագները վառես, եօթը ճրագները աշտանակին առջե՛լը թող լուսաւորե՛ն»: 3 Ահարոն այնպէս ըրաւ. անոր ճրագները աշտանակին առջելի կողմը վառեց, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր: 4 Աշտանակը սա՛պէս շինուած էր. ^Վկուածոյ ոսկիէ էր, իր բունէն մինչեւ իր ծաղիկները՝ կուածոյ էր: Տէրոց Մովսէսի ցոյց տուած ^Պկերպարին համաձայն շինեց

^Գ Եբր.՝ Անոր

^Դ Եբր.՝ Անոր

^Վ Կամ ճախարակեայ

^Պ Եբր.՝ Երեւոյթին

աշտանակը:

ՂԵՒՏԱՅԻՆԵՐՈՒՆ ՄՐԱՎՈՐԾՈՒՄԸ ԵՒ ՆՈՒՐԱՎՈՐԾՈՒՄԸ

5 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **6** «Իսրայէլի որդիներուն մէջէն ա՛ն Ղեւտացիները ու մաքրէ՛ զանոնք: **7** Զանոնք մաքրելու համար սա՛ ըրէ անոնց.— ^գմաքրութեա՛ն ջուր սրսկէ անոնց վրայ, եւ անոնք իրենց ամբողջ մարմինը թող ածիլեն, իրենց հագուստները լուան ու մաքրուին: **8** Յետոյ արջառներէն զուարակ մը թող առնեն, եւ անոր հացի ընծային համար՝ իւղով շաղուած նաշին. դուն ալ արջառներէն ուրի՛շ զուարակ մը առ՝ մեղքի պատարագի համար: **9** Ղեւտացիները Հանդիպումի վրանին առջեւ մօտեցո՛ր, ու իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը համախմբէ՛: **10** Ղեւտացիները Տէրո՛շ առջեւ մօտեցուր, եւ իսրայէլի որդիները իրենց ձեռքերը թող դնեն Ղեւտացիներուն վրայ: **11** իսկ Ահարոն Ղեւտացիները իբր երերցնելիք ընծայ թող ^հմատուցանէ՛ Տէրոց առջեւ՝ իսրայէլի որդիներուն կողմէն, որպէսզի անոնք Տէրոց պաշտամունքը կատարեն: **12** Ղեւտացիները իրենց ձեռքերը թող դնեն զուարակներուն գլուխին վրայ, ու Ղեւտացիներուն քաւութիւն ընելու համար՝ մէկ զուարակը մատուցանէ՛ Տէրոց իբր մեղքի պատարագ, իսկ միւսը՝ իբր ողջակէզ: **13** Ղեւտացիները կայնեցո՛ր Ահարոնի եւ անոր որդիներուն առջեւ, ու զանոնք մատուցանէ՛ Տէրոց իբր երերցնելիք ընծայ: **14** Այսպէս զատէ՛ Ղեւտացիները իսրայէլի որդիներուն մէջէն, որպէսզի Ղեւտացիները իմս ըլլան: **15** Ատկէ՛ ետք Ղեւտացիները թող մտնեն՝ Հանդիպումի վրանին ծառայութիւնը ընելու: Այսպէս մաքրէ՛ զանոնք եւ մատուցանէ՛ զանոնք իբր երերցնելիք ընծայ, **16** քանի որ անոնք ամբողջութեամբ ինծի տրուած են իսրայէլի որդիներուն մէջէն: Ինծի առի զանոնք՝ իսրայէլի որդիներուն մէջ արգանդ բացող բոլոր անդրանիկներուն տեղը, **17** որովհետեւ իսրայէլի որդիներուն բոլոր անդրանիկները, թէ՛ մարդու եւ թէ՛ անասունի, իմս են. Եգիպտոսի երկրին մէջ բոլոր անդրանիկները զարկած օրս՝ զանոնք սրբացուցի ինծի համար: **18** Իսրայէլի որդիներուն բոլոր անդրանիկներուն փոխարէն Ղեւտացիները առի, **19** ու իսրայէլի որդիներուն մէջէն Ղեւտացիները ^եամբողջութեամբ տուի Ահարոնի եւ անոր որդիներուն, որպէսզի Հանդիպումի վրանին մէջ իսրայէլի որդիներուն ծառայութիւնը ընեն ու իսրայէլի որդիներուն համար քաւութիւն ընեն, որպէսզի իսրայէլի որդիներուն վրայ հարուած չգայ՝ երբ իսրայէլի որդիները սրբարանին մօտենան»:

20 Մովսէս, Ահարոն եւ իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը Ղեւտացիներուն ըրին Տէրոց Մովսէսի բոլոր պատուիրածները՝ Ղեւտացիներուն մասին. Իսրայէլի որդիները այնպէս ըրին անոնց: **21** Ղեւտացիները ^գմաքրուեցան ու իրենց հագուստները լուացին. Ահարոն ալ զանոնք իբր երերցնելիք ընծայ մատուցանեց Տէրոց առջեւ: Ահարոն անոնց համար քաւութիւն ըրաւ՝ որպէսզի զանոնք մաքրէ, **22** եւ ատկէ ետք Ղեւտացիները Հանդիպումի վրանը մտան՝ իրենց ծառայութիւնը ընելու Ահարոնի ու անոր որդիներուն առջեւ: Ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր Ղեւտացիներուն մասին՝ այնպէս ըրին անոնց:

23 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **24** «Ահա՛ւասիկ Ղեւտացիներուն կանոնը—

^գ Եբր.՝ մեղքի պատարագի

^հ Եբր.՝ երերցնէ

^ի Եբր.՝ իբր նուէր

^ք Եբր.՝ մեղքէ մաքրուեցան

քսանհինգ տարեկանէն վեր եղողները սպասարկութեան մէջ թող մտնեն՝ Հանդիպումի վրանին մէջ ծառայելու համար, **25** իսկ յիսուն տարեկան ըլլալէ ետք սպասարկութենէն թող դադրին, եւ ա՛ թող չծառայեն: **26** իրենց եղբայրներուն հետ թող պաշտօն կատարեն Հանդիպումի վրանին մէջ՝ ^էպաշտամունքին համար, բայց թող ծառայութիւն չընեն: Այսպէս ըրէ Ղետացիներուն՝ իրենց ^Պպաշտօնին համար»:

ԵՐԿՐՈՐԴ ԶԱՏԻԿԸ

9

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ Սինայի անապատին մէջ, անոնց Եգիպտոսի երկրէն ելլելուն երկրորդ տարուան առաջին ամիսը, ըսելով. **2** «Իսրայէլի որդիները Զատիկը թող կատարեն իր սահմանուած ատենին: **3** Այս ամսուան տասնչորրորդ օրը՝ իրիկուա՛ն դէմ կատարեցէք զայն, իր սահմանուած ատենին. անոր բոլոր կանոններուն եւ բոլոր սովորութիւններուն համաձայն կատարեցէք զայն»: **4** Մովսէս ըսաւ իսրայէլի որդիներուն՝ որ Զատիկը կատարեն, **5** եւ անոնք առաջին ամսուան տասնչորրորդ օրը՝ իրիկուան դէմ Զատիկը կատարեցին, Սինայի անապատին մէջ: Իսրայէլի որդիները այնպէս ըրին, **Տ**էրոց Մովսէսի բոլոր պատուիրածններուն համաձայն:

6 Սակայն ոմանք կային, որ մարդու մեռելի **դպած ըլլալով** անմաքուր էին, եւ չէին կրնար այդ օրը Զատիկը կատարել: Մովսէսի ու Ահարոնի ներկայացան այդ օրը, **7** եւ այն մարդիկը ըսին անոր. «Մենք մարդու մեռելի **դպած ըլլալով** անմաքուր ենք. ինչո՞ւ իսրայէլի որդիներուն մէջ **Տ**էրոց մատաղը իր սահմանուած ատենին մատուցանելէն արգիլուինք»: **8** Մովսէս անոնց ըսաւ. «Կեցէ՛ք, ^Պհասկնամ թէ **Տ**էրը ի՞նչ կը պատուիրէ ձեր մասին»:

9 **Տ**էրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **10** «Խօսէ՛ իսրայէլի որդիներուն եւ ըսէ՛. “Եթէ ծեզմէ կամ ծեր սերունդէն մէկը մեռելի մը **դպանալով** անմաքուր ըլլայ կամ հեռաւոր ճամբորդութեան մէջ ըլլայ, անիկա՛ ալ Զատիկը թող կատարէ **Տ**էրոց[□]: **11** Երկրորդ ամսուան տասնչորրորդ օրը՝ իրիկուա՛ն դէմ թող կատարեն զայն. բաղարջով ու լեղի խոտերով թող ուտեն զայն: **12** Անկէ մինչեւ առտու ոչինչ թող մնայ, եւ անկէ ո՛չ մէկ ոսկոր թող կոտրեն. Զատիկին բոլոր կանոններուն համաձայն թող կատարեն զայն: **13** Բայց եթէ մաքուր եղող ու ճամբորդութեան մէջ չեղող մարդը Զատիկը կատարելէն հրաժարի, այդ անձը իր ժողովուրդին մէջէն պիտի բնացնջուի, որովհետեւ **Տ**էրոց մատաղը իր սահմանուած ատենին չմատուցանեց. այդ մարդը իր մեղքը պիտի կրէ: **14** Եթէ գաղթական մը պանդխտանայ ձեր մէջ եւ ուզէ Զատիկը կատարել **Տ**էրոց, Զատիկին կանոնին ու անոր սովորութեան համաձայն թող կատարէ. թէ՛ գաղթականին եւ թէ բնիկին համար մէկ կանոն պիտի ունենաք»:

ԿՐԱԿԵ ԱՄՊԸ

(Ելք. 40. 34-38)

15 Այն օրը՝ երբ խորանը կանգնուեցաւ, ամպը պատեց խորանը, **այսինքն՝** Վկայութեան վրանը. իրիկունը խորանին վրայ էր՝ կրակի երեւոյթով, մինչեւ առտու: **16** Ծարունակ

^է **Երբ.**՝ պահպանութիւնը պահելու

^ը **Երբ.**՝ պահպանութեան

^ա **Երբ.**՝ մտիկ ընեմ

այդպէս էր. **ցերեկը** ամպը կը ծածկէր զայն, իսկ գիշերը՝ կրակի երեւոյթը: **17** Երբ ամպը վրանէն բարձրանար, անկէ ետք հսրայէլի որդիները կը մեկնէին, եւ այն տեղը ուր ամպը կենար՝ հո՛ն հսրայէլի որդիները կը բանակէին: **18** Տէրո՞ց հրամանով հսրայէլի որդիները կը մեկնէին, ու **Տէրո՞ց** հրամանով կը բանակէին. որքան ժամանակ որ ամպը խորանին վրայ կենար, անոնք կը բանակէին: **19** Երբ ամպը երկար ժամանակ խորանին վրայ յամենար, հսրայէլի որդիները **Տէրոց պաշտօնը** կը կատարէին՝ եւ չէին մեկներ: **20** Իսկ երբ ամպը խորանին վրայ գքից օր կենար, **Տէրո՞ց** հրամանին համաձայն կը բանակէին, ու **Տէրո՞ց** հրամանին համաձայն կը մեկնէին: **21** Եթէ ամպը իրիկուլնէ մինչեւ առտու ո՞մնար, առտուն ամպին բարձրացած ատենը կը մեկնէին. ցերեկ ըլլար թէ գիշեր, ամպին բարձրացած ատենը կը մեկնէին: **22** Եթէ ամպը երկու օր, կամ մէկ ամիս, կամ մէկ տարի խորանին վրայ կենալով յամենար, հսրայէլի որդիները կը բանակէին եւ չէին մեկներ. բայց երբ բարձրանար, կը մեկնէին: **23** **Տէրո՞ց** հրամանին համաձայն կը բանակէին, ու **Տէրո՞ց** հրամանին համաձայն կը մեկնէին. Մովսէսի միջոցով **տրուած** **Տէրոց** հրամանին համաձայն՝ **Տէրոց պաշտօնը** կը կատարէին»:

ԱՐԾԱԹԷ ՓՈՂԵՐԸ

10

Տէրը խօսեցաւ **Մովսէսի՝ ըսելով.** **2** «**Քեզի** արծաթէ երկո՛ւ փող շինէ. զանոնք կուածո՛յ շինէ, որպէսզի համայնքը կանչելու համար ու բանակներուն մեկնումին համար զործածես:

3 Երբ զանոնք հնչեցնեն, ամբողջ համայնքը քովդ թող հաւաքուի՝ Հանդիպումի վրանին մուտքը:

4 Եթէ **փողին** մէկը հնչեցնեն, իշխանները, հսրայէլի հազարապետները, քովդ թող հաւաքուին:

5 Երբ մեծագոչ հնչեցնէք, արեւելեան կողմը իշեւանող բանակները թող մեկնին:

6 Երբ երկրորդ անգամ մեծագոչ հնչեցնէք, հարաւային կողմը իշեւանող բանակները թող մեկնին: Անոնց մեկնումին համար մեծագոչ թող հնչեցնեն:

7 Երբ համախմբումը բհաւաքէք, **փողը** հնչեցուցէք, բայց մի՛ գոռացնէք:

8 Ահարոնի որդիները՝ քահանաները թող հնչեցնեն փողը, եւ ասիկա ծեզի յակիտենական կանոն թող ըլլայ ծեր սերունդներուն մէջ:

9 Եթէ ծեր երկրին մէջ պատերազմելու երթաք ծեզ ճնշող հակառակորդին դէմ, գոռացուցէք փողերը, որպէսզի յիշուիք **Տէրոց՝ ծեր** Աստուծոյն առջեւ, ու ծեր թշնամիներէն ազատիք:

10 Նաեւ ծեր ուրախութեան օրերը, ծեր գհանդիսաւոր տօներուն» եւ ամսագուխներուն՝ հնչեցուցէք փողերը ծեր ողջակէզներուն ու խաղաղութեան գոհերուն վրայ, որպէսզի ծեզի իբր յիշատակ ըլլան ծեր Աստուծոյն

^բ **Եբր.**՝ պահպանութիւնը կը պահէին

^գ **Եբր.**՝ **փոքր** թիւով

^դ **Եբր.**՝ ըլլար

^ե **Եբր.**՝ ծեռքով

^գ **Եբր.**՝ պահպանութիւնը կը պահէին

^ա **Եբր.**՝ քեզի ըլլան

^բ **Եբր.**՝ համախմբէք

^գ **Եբր.**՝ սահմանուած ատեններուն

առջեւ: Ե՞ս եմ Տէրը՝ ձեր Աստուածը»:

ԻՄՐԱՅԵԼԱՅԻՆԵՐԸ ԿԸ ՄԵԿՆԻՆ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԸՆ

11 Երկրորդ տարին, երկրորդ ամսուան քսաներորդ **օրը**, ամպը բարձրացաւ Վկայութեան խորանին վրայէն: **12** Ուստի Խորայէլի որդիները՝ իրենց մեկնումին **կարգով**՝ Սինայի անապատէն մեկնեցան, եւ ամպը Փառանի անապատին մէջ կեցաւ: **13** Առաջին անգամ կը մեկնէին՝ Մովսէսի Դմիջոցով **տրուած** Տէրոց հրամանին համաձայն: **14** Առաջ Յուղայի որդիներուն բանակին դրօշը մեկնեցաւ՝ իրենց զօրաբաժիններուն կարգով. Ամինադարի որդին՝ Նաասոն անոր զօրաբաժինին վրայ էր, **15** Սովորի որդին Նաթանայէլ՝ Խաքարի որդիներուն տոհմին զօրաբաժինին վրայ, **16** ու Թեղոնի որդին Եղիաբ՝ Զաքուղոնի որդիներուն տոհմին զօրաբաժինին վրայ: **17** Խորանը քակեցին, եւ Գերսոնի որդիներն ու Մերարիի որդիները մեկնեցան՝ խորանը կրելով: **18** Ոութէնի բանակին դրօշը մեկնեցաւ իր զօրաբաժիններուն կարգով. Սեղիուրի որդին՝ Եղիսուր անոր զօրքին վրայ էր, **19** Սուլիսադայի որդին Սաղամիէլ՝ Շմաւոնի որդիներուն տոհմին զօրաբաժինին վրայ, **20** եւ Դագուէլի որդին Եղիասափ՝ Գաղի որդիներուն տոհմին զօրաբաժինին վրայ: **21** Յետոյ Կահաթեանները մեկնեցան՝ սրբարանը կրելով. Խորանը կանգնեցուցին մինչեւ անոնց գալը: **22** Եփրեմի որդիներուն բանակին դրօշը մեկնեցաւ իրենց զօրաբաժիններուն կարգով. Ամիուրի որդին՝ Եղիսամա անոր զօրքին վրայ էր, **23** Փաղսասուրի որդին Գամաղիէլ՝ Մանասէի որդիներուն տոհմին զօրաբաժինին վրայ, **24** ու Գեղէոնիի որդին Արիդան՝ Բենիամինի որդիներուն տոհմին զօրաբաժինին վրայ: **25** Դանի որդիներուն բանակին դրօշը՝ իրենց զօրաբաժիններուն կարգով՝ բոլոր բանակներուն Ետեւէն մեկնեցաւ^ա. Ամիսադայի որդին՝ Աքիեզեր անոր զօրքին վրայ էր, **26** Եքրանի որդին Փագիէլ՝ Ասերի որդիներուն տոհմին զօրաբաժինին վրայ, **27** ու Ենանի որդին Աքիրէ՝ Նեփրաղիմի որդիներուն տոհմին զօրաբաժինին վրայ: **28** Այս էր Խորայէլի որդիներուն մեկնումին **կարգը**՝ իրենց զօրաբաժիններուն համեմատ, երբ մեկնէին:

29 Մովսէս Յոբաբի ըսաւ, **այսինքն** իր աներոց՝ Մադիանացի Ռագուէլի որդիին. «Մենք կը մեկնինք այն տեղը՝ որուն համար Տէրը ըսաւ. «Զեզի՝ պիտի տամ զայն□: Եկուր մեզի հետ. բարիք պիտի ընենք քեզի, որովհետեւ Տէրը Խորայէլի Դարիք խոստացաւ”»: **30** Աև ալ իրեն ըսաւ. «Զեմ Երթար, այլ իմ Երկիրս եւ իմ ազգականներուն պիտի Երթամ»: **31** Ինք ըսաւ. «Կ’աղերսեմ, մի՛ թողուր մեզ, քանի որ անապատին մէջ մեր բանակելու տեղերը գիտես. մեզի Հառաջնորդ Եղիր: **32** Եթէ մեզի հետ գաս, ի՞նչ բարիք որ Տէրը մեզի ընէ, մենք ալ քեզի նոյնը պիտի ընենք»:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ՃԱՍԲՈՐԴԵ

33 Անոնք Տէրոց լեռնէն մեկնեցան՝ Երեք օրուան ճամբորդութեան համար. Տէրոց ուստին տապանակը անոնց առջեւէն գնաց՝ Երեք օրուան ճամբայ, անոնց հանգստավայր մը հետախուզելու համար: **34** Երբ բանակավայրէն կը մեկնէին, Տէրոց ամպը ցերեկը

^ա **Եբր.**՝ ձեռքով

^բ **Կամ**՝ վերջապահ Եղաւ

^գ **Եբր.**՝ մասին բարիք խօսեցաւ

^դ **Եբր.**՝ աչք

անոնց վրայ էր:

35 Երբ տապանակը մեկնէր՝ Մովսէս կ'ըսէր. «Կանգնէ՛, ո'վ Տէր, եւ քու թշնամիներդ թող ցրուին ու քեզ ատողները առցեւէի փախչին»: 36 Իսկ երբ ան հանգչէր՝ ինք կ'ըսէր. «Վերադարձի՛ր, ո'վ Տէր, իսրայէլի հազարաւոր բիլրաւորներուն»:

ՏԱԲԵՐԱ ԿՈՉՈՒԱԾ ՏԵՂԸ

11

Ժողովուրդը հառաջեց, ինչ որ Տէրոց անհաճոյ եղաւ: Տէրը լսեց եւ իր բարկութիւնը բորբոքեցաւ. Տէրոց կրակը անոնց մէջ վառուեցաւ, ու բանակավայրին ծայրերը եղողները սպառեց: 2 Ուստի ժողովուրդը աղաղակեց Մովսէսի, Մովսէս աղօթեց Տէրոց, ու կրակը բմարեցաւ: 3 Եւ այդ տեղին անունը Գաբերա կոչեց, քանի որ Տէրոց կրակը անոնց մէջ վառուեր էր: 4 Անոնց մէջի խառնիճաղանճը ցանկութեան մէջ ինկաւ. Իսրայէլի որդիներն ալ Դարձեալ լացին ու ըսին. «Ո՞վ մեզի միս պիտի տայ՝ որ ուտենք: 5 Կը յիշենք Եգիպտոսի մէջ մեր ձրի կերած ձուկը, վարունգները, սեխերը, պրասները, սոխերն ու սխտորները: 6 Իսկ հիմա մեր անձը չորցաւ. մանանայէն զատ ուրիշ ոչինչ կայ մեր աչքերուն առցեւ»: 7 (Մանանան գինճի սերմի պէս էր, եւ անոր դրսերեւոյթը՝ քարխունկի դրսերեւոյթին պէս: 8 Ժողովուրդը կը պտըտէր ու կը ժողվէր զայց. ապա ջաղացքի մէջ կ'աղային կամ անկանի մէջ կը ծնծէին, պտուկներու մէջ կ'եփէին եւ անկէ շօթեր կը շինէին. անոր համը իւղոտ գաթայի համին պէս էր: 9 Երբ գիշերը բանակավայրին վրայ ցող կ'իջնէր, մանանան ալ անոր վրայ կ'իջնէր:)

ՄՈՎՍԷՍ ԿՇՆՏՐԷ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

10 Մովսէս լսեց թէ ժողովուրդը իր գերդաստաններով կու լայ, իւրաքանչիւրը իր վրանին մուտքը. Տէրոց բարկութիւնը չափազանց բորբոքեցաւ, ու Մովսէսի ալ անհաճոյ եղաւ այս բանը: 11 Մովսէս Տէրոց ըսաւ. «Ինչո՞ւ քու ծառայիդ չարիք ըրիր, եւ ինչո՞ւ քու էառցեւի շնորհք չգտայ՝ որ այս ամբողջ ժողովուրդին բեռը իմ վրաս կը դնես: 12 Միթէ ե՞ս յղացեր եմ այս ամբողջ ժողովուրդը, կամ ե՞ս ծնաներ եմ ասոնք, որ ինծի կ'ըսես. “Կրէ՛ զանոնք գիրկիդ մէջ, ինչպէս դայեակ մը ծծկերը կը կրէ, մինչեւ այն երկիրը՝ որ երդումով խոստացար անոնց հայրերուն: 13 Ես ուրկէ՞ միս ունենամ՝ որ այս ամբողջ ժողովուրդին տամ, քանի որ իմ շուրջս կու լան ու կ'ըսեն. “Մի՛ս տուր մեզի՝ որ ուտենք□:

^ա Երբ.՝ ականջներուն գէշ

^բ Երբ.՝ ընկղմեցաւ

^գ Այսինքն հրկիզութիւն

^դ Կամ՝ նստան

^ե Երբ.՝ ճգմէին

^գ Երբ.՝ աչքերուն գէշ

^է Երբ.՝ աչքերուդ

^լ Երբ.՝ հողը

14 Ես առանձին չեմ կրնար կրել այս ամբողջ ժողովուրդը, որովհետեւ ասիկա ինծի շատ ծանր է: **15** Եթէ ինծի հետ այսպէս պիտի վարուիս, կ'աղերսե՞մ, մեղոցն լր զիս՝ եթէ շնորհք գտայ քու առջեւդ, որպէսզի իմ չարիքս չտեսնեմ»: **16** Տէրը Մովսէսի ըսաւ. «Ինծի հսրայէլի երէցներէն եօթանասո՞ւն մարդ հաւաքէ, որ դուն կը ճանչնաս որպէս ժողովուրդին երէցներն ու անոր ոստիկանները, զանոնք Հանդիպումի վրա՞նը բեր, ու հոն քեզի հետ թող ներկայանան: **17** Ես հոն պիտի իշնեմ եւ խօսիմ քեզի հետ, ու քու վրադ եղող Հոգիէն պիտի առնեմ եւ անոնց վրայ պիտի դնեմ, որպէսզի ժողովուրդին բեռը կրեն քեզի հետ, ու դուն առանձին չկրես: **18** Իսկ ժողովուրդին ըսէ՛. «Վաղուան համար դուք ծեզ սրբացուցէ՛ք՝ որ միս ուտէք. արդարեւ Տէրոց բառքեւ լացիք՝ ըսելով. "Ո՞վ մեզի միս պիտի կերցնէ, որովհետեւ Եգիպտոսի մէջ լաւ էինք". ուստի Տէրը ծեզի միս պիտի տայ ու դուք պիտի ուտէք: **19** Դուք ո՛չ թէ մէկ օր կամ երկու օր պիտի ուտէք, ո՛չ հինգ օր, ո՛չ տասը օր, ո՛չ ալ քսան օր. **20** Հապա լման մէկ ամիս պիտի ուտէք՝ մինչեւ որ ան ծեր քիթէն դուրս գայ ու դուք անկէ զգուիք, որովհետեւ ծեր մէջ եղող Տէրը անարգեցիք եւ անոր առջեւ լացիք՝ ըսելով. "Ինչո՞ւ մենք Եգիպտոսէն ելանք"□»:

21 Բայց Մովսէս ըսաւ. «Այս ժողովուրդը՝ որուն մէջ կը գտնուիմ՝ վեց հարիւր հազար հետեւակ է, ու դուն ըսիր. «Ես անոնց միս պիտի տամ, որ լման մէկ ամիս ուտեն□: **22** Անոնց բաւելու համար՝ միթէ բոլոր ոչխարներն ու արջառները պիտի մորթուի՞ն. կամ ծովուն բոլոր ծուկերը պիտի հաւաքուի՞ն՝ անոնց բաւելու համար»: **23** Տէրը Մովսէսի ըսաւ. «Միթէ Տէրոց ծեռքը ծոկարացա՞ւ. հիմա պիտի տեսնես թէ քեզի ըսած խօսքս պիտի հկատարուի՝ թէ ոչ»:

24 Մովսէս դուրս ելաւ, Տէրոց խօսքերը ժողովուրդին հաղորդեց, ու ժողովուրդին երէցներէն եօթանասուն մարդ հաւաքելով՝ զանոնք վրանին շուրջը տեղաւորեց: **25** Տէրը ամպի մը մէջ իշաւ, անոր հետ խօսեցաւ, եւ անոր վրայ եղած Հոգիէն առնելով՝ այդ եօթանասուն երէցներուն տուաւ: Երբ Հոգին անոնց վրայ հանգչեցաւ՝ մարգարէացան, իբայց չշարունակեցին»:

26 Սակայն երկու մարդ բանակավայրին մէջ մնաց. մէկուն անունը Ելդադ էր, միւսին անունը՝ Մովսէս, եւ Հոգին հանգչեցաւ անոնց վրայ: Անոնք արձանագրուածներէն էին, բայց դուրս ելած չէին՝ դէպի վրանը, ու բանակավայրին մէջ մարգարէացան: **27** Պատանի մը վագեց եւ պատմեց Մովսէսի՝ ըսելով. «Ելդադ ու Մովսէս բանակավայրին մէջ կը մարգարէանան»: **28** Նաւէի որդին՝ Յեսու, Մովսէսի ծընտրեալ սպասարկուն, պատասխանեց. «Իմ Տէ՛րս Մովսէս, արգիլէ՛ զանոնք»: **29** Մովսէս անոր ըսաւ. «Ինծի՞ համար նախանձախնդիր ես. Երանի՛ թէ Տէրոց ամբողջ ժողովուրդը մարգարէներ ըլլային ու Տէրը իր Հոգին անոնց վրայ դնէր»: **30** Յետոյ Մովսէս բանակավայրը քաշուեցաւ, ինք եւ հսրայէլի երէցները:

բ Երը՝ ականջներուն

ծ Երը՝ կարճցա՞ւ

հ Երը՝ պատահի՝

լ Երը՝ կայնեցուց

ի Կամ՝ եւ չդադրեցան

ծ Երը՝ ընտրեալներէն կամ երիտասարդներէն եղող

կ Երը՝ հաւաքուեցաւ

ՏԷՐԸ ԿԸ ՂՐԿԵ ԼՈՐԱՄԱՐԳԻՆԵՐ

31 Տէրոջմէն հով մը բարձրացաւ ու ծովէն լորամարգիներ բերաւ, եւ բանակավայրին վրայ տարածեց՝ մէկ օրուան ճամբայ մէկ կողմէն, ու մէկ օրուան ճամբայ միւս կողմէն, բանակավայրին շուրջը, գետինի մակերեսէն երկու կանգունի չափ բարձրութեամբ: **32** Ժողովուրդը կանգնեցաւ այդ ամբողջ օրը, ամբողջ գիշերը եւ հետեւեալ ամբողջ օրը, ու լորամարգիները հաւաքեց. ամենէն քիչ հաւաքողը տասը քոռ հաւաքեց, եւ իրենց համար բանակավայրին շուրջը փուեցին՝ **որպէսզի զանոնք չորցնեն:** **33** Մինչ տակաւին միսը իրենց ակռաներուն վրայ էր, դեռ չծամուած՝ Տէրոջ բարկութիւնը ժողովուրդին դէմ բորբոքեցաւ, ու Տէրը յոյժ մեծ պատուհասով զարկաւ ժողովուրդը: **34** Այդ տեղին անունը՝ **Կիբրոթ-Հաթթաւա** կոչուեցաւ, որովհետեւ հոն թաղեցին ցանկացող ժողովուրդը: **35** Կիբրոթ-Հաթթաւայէն՝ ժողովուրդը Ասերովը մեկնեցաւ, եւ Ասերովի մէջ՝ **մնացին:**

ՄԱՐԻԱՄ ԿԸ ՊԱՏՃՈՒԻԻ

12

Մարիամ ու Ահարոն Մովսէսի դէմ խօսեցան՝ անոր առած եթովպիացի կնոջ համար – քանի որ ան եթովպիացի կին առած էր –, **2** եւ ըսին. «Միթէ Տէրը միայն Մովսէսի^۶՝ միջոցով խօսեցաւ. մեր միջոցով ալ չխօսեցա՞ւ». ու Տէրը լսեց: **3** Մովսէս շատ հեզ մարդ մըն էր՝ երկրագունդի մակերեսին վրայ եղած բոլոր մարդոցմէն աւելի: **4** Խսկոյն Տէրը Մովսէսի, Ահարոնի եւ Մարիամի ըսաւ. «Դուք երեքդ ալ դո՛րս ելէք՝ դէպի Հանդիպումի վրանը». Երեքն ալ դուրս ելան: **5** Տէրը ամպին սիւնով իջաւ ու վրանին մուտքը կեցաւ, եւ Ահարոնն ու Մարիամը կանչեց. անոնք երկուքն ալ դուրս ելան: **6** Եւ Տէրը **անոնց** ըսաւ. «Այժմ մտի՛կ ըրէք իմ խօսքերս: Եթէ ձեր մէջ մարգարէ մը ըլլայ, ես՝ Տէրս՝ զիս տեսիլիք մէջ կը ճանչցնեմ անոր, **կամ** երազի մէջ կը խօսիմ անոր հետ: **7** Բայց իմ ծառաս՝ Մովսէս այնպէս չէ. ան իմ ամբողջ տանս մէջ հաւատարիմ է: **8** Անոր հետ բերանէ բերան կը խօսիմ, յա՛յտնապէս՝ ո՛չ թէ հանելուկով, եւ ան Տէրոջ կերպարանքը կը տեսնէ: Ուստի ինչո՞ւ չվախցաք իմ ծառայիս՝ Մովսէսի դէմ խօսելէ»: **9** Տէրոջ բարկութիւնը անոնց դէմ բորբոքեցաւ, եւ ինք գնաց: **10** Ամպն ալ հեռացաւ վրանէն, ու ահա՛ Մարիամ ծիւնի պէս բորոտ եղաւ: Ահարոն Մարիամի նայեցաւ, եւ ահա՛ ան բորոտ էր: **11** Ահարոն Մովսէսի ըսաւ. «Ո՛հ, իմ տէ՛րս, կ'աղերսե՛մ, մեր վրայ մի՛ դներ **այս** մեղքը. որովհետեւ խենթացանք ու մեղանչեցինք: **12** Մարիամ այն մեռած երախային պէս թող չըլլայ, որուն մարմինին կէսը սպառած է՝ երբ իր մօր արգանդէն կ'ելլէ»: **13** Մովսէս աղաղակեց Տէրոջ. «Այժմ կ'աղերսե՛մ, ո՛վ Աստուած, բուժէ՛ զայն»: **14** Տէրն ալ Մովսէսի ըսաւ. «Եթէ անոր հայրը միայն անոր երեսը թքնած ըլլար, եօթը օր պիտի չխպնէ՞ր. ան եօթը օր թող փակուի՝ բանակավայրէն դուրս, եւ անկէ ետք ներս ընդունուի»: **15** Մարիամ բանակավայրէն դուրս եօթը օր փակուեցաւ, ու ժողովուրդը չմեկնեցաւ մինչեւ Մարիամի ներս ընդունուիլը:

ԼՐՏԵՍՆԵՐԸ

(Բ. Օր. 1. 19-33)

⁶ **Այսինքն՝** ցանկութեան գերեզմաններ⁸ **Երբ.**՝ էին^۹ **Երբ.**՝ ձեռքով

13

Յետոյ ժողովուրդը Ասերովթէն մեկնեցաւ ու Փառանի անապատը բանակեցաւ: **2** Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **3** «Մարդիկ' դրկէ՛ որպէսզի հետախուզեն քանանի երկիրը, որ հսրայէլի որդիներուն կու տամ: Իրենց հայրերուն ամէն տոհմէն մարդ մը դրկեցէք, իւրաքանչիւր գլխաւոր ըլլալով անոնց մէջ»: **4** Մովսէս Տէրոց հրամանին համաձայն դրկեց զանոնք Փառանի անապատէն: Այդ բոլոր մարդիկը հսրայէլի որդիներուն գլխաւորներն էին: **5** Ահա՛ ասիկ անոնց անունները... **6** Ռուբէնի տոհմէն՝ Զաքուրի որդին Սամուա, Շմաւոնի տոհմէն՝ Քոռիի որդին Սափատ, **7** Յուդայի տոհմէն՝ Յեփոնէի որդին Քաղէք, **8** Իսաքարի տոհմէն՝ Յովսէփի որդին Իգաղ, **9** Եփրեմի տոհմէն՝ Նաւէի որդին Օսէս, **10** Բենհամինի տոհմէն՝ Ռափուի որդին Փաղտի, **11** Զաքուրոնի տոհմէն՝ Սուլիի որդին Գեղդիէլ, **12** Յովսէփի տոհմէն՝ **այսինքն** Մանասէի տոհմէն՝ Սուսիի որդին Գաղդի, **13** Դանի տոհմէն՝ Գամաղիի որդին Ամիէլ, **14** Ասերի տոհմէն՝ Միքայէլի որդին Սաթուր, **15** Նեփթաղիմի տոհմէն՝ Վափսիի որդին Նաբի, **16** Գաղի տոհմէն՝ Մաքրիի որդին Գուէլ:

17 Ասոնք են այն մարդոց անունները, որ Մովսէս դրկեց երկիրը հետախուզելու: Մովսէս Նաւէի որդիին՝ ^աՕսէսի անունը ^բՅետու դրաւ: **18** Մովսէս զանոնք դրկեց՝ Քանանի երկիրը հետախուզելու, եւ անոնց ըսաւ. «Այս հարաւային կողմէն բարձրանալով՝ լե՛ռը ելէք, **19** եւ այդ երկիրը զննեցէք՝ թէ ի՞նչպէս է. հոն բնակող ժողովուրդը ուժե՛ղ է թէ տկար, փոքրաթի՛ւ է թէ բազմաթիւ. **20** այն երկիրը՝ ուր անոնք կը բնակին, ի՞նչպէս է, լա՛ւ է թէ վատ. ի՞նչպէս են այն քաղաքները՝ ուր անոնք կը բնակին, ^գվրաններէ՝ **բաղկացած** են՝ թէ ամրոցներէ. **21** ի՞նչպէս է երկիրը, բերրի՛ է թէ անբեր, մէջը ծառեր կա՛ն թէ ոչ: Քա՛ջ ելէք, եւ **այդ** երկրին պտուղէն բերէք»: (Այդ օրերը՝ կանխահաս խաղողներուն ժամանակն էր:)

22 Անոնք բարձրացան ու **այդ** երկիրը հետախուզեցին՝ Սինի անապատէն մինչեւ Շոհոր, Եմաթ երթալու **ճամբան**: **23** Հարաւային կողմէն բարձրացան ու Քերրոն հասան, ուր կը բնակէին Ենակի զաւակները՝ Աքիման, Սէսի եւ Թոլմի: (Քերրոն Եգիպտոսի Տայանիս քաղաքէն եօթը տարի առաջ կառուցանուած էր:) **24** Յետոյ Եսքողի ծորը հասան եւ անկէ բարունակ մը կտրեցին՝ խաղողի ողկոյզով մը, ու երկու **հոգի** ծողով մը կրեցին զայն. Շուտերէն ու թուղերէն ալ **առին**: **25** Այդ տեղը ^հԵսքողի ծոր կոչուեցաւ, քանի որ հսրայէլի որդիները անկէ ողկոյզ մը կտրեցին: **26** Ապա վերադառնա՛ քառասուն օր **այդ** երկիրը հետախուզելէն ետք:

27 Անոնք գալով հասան Մովսէսի, Ահարոնի ու հսրայէլի որդիներուն ամբողջ համայնքին, Փառանի անապատը՝ Կաղէս. անոնց եւ ամբողջ համայնքին լուր բերին, երկրին պտուղը անոնց ցուցուցին, **28** ու պատմեցին ^էՄովսէսի եւ ըսին. «Գացինք այն երկիրը՝ ուր մեզ դրկեցիր. **ի՞րապէս** ան կաթ ու մեղր կը հոսեցնէ, եւ այս է անոր պտուղը: **29** Բայց **այդ** երկրին մէջ բնակող ժողովուրդը հզօր է, քաղաքները պարսպապատ **ու** յոյժ մեծ են. նաեւ հոն Ենակի զաւակները տեսանք: **30** Ամաղեկացիները **այդ** երկրին հարաւային կողմը կը բնակին, Քետացիները, Յեբուսացիներն ու Ամորհացիները՝ լեռները կը բնակին, իսկ Քանանացիները՝ ծովուն քով եւ Յորդանանի ափը կը բնակին»: **31** Քաղէք

^ա **Այսինքն**՝ փրկիչ

^բ **Այսինքն**՝ Տէր փրկիչ

^գ **Եբր.**՝ բանակավայրերէ

^հ **Այսինքն**՝ ողկոյզի

^է **Եբր.**՝ անոր

ժողովուրդը Մովսէսի առջեւ լրեցուց ու ըսաւ. «Ելլենք, բարձրանա՞նք եւ տիրանա՞նք անոր, քանի որ մենք անշուշտ կրնանք անոր յաղթել»: **32** Բայց անոր հետ բարձրացող մարդիկը ըսին. «Մենք չենք կրնար այդ ժողովուրդին դէմ բարձրանալ, որովհետեւ անոնք մեզմէ ուժեղ են»: **33** Եւ իրենց հետախուզած երկրին մասին գարախօսեցին հսրայէլի որդիներուն՝ ըսելով. «Այն երկիրը, որուն մէջէն անցանք՝ հետախուզելու համար, իր բնակիչները լափող երկիր մըն է. անոր մէջ մեր տեսած ամբողջ ժողովուրդը՝ երկայնահասակ մարդիկ են: **34** Հոն տեսանք հսկաները, Ենակի որդիները, որ հսկաներու ցեղէն են: Մենք մեր աչքերուն մարախի պէս էինք. նոյնպէս ալ անոնց աչքերուն էինք»:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՏՐՏՈՒՆՁԸ

14

Ամբողջ համայնքը ձայնը բարձրացնելով աղաղակեց, ու ժողովուրդը լացաւ այդ գիշերը: **2** Իսրայէլի բոլոր որդիները տրտնջեցին Մովսէսի եւ Ահարոնի դէմ, ու ամբողջ համայնքը անոնց ըսաւ. «Երանի՛թէ Եգիպտոսի երկրին մէջ մեռած ըլլայինք. կամ երանի՛թէ այս անապատին մէջ մեռած ըլլայինք: **3** Ինչո՞ւ Տէրը մեզ այս երկիրը բերաւ, որ սուրով իյնանք եւ մեր կիներն ու մեր մանուկները կողոպտուին. լաւ չ'ը՞լլար որ Եգիպտոս վերադառնանք»: **4** Եւ իրարու ըսին. «**Մեր Վրայ** զօրագլուխ մը կարգենք ու Եգիպտոս վերադառնանք»: **5** Մովսէս եւ Ահարոն իրենց երեսին վրայ ինկան հսրայէլի որդիներուն համախմբուած ամբողջ համայնքին առջեւ: **6** Իսկ երկիրը հետախուզողներէն Նաւէի որդին՝ Յետու, ու Յեփոնէի որդին՝ Քաղէք իրենց հագուստները պատուեցին, **7** եւ Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքին խօսեցան՝ ըսելով. «Այն երկիրը, որուն մէջէն անցանք զայն հետախուզելու համար, յոյժ լաւ երկիր մըն է: **8** Եթէ Տէրը մեզի հաճի, մեզ այդ երկիրը պիտի տանի եւ զայն մեզի պիտի տայ, երկիր մը՝ որ կաթ ու մեղր կը հոսեցնէ: **9** Միայն թէ Տէրոց դէմ մի՛ զմբուստանաք եւ **այդ** երկրին ժողովուրդէն մի՛ վախնաք, քանի որ անոնք մեր կերակուրն են. անոնց բազտապանութիւնը հեռացած է իրենց վրայէն, սակայն Տէ՛րը մեզի հետ է: Անոնցմէ մի՛ վախնաք»: **10** Բայց ամբողջ համայնքը կը խօսէր զանոնք գարկոծելու մասին, երբ Տէրոց փառքը բոլոր հսրայէլի որդիներուն երեւցաւ՝ Հանդիպումի վրանին մէջ:

ՄՈՎՍԷՍ Կ'ԱՂՈԹԷ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ

11 **Տէրը** Մովսէսի ըսաւ. «Այս ժողովուրդը մինչեւ Ե՞րբ զիս պիտի արհամարհէ, եւ մինչեւ Ե՞րբ պիտի չհաւատայ ինծի՝ հակառակ իրենց մէջ ըրած բոլոր նշաններուս: **12** Ես զանոնք ժանտախուզ պիտի զարնեմ ու զանոնք կորսնցնեմ, եւ քեզ անոնցմէ աւելի մեծ ու աւելի հզօր ազգ մը պիտի ընեմ»:

13 Մովսէս **Տէրոց** ըսաւ. «Բայց Եգիպտացիները պիտի լսեն, (քանի որ քու կարողութեա՛մբդ այս ժողովուրդը անոնց մէջէն բարձրացուցիր,) **14** եւ պիտի պատմեն Տէ՛րը մեզի հովանակին մէջ:

[¤] **Երր.**՝ չարախօսութիւն դուրս հանեցին

[¤] **Երր.**՝ ձայնը լսել տուաւ

[¤] **Երր.**՝ հովանակին

[¤] **Երր.**՝ քարերով քարկոծելու

այս երկրին բնակիչներուն, որոնք լսած են թէ դո՛ւն, **ո՛վ Տէր**, այս ժողովուրդին մէջտեղն ես, թէ դո՛ւն, **ո՛վ Տէր**, “ηէմ առ դէմ” կը տեսնուիս, թէ քո՛ւ ամպդ անոնց վրայ կը կենայ, եւ թէ դո՛ւն կ'երթաս անոնց առջեւէն՝ ցերեկը ամպի սիւնով ու գիշերը կրակի սիւնով: **15** Եթէ այս ժողովուրդը մէկ մարդու պէս մեոցնես, քու համբաւդ լսող ազգերը պիտի ըսեն. **16** “Տէրը այս ժողովուրդը չկրցաւ տանիլ այն երկիրը՝ որ երդումով խոստացած էր անոնց, ուստի անապատին մէջ մեոցուց զանոնք: **17** Եւ հիմա կ'աղերսե՞մ, իմ Տէրոցս կարողութիւնը թող մեծ ըլլայ, ինչպէս խօսեցար՝ ըսելով. **18** “Տէրը համբերատար է, առատաձեռն՝ կարեկցութեամբ, անօրէնութիւնն ու յանցանքը ներող. բայց **յանցաւորը** ամենեւին անպատիժ չի թողուր, **հապա** հայրերուն անօրէնութիւնը կը հատուցանէ որդիներուն՝ մինչեւ երրորդ ու չորրորդ **սերունդը**: **19** Կ'աղերսե՞մ, քու մեծ կարեկցութեանդ համեմատ ներէ՛ այս ժողովուրդին անօրէնութիւնը, ինչպէս ներեցիր այս ժողովուրդին՝ եգիպտոսէն մինչեւ հոս»:

20 *Տէրը ըսաւ.* «Զու խօսքիդ համաձայն ներեցի: **21** Բայց ես կ'ապրի՞մ, եւ ամբողջ երկիրը Տէրոց փառքով պիտի լեցուի: **22** Արդարեւ այն բոլոր մարդիկը, որ եգիպտոսի մէջ ու անապատին մէջ իմ փառքս եւ իմ ըրած նշաններս տեսան, բայց մինչեւ հիմա զիս տասը անգամ փորձեցին ու իմ խօսքս մտիկ չըրին, **23** բնա՛ւ պիտի չտեսնեն այն երկիրը, որ երդումով **խոստացայ** իրենց հայրերուն. զիս արհամարհողներէն ո՛չ մէկը պիտի տեսնէ զայն: **24** Բայց որովհետեւ իմ ծառաս՝ Քաղէք ուրիշ հոգի ունեցաւ եւ լման հետեւեցաւ ինծի, ես ալ զայն իր գացած երկիրը պիտի տանիմ, եւ իր զարմը պիտի ժառանգէ զայն, **25** **միհչ** Ամաղեկացիներն ու Քանանացիները հովիտին մէջ կը բնակին: Վաղը դարձէ՛ք եւ մեկնեցէ՛ք դէպի անապատը՝ Կարմիր ծովուն ճամբայով»:

ՏԷՐԸ ԿԸ ՊԱՏՃԵ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՏՐՏՈՒՆՁԻՆ ՀԱՄԱՐ

26 *Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով.* **27** «Մինչեւ ե՞րբ այս չար համայնքին ինծի դէմ տրտնջելուն **համբերեմ**. ես լսեցի Խրայէլի որդիներուն տրտունջը՝ որ ինծի դէմ կը տրտնջեն: **28** Ըսէ՛ անոնց. “Ես կ'ապրի՞մ, – կը պատգամէ Տէրը. – ինչպէս դուք իմ ականջներուս խօսեցաք, այնպէս պիտի ընեմ ծեզի: **29** Չեր դիակները այս անապատին մէջ պիտի իյնան, ծեզմէ բոլոր թուարկուածները՝ ծեր ամբողջ թիւին համեմատ, քսան տարեկանն վեր եղողները. դուք **բոլորդ**՝ որ ինծի դէմ տրտնջեցիք, **30** անշո՛ւտ պիտի չմտնէք այն երկիրը՝ որուն մէջ ծեզ բնակեցնելու **համար** “երդում ըրի”, բացի Յեփոննէի որդիէն՝ Քաղէքէ, ու Նաւէի որդիէն՝ Յեսուէ: **31** Իսկ ծեր մանուկները, որոնց համար ըսիք թէ պիտի կողոպտուին, զանո՞նք պիտի տանիմ եւ անո՞նք պիտի չտեսնեն ծեր անարգած երկիրը. **32** Բայց ծեր դիակները այս անապատին մէջ պիտի իյնան: **33** Չեր որդիները անապատին մէջ քառասուն տարի պիտի լմոլորին ու ծեր պոռնկութիւնները կրեն, մինչեւ որ ծեր դիակները անապատին մէջ հատնին: **34** Երկիրը քառասուն օրուան մէջ հետախուզեցիք. **այդ** օրերուն թիւին համեմատ՝ իւրաքանչիւր օր մէկ տարուան տեղ

^a **Եբր.**՝ աչք աչքի

^b **Եբր.**՝ մորթեց

^c **Եբր.**՝ ծեռքս վերցուցի

^d **Եբր.**՝ գիտնան

^e **Եբր.**՝ արածին

հաշուելով՝ քառասուն տարի պիտի կրէք ձեր անօրէնութիւնները, եւ գիտնաք թէ **ձեզմէ** հեռացած եմ: **35** Ես՝ Տէրս՝ խօսեցայ. ինծի դէմ հաւաքուած այդ ամբողջ չար համայնքին անշուշտ պիտի ընեմ ասիկա. անոնք այս անապատին մէջ պիտի սպառին ու հոն մեռնի՛»: **36** Այն մարդիկը՝ որ Մովսէս դրկեց **այդ** երկիրը հետախուզելու – որոնք վերադարձան ու երկրին մասին ՞չարախօսելով՝ ամբողջ համայնքը մղեցին անոր դէմ տրտնջելու –, **37** այն մարդիկը՝ որ **այդ** երկրին մասին չարախօսեցին՝ պատուհասով մեռան Տէրոց առջեւ: **38** Բայց Նաևի որդին՝ Յետու, եւ Յեփոնէի որդին՝ Քաղէք, որոնք երկիրը հետախուզելու գացող մարդոցմէն էին, ողջ մնացին:

ԵՐԿԻՐԸ ԳՐԱՒԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՉԸ (Բ.Օր. 1. 41-46)

39 Մովսէս այս խօսքերը հսրայէլի բոլոր որդիներուն հաղորդեց, ուստի ժողովուրդը մեծապէս սգաց: **40** Առտուն՝ կանուխ ելան, ու լերան գագաթը բարձրացան՝ ըսելով. «Ահա՝ մենք **պատրաստ** ենք եւ պիտի բարձրանանք այն տեղը՝ որուն մասին Տէրը խօսեցաւ. արդարեւ մեղանչեցինք»: **41** Սակայն Մովսէս ըսաւ. «Ինչո՞ւ այդպէս Տէրոց հրամանը կ'անտեսէք. ատիկա պիտի չյաջողի: **42** Մի՛ բարձրանաք, (քանի որ Տէրը ձեր մէջ չէ,) որպէսզի ձեր թշնամիներէն չպարտուիք. **43** որովհետեւ Ամաղեկացիներն ու Քանանացիները հոն՝ ձեր առջեւ են, եւ սուրով պիտի իյնաք. քանի Տէրոցմէն հեռացաք, Տէրը ձեզի հետ պիտի չըլլայ»: **44** Բայց անոնք մեծամտութեամբ լերան գագաթը բարձրացան. սակայն Տէրոց ուխտին տապանակն ու Մովսէս բանակավայրէն չհեռացան: **45** Ուստի այդ լերան վրայ բնակող Ամաղեկացիները եւ Քանանացիները իշան, զարկին զանոնք ու ջախջախեցին զանոնք՝ մինչեւ Հորմա:

ԿԱՆՈՆՆԵՐ ՁՈՉԻ ՀԱՄԱՐ

15

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **2** «Խօսէ՛ հսրայէլի որդիներուն եւ ըսէ՛ անոնց. «Երբ մտնէք այն երկիրը՝ որ ձեզի կու տամ, **ուր պիտի ունենաք** ձեր բնակարանները, **3** ու պատարագ ընծայէք Տէրոց – ողջակէզ կամ ուխտ կատարելու զոհ՝ թէ՛ յօժարակամ ընծայի համար, եւ թէ ձեր հանդիսաւոր տօներուն մէջ –, անոյշ հոտ ընծայելու համար Տէրոց՝ արջառներէն կամ ոչխարներէն, **4** իր մատաղը Տէրոց մատուցանողը՝ քառորդ հիմէն իւղով շաղուած մէկ տասներորդ նաշին թող մատուցանէ իբր հացի ընծայ: **5** Ողջակէզին կամ զոհին հետ քառորդ հիմէն գինի՝ ընծայէ իբր թափելիք նուէր՝ գառի մը համար: **6** Իսկ խոյի մը համար՝ մէկ երրորդ հիմէն իւղով շաղուած երկու տասներորդ նուրբ ալի՛ր ընծայէ իբր հացի ընծայ. **7** իբր թափելիք նուէր մէկ երրորդ հիմէն գինի՝ մատուցանէ Տէրոց՝ անոյշ հոտի համար: **8** Երբ արջառներէն զուարակ մը ընծայեն Տէրոց՝ ողջակէզի համար, ուխտ կատարելու զոհի համար կամ խաղաղութեան **զոհի** համար, **9** արջառներէն զուարակին հետ կէս հիմէն իւղով շաղուած երեք տասներորդ նուրբ ալի՛ր մատուցանէ իբր հացի ընծայ. **10** իբր թափելիք նուէր՝ կէս հիմէն գինի՝ մատուցանէ. **ասիկա** անուշահոտ պատարագ մըն է Տէրոց: **11** **Ամէց** մէկ ցուկի կամ խոյի համար, կամ ոչխարի կամ այծի համար այսպէս թող ըլլայ: **12** Զեր ընծայածին թիւին համեմատ՝ **ամէց** մէկուն ա՛յնպէս ըրէք, անոնց թիւին համեմատ: **13** Բոլոր բնիկները այսպէս թող ընեն այս բաները՝ Տէրոց անուշահոտ պատարագ մատուցանելու համար: **14** Ու եթէ ձեր քով պանդխացած գաղթական մը, կամ ձեր սերունդներուն մէջ ձեր մէջ

☞ **Եբր.**՝ չարախօսութիւն դուրս հանելով

բնակող մը Տէրոց անուշահոտ պատարագ մատուցանէ, ինչպէս դո՛ւք կ'ընէք՝ այնպէս ալ ի՞նք թող ընէ: **15** Իբր համախմբում՝ մէ՛կ կանոն պիտի ըլլայ ձեզի համար եւ ձեր քով պանդիստացած գաղթականին համար. յակիտենական կանոն մը՝ ձեր սերունդներուն մէջ: Տէրոց առջեւ ինչպէս դո՛ւք էք, այնպէս ալ գաղթականը պիտի ըլլայ: **16** Ձեզի համար ու ձեր քով պանդիստացած գաղթականին համար՝ մէկ օրէնք եւ մէկ կանոն պիտի ըլլայ□»:

17 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **18** «Խօսէ՛ Իսրայէլի որդիներուն ու ըսէ՛ անոնց. “Երբ մտնէք այն երկիրը՝ ուր ձեզ պիտի տանիմ, **19** եւ **այդ** երկրին հացէն ուտէք, բարձրացնելիք ընծայ՝ մատուցանեցէք Տէրոց: **20** Ձեր առաջին խմորէն կարկանդակ՝ մը իբր բարձրացնելիք ընծայ մատուցանեցէք. կալի բարձրացնելիք ընծային պէս մատուցանեցէք զայն: **21** Ձեր սերունդներուն մէջ՝ բարձրացնելիք ընծայ՝ մատուցանեցէք Տէրոց ձեր առաջին խմորէն:

22 “Իսկ եթէ սխալիք ու չգործադրէք այս բոլոր պատուիրանները՝ որ Տէրը Մովսէսի ըսաւ, **23** – **այսինքն** ամէն ինչ որ Տէրը ձեզի պատուիրեց Մովսէսի միջոցով –, այն օրէն ի վեր՝ երբ Տէրը պատուիրեց, եւ յետոյ՝ ձեր սերունդներուն մէջ **յակիտեան**, **24** եթէ **յանցանքը** սխալմամբ գործուած է՝ համայնքին աշքերէն **հեռու**, ամբողջ համայնքը արջառներէն զուարակ մը թող մատուցանէ Տէրոց՝ անուշահոտ ողջակէզի համար, կանոնին համաձայն՝ **հացի** ընծայով ու թափելիք նուէրով, նաեւ մեղքի պատարագի համար՝ այժերէն նոխազ մը: **25** Քահանան թող քաւութիւն ընէ Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքին համար, ու պիտի ներուի անոնց, որովհետեւ սխալ էր եւ անոնք իրենց սխալին համար Տէրոց առջեւ բերին իրենց մատաղը, Տէրոց պատարագ մը, նաեւ իրենց մեղքին պատարագը: **26** Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքին ու անոնց մէջ պանդիստացած գաղթականին պիտի ներուի, քանի որ ամբողջ ժողովուրդը սխալի մէջ էր:

27 “Եթէ անձ մը սխալմամբ մեղանչէ, մեղքի պատարագի համար մէկ տարեկան այծ մը թող մատուցանէ, **28** եւ քահանան թող քաւութիւն ընէ “սխալմամբ մեղանչող” անձին համար. երբ Տէրոց առջեւ սխալմամբ մեղանչէ, անոր համար թող քաւութիւն ընէ, ու անոր պիտի ներուի: **29** Մէկ օրէնք պիտի ունենաք սխալմամբ **մեղք** գործողին համար, թէ՛ Իսրայէլի որդիներէն **եղող** բնիկին համար, եւ թէ անոնց մէջ պանդիստացած գաղթականին համար:

30 “Բայց այն անձը՝ որ ”յանդգնութեամբ **բան մը** կ'ընէ, բնիկ ըլլայ կամ գաղթական, ան Տէ՛րը կը նախատէ. այդ անձը իր ժողովուրդին մէջէն պիտի բնացնցուի: **31** Տէրոց խօսքը արհամարհելուն եւ անոր պատուիրանը եանտեսելուն համար՝ այդ անձը անշուշտ պիտի բնացնցուի. անոր անօրէնութիւնը իր վրայ պիտի ըլլայ□»:

ԾԱԲԱԹԸ ԲԵԿԱՆՈՂ ՍԱՐԴԸ

32 Երբ Իսրայէլի որդիները անապատն էին, մարդ մը գտան որ Ծաբաթ օրը փայտ կը ժողովէր: **33** Անոնք որ գտան զայն փայտ ժողովելու ատեն, բերին զայն Մովսէսի, Ահարոնի

^ա **Եբր.**՝ բարձրացուցէք

^բ **Եբր.**՝ ձեռքով

^գ **Եբր.**՝ սխալող

^դ **Եբր.**՝ բարձր ձեռքով

^ե **Եբր.**՝ խզելուն

Եւ ամբողջ համայնքին առջեւ **34** ու բանտարկեցին զայն, որովհետեւ յստակ ծանուցանուած չէր թէ ի՞նչ ընելու էին անոր: **35** Տէրը Մովսէսի ըսաւ. «Այդ մարդը անշո՛ւտ պիտի մեռցուի. ամբողջ համայնքը բանակավայրէն դուրս թող գարկոծէ զայն»: **36** Ուստի ամբողջ համայնքը բանակավայրէն դուրս հանեց զայն, եւ քարկոծեցին զայն ու մեռաւ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր:

ԾՈՂԵՐՈՒՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

37 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **38** «Խօսէ՛ Իսրայէլի որդիներուն եւ հրամայէ՛ անոնց որ իրենց ծոպեր շինեն իրենց հագուստներուն քղանցքներուն վրայ՝ իրենց սերունդներուն մէջ, ու քղանցքի ծոպերուն վրայ կապուտակէ երիգ մը դնեն: **39** Ատիկա ձեզի ծոպ պիտի ըլլայ, որպէսզի զայն տեսնելով Տէրոց բոլոր պատուիրանները յիշէք եւ գործադրէք զանոնք, ու ձեր սիրտին եւ աչքերուն **ցանկութիւնները** չհետախուզէք, որոնց հետեւելով կը ։մոլորիք. **40** որպէսզի յիշէք ու գործադրէք իմ բոլոր պատուիրաններս, եւ սուրբ ըլլաք ձեր Աստուծոյն **առջեւ:** **41** Ե՛ս եմ Տէրը՝ ձեր Աստուածը, որ ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի՝ ձեզի Աստուած ըլլալու համար: Ե՛ս եմ Եհովան՝ ձեր Աստուածը»:

ԿՈՐԻՒ, ԴԱԹԱՆԻ ԵՒ ԱԲԻՐՈՆԻ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ

16

Ղեւիի որդիին Կահաթի որդիին հսահառի որդին՝ Կորիս, ու Ռուբէնի որդիներէն Եղիաքի որդիները՝ Դաթան եւ Աբիրոն, ու Փաղէթի որդին՝ Օն, **մարդիկ** առին **2** եւ Մովսէսի առջեւ կանգնեցան՝ Իսրայէլի որդիներէն ումանց հետ. Երկու հարիւր յիսուն տոնիմի իշխաններ, համայնքի բերեւելիններ, անուանի մարդիկ: **3** Մովսէսի ու Ահարոնի դէմ համախմբուեցան եւ ըսին անոնց. «Ալ կը բաւէ ։ծեր ըրածը, որովհետեւ ամբո՞ջ համայնքը սուրբ է, անոնցմէ իրաքանչիւրը, ու Տէրը անոնց մէջ է. ինչո՞ւ դուք ձեզ կը բարձրացնէք Տէրոց համախմբումէն վեր»: **4** Երբ Մովսէս ասիկա լսեց, իր երեսին վրայ ինկաւ, **5** եւ խօսեցաւ Կորիսի ու անոր ամբողջ խումբին՝ ըսելով. «Վաղը առտու՝ Տէրը պիտի գիտցնէ թէ ո՞վ է իրը եւ ո՞վ է սուրբը, ու **զայն** իրեն պիտի մօտեցնէ. ո՞վ որ ինք ընտրէ, իրեն պիտի մօտեցնէ: **6** Սա՛ ըրէք. ձեզի բուրվառներ առէք, դո՛ւն, **ո՞վ** Կորիս, եւ քու ամբողջ խումբդ, **7** ու վաղը անոնց մէջ կրա՛ դրէք եւ անոնց մէջ խո՛ւնկ դրէք՝ Տէրոց առջեւ. այն մարդը որ Տէրը ընտրէ, անիկա՛ սուրբ պիտի ըլլայ: Ալ կը բաւէ ։ծեր ըրածը, **ո՞վ** Ղեւիի որդիներ»: **8** Մովսէս Կորիսի ըսաւ. «Կ'աղերսե՞մ, մտի՛ ըրէք, **ո՞վ** Ղեւիի որդիներ: **9** Զի՞չ **բան** գկը թուի՝ ձեզի, որ Իսրայէլի Աստուածը՝ ձեզ իրեն մօտեցնելու համար՝ Իսրայէլի համայնքէն զատեց ձեզ, որպէսզի Տէրոց խորանին ծառայութիւնը ընէք ու համայնքին առջեւ կայնիք՝ անոնց սպասարկելու: **10** Զե՞զ, եւ բոլոր եղբայրներդ՝ Ղեւիի որդիները՝ քեզի հետ իրեն մօտեցուց, ու դուք քահանայութի՞ւն ալ կը պահանջէք: **11** Ուրեմն դուն եւ քու ամբողջ համայնքդ Տէրո՛ջ դէմ հաւաքուեցաք. **ո՞վ** է Ահարոն, որ անոր դէմ տրտնջէք»:

^a **Եբր.**՝ քարերով քարկոծէ

^b **Եբր.**՝ պոռնկիք

^c **Եբր.**՝ համայնքի

^d **Եբր.**՝ կանչուածներ

^e **Եբր.**՝ է

12 Մովսէս Եղիաքի որդիները՝ Դաթանն ու Աբիրոնը՝ կանչելու համար **մարդ** դրկեց, բայց անոնք ըսին. «Չե՞նք բարձրանար: **13** Մեզ անապատին մէջ մեռցնելու համար՝ կաթ ու մեղր հոսեցնող երկրէ մը մեզ բարձրացնելի քի՞չ **բաց** է, որ նաեւ մեր վրայ իշխել կ'ուզես: **14** Եւ մեզ կաթ ու մեղր հոսեցնող երկիր մը չտարիր, ո՛չ ալ մեզի արտ եւ այգի տուիր իբր ժառանգութիւն: Միթէ այս մարդոց աչքե՞րը պիտի փորես. մենք չենք բարձրանար»: **15** Մովսէս չափազանց բորբոքեցաւ ու **Տէրոց** ըսաւ. «Պուշադրութիւն մի՛ դարձներ անոնց ընծաներուն. անոնցմէ մէ՛կ էշ իսկ չառի, եւ անոնցմէ ո՛չ մէկուն չարիք ըրի»: **16** Մովսէս Կորիսի ըսաւ. «Վաղը դուն ու քու ամբողջ խումբդ **Տէրոց** առջեւ ներկայացէք, դուն եւ անոնք, ու **Ահարոն**: **17** Իւրաքանչիւրդ ձեր բուրվառները առէք եւ անոնց մէջ խունկ դրէք, ու **Տէրոց** մօտեցուցէք իւրաքանչիւրդ ձեր բուրվառը, **այսինքն**՝ երկու հարիւր յիսուն բուրվառ. դուն եւ **Ահարոն** ալ, իւրաքանչիւրը իր բուրվառը»: **18** Իւրաքանչիւրը իր բուրվառը առնելով՝ անոնց մէջ կրակ դրին ու անոնց վրայ խունկ դրին, եւ Հանդիպումի վրանին մուտքը կայնեցան՝ Մովսէսի ու **Ահարոնի** հետ: **19** Կորիս անոնց դէմ համախմբեց ամբողջ համայնքը՝ Հանդիպումի վրանին մուտքը, եւ **Տէրոց** փառքը ամբողջ համայնքին երեւցաւ:

20 **Տէրը** խօսեցաւ Մովսէսի ու **Ահարոնի**՝ ըսելով. **21** «Այդ համայնքին մէջէն զատուեցէք, որպէսզի վայրկենապէս սպառեմ զանոնք»: **22** Բայց անոնք իրենց երեսին վրայ ինկան եւ ըսին. «Ո՛վ Աստուած, բոլոր մարդոց հոգիներուն Աստուածը, մէ՛կ մարդու մեղանչելով՝ ամբո՞ղջ համայնքին դէմ պիտի զայրանաս»:

23 **Տէրը** խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **24** «Խօսէ՛ համայնքին ու ըսէ՛. “Հեռացէ՛ք Կորիսի, Դաթանի եւ **Աբիրոնի** բնակարանին շրջակայքէն”»: **25** Ուստի Մովսէս կանգնեցաւ ու Դաթանի եւ **Աբիրոնի** գնաց. Իսրայէլի երկցներն ալ անոր հետեւեցան: **26** Խօսեցաւ համայնքին՝ ըսելով. «Կ'աղերսե՞մ, այդ ամբարիշտ մարդոց վրաններուն քովէն գացէ՛ք ու անոնց որեւէ մէկ բանին մի՛ դաշիք, որպէսզի անոնց բոլոր մեղքերով չկորսուիք»: **27** Ուրեմն անոնք Կորիսի, Դաթանի եւ **Աբիրոնի** բնակարանին շրջակայքէն հեռացան. Դաթան եւ **Աբիրոն**, անոնց կիները, որդիներն ու մանուկները դուրս ելան եւ իրենց վրաններուն մուտքը կայնեցան: **28** Մովսէս ըսաւ. «Սա՛պէս պիտի գիտնաք թէ **Տէրը** զիս դրկած է՛ այս բոլոր գործերը կատարելու, եւ ո՛չ թէ գես ինձմէ՛ “**Կատարեցի զանոնք**”: **29** Եթէ ասոնք ամէն մարդու մահով մեռնին, կամ եթէ ամէն մարդու պատահածը ասոնց ալ պատահի”, **Տէրը** զիս դրկած չէ: **30** Բայց եթէ **Տէրը** բնաշք մը գործէ”, գետինը իր բերանը բանայ ու զանոնք եւ անոնց ամբողջ ունեցածը կլլէ, ու անոնք ողջ-ողջ թժոխք իշնեն, պիտի գիտնաք թէ այս մարդիկը **Տէրը** անարգեցին»:

31 Երբ աւարտեց այս բոլոր խօսքերը ըսելը, անոնց տակի գետինը ճեղքուեցաւ, **32** երկիրը իր բերանը բացաւ ու զանոնք, անոնց տուները, Կորիսի ունեցած բոլոր մարդիկը եւ **անոնց** ամբողջ ինչքը կլլեց: **33** Անոնք ու անոնց բոլոր ունեցածները ողջ-ողջ դժոխք իշան, երկիրը ծածկեց զանոնք, եւ համախմբումին մէջէն կորսուեցան:

^Դ **Երբ.**՝ Երես

^Ե **Երբ.**՝ մարմիններու

^Գ **Երբ.**՝ իմ սիրտէս

^Դ **Երբ.**՝ հատուցումով հատուցանուին

^Ե **Երբ.**՝ ստեղծագործութիւն մը ստեղծագործէ

^Պ **Այսինքն**՝ մեռած անձերու կայանը

ԿՐԱԿԸ ԿԸ ՍՊԱՌԵ

34 Ամբողջ Իսրայէլը՝ որ անոնց շուրջն էր, անոնց ծայնէն փախաւ. արդարեւ կ'ըսէին. «Երկիրը մեզ **ալ** թող չկլէ»: **35** Եւ Տէրոցմէն կրակ ելաւ ու խունկ մատուցանող երկու հարիւր յիսուն մարդիկը սպառեց:

36 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **37** «Խօսէ՛ Ահարոն քահանային որդիին՝ Եղիազարի, որ բուրվառները **այդ** հրդեհին մէջէն վերցնէ, եւ դուն անոնց **մէջ եղած** կրակը հեռո՛ն ցրուէ, քանի որ անոնք սուրբ եղան: **38** Իրենց անձերուն դէմ մեղանչողներուն բուրվառներէն ծեծուած թիթեղներ թող շինուին՝ զոհասեղանը պատելու համար. որովհետեւ անոնք Տէրոց առջեւ մատուցանուելով՝ սուրբ եղած են, եւ Իսրայէլի որդիներուն նշան պիտի ըլլան»: **39** Ուստի Եղիազար քահանան այն այրուած **մարդոց** մատուցանած պղինձէ բուրվառները առաւ, եւ անոնք զոհասեղանը պատելու համար ծեծուեցան **40** – Իսրայէլի որդիներուն յիշատակ ըլլալու համար, որպէսզի Ահարոնի զարմէն չեղող ո՛չ մէկ օտար մօտենայ՝ Տէրոց առջեւ խունկ մատուցանելու, եւ Կորիսի պէս ու անոր խումբին պէս ըլլայ –, ինչպէս Տէրը անոր ըսաւ՝ Մովսէսի ^Ժմիջոցով:

ԱՀԱՐՈՆ ԿԸ ՓՐԿԵ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

41 Հետեւեալ օրը՝ Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը Մովսէսի դէմ եւ Ահարոնի դէմ տրտնջեց՝ ըսելով. «Դուք Տէրոց ժողովուրդը մեղոցուցիք»: **42** Երբ համայնքը Մովսէսի դէմ ու Ահարոնի դէմ համախմբուած էր, դէպի Հանդիպումի վրանը նայեցան, եւ ահա՛ ամպը ծածկեց զայն, ու Տէրոց փառքը երեւցաւ: **43** Մովսէս եւ Ահարոն Հանդիպումի վրանին առջեւ եկան, **44** ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **45** «Այդ համայնքին մէջէն ելէ՛ք, որպէսզի վայրկենապէս սպառեմ զանոնք»: Անոնք իրենց երեսին վրայ ինկան, **46** եւ Մովսէս Ահարոնի ըսաւ. «Բուրվա՛ռը առ ու զոհասեղանին վրայէն կրակ' դիր մէջը, վրան խունկ դիր, շուտո՛վ համայնքին գնա եւ անոնց համար քաւութի՛ն ըրէ, որովհետեւ Տէրոց զայրոյթը բորբոքեցաւ ու հարուածը սկսաւ»: **47** Ահարոն Մովսէսի ըսածին համաձայն բուրվառը առաւ եւ համախմբումին մէջ վագեց, եւ ահա՛ հարուածը սկսած էր ժողովուրդին մէջ: **Բուրվառին վրայ** խունկ դրաւ ու ժողովուրդին համար քաւութի՛ն ըրաւ. **48** Մեռելներուն եւ ողջերուն մէջտեղ կայնեցաւ, ու պատուհասը դադրեցաւ: **49** Պատուհասէն մեռածները տասնչորս հազար եօթը հարիւր հոգի **հոգի** էին, Կորիսի արարքին համար մեռածներէն զատ: **50** Ահարոն վերադարձաւ Մովսէսի՝ Հանդիպումի վրանին մուտքը, ու պատուհասը դադրեցաւ:

ԱՀԱՐՈՆԻ ԾԱՂԿՈՂ ԳԱՒԱԶԱՆԸ

17

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **2** «Խօսէ՛ Իսրայէլի որդիներուն եւ անոնցմէ մէկակա՞ն գաւազան առ՝ **իրենց** նահապետուրիւններուն համեմատ, **այսինքն** իրենց նահապետուրիւններուն բոլոր իշխաններէն՝ տասներկու գաւազան. իւրաքանչիւրին անունը ի՛ր գաւազանին վրայ գրէ: **3** Ահարոնի անունը Ղեփի՛ գաւազանին վրայ գրէ, որովհետեւ անոնց նահապետուրիւններուն գլխաւորին համար մէկ գաւազան պիտի ըլլայ: **4** Զանոնք Հանդիպումի վրանին մէջ՝ Վկայութեա՞ն առջեւ զետեղէ, ուր ձեզի պիտի հանդիպիմ: **5** Իմ ընտրած մարդուս գաւազանը պիտի ծաղկի, ու ինձմէ պիտի դադրեցնեմ

^Ժ Երբ.՝ ձեռքով

Իսրայէլի որդիներուն տրտունջը՝ որոնք կը տրտնջեն ձեզի դէմ»:

6 Մովսէս խօսեցաւ իսրայէլի որդիներուն, եւ անոնց իշխաններէն իւրաքանչիւրը մէկական գաւազան տուաւ իրեն, ամէն իշխանի համար մէկ գաւազա՛ իրենց նահապետութիւններուն համեմատ, այսինքն՝ տասներկու գաւազան։ Ահարոնի գաւազանն ալ անոնց գաւազաններուն մէջ էր։ 7 Մովսէս գաւազանները Տէրոց առջեւ գետեղեց՝ Վկայութեան վրանին մէջ։ 8 Հետեւեալ օրը՝ Մովսէս Վկայութեան վրանը մտաւ, եւ ահա՝ Ղետի տունէն տրուած Ահարոնի գաւազանը ծաղկած էր. “բողբոջած, ՞ծաղիկ բացած” ու նուշեր հասցուցած էր։ 9 Մովսէս բոլոր գաւազանները Տէրոց առջեւէն դուրս հանեց եւ իսրայէլի բոլոր որդիներուն բերաւ. անոնք տեսան, եւ իւրաքանչիւրը իր գաւազանը առաւ։ 10 Տէրը Մովսէսի ըսաւ. «Ահարոնի գաւազանը վերադարձուր Վկայութեան առջեւ, որպէսզի պահուի՝ ապստամբներուն նշան ըլլալու համար, ու վերցուր ինձմէ անոնց տրտունջը՝ որպէսզի չմեռնին»։ 11 Մովսէս Տէրոց իրեն պատուիրածին համաձայն ըրաւ. այնպէս ըրաւ։ 12 Իսրայէլի որդիները խօսեցան Մովսէսի՝ ըսելով. «Ահա՝ մեր շունչը կու տանք, կը կորսուինք. մենք բոլորս կը կորսուինք։ 13 Ո՞վ որ Տէրոց խորանին մօտենայ՝ կը մեռնի. միթէ մեր շունչը տալով պիտի սպառի՞նք»։

ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒՆ ԵՒ ՂԵՒԱՑԻՆԵՐՈՒՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐԸ

18

Տէրը Ահարոնի ըսաւ. «Դուն, եւ որդիներդ ու նահապետութիւնդ քեզի հետ, սրբարանին անօրէնութիւնը պիտի կրէք. դուն, եւ որդիներդ քեզի հետ, ձեր քահանայութեան անօրէնութիւնը պիտի կրէք։ 2 Ղետի տոհմէն, այսինքն՝ քու հօրդ տոհմէն եղող եղբայրներդ ալ մօտեցուր քեզի հետ, որպէսզի քեզի միանան ու քեզի սպասարկեն. իսկ դուն, եւ որդիներդ քեզի հետ, Վկայութեան վրանին առջեւ պիտի ըլլաք։ 3 Քու պաշտօնդ ու ամբողջ վրանին բաղաշտօնը թող կատարեն”. միայն թէ սրբարանի առարկաներուն եւ գոհասեղանին թող չմօտենան, որպէսզի ո՛չ իրենք մեռնին, ո՛չ ալ դուք։ 4 Անոնք ձեզի թող միանան, ու Հանդիպումի վրանին “պաշտօնը թող կատարեն” վրանին ամբողջ ծառայութեան համեմատ. բայց ո՛չ մէկ օտար թող մօտենայ ձեզի։ 5 Սրբարանին պաշտօնը ու գոհասեղանին բաղաշտօնը կատարեցէ՛ք”, որպէսզի ալ իսրայէլի որդիներուն վրայ զայրոյթ չըլլայ։ 6 Ահա՝ ձեր եղբայրները՝ Ղետացիները առի իսրայէլի որդիներուն մէջէն. անոնք ձեզի տրուած պարգեւ են Տէրոց համար, որպէսզի Հանդիպումի վրանին ծառայութիւնը ընեն։ 7 Իսկ դուն, եւ քու որդիներդ քեզի հետ, ձեր քահանայութիւնը պիտի կատարէք գոհասեղանին պատկանող բոլոր բաներուն ու վարագոյրին ներսը եղող բաներուն համար, եւ այսպէս պիտի ծառայէք։ Զեր քահանայութեան պաշտօնը ձեզի

“ Եբր.՝ բողբոջներ դուրս հանած

Բ Եբր.՝ ընծիւղներ ընծիւղած

Կ Եբր.՝ պահպանութիւնդ

Բ Եբր.՝ պահպանութիւնը թող պահեն

Գ Եբր.՝ պահպանութիւնը թող պահեն

Դ Եբր.՝ պահպանութիւնը

Ե Եբր.՝ պահպանութիւնը պահեցէ՛ք

տուի իբր պարգեւ. մօտեցող օտարը պիտի մեռցուի»:

8 Տէրը խօսեցաւ Ահարոնի. «Ահա՛ քեզի տուի՝ Իսրայէլի որդիներուն բոլոր սուրբ բաներէն՝ իմ բարձրացնելիք ընծաներուս Պաշտօնը. անոնք քեզի եւ որդիներուդ տուի յափտենական կանոնով՝ իբր օծումի իրաւունք: **9** Հետեւեալները քուկդ պիտի ըլլան ամենասուրբ բաներէն՝ որ չեն այրուիր».— անոնց բոլոր մատաղները, **այսինքն**՝ անոնց բոլոր հացի ընծաները, բոլոր մեղքի պատարագներն ու բոլոր յանցանքի պատարագները, որ ինծի պիտի հատուցանեն, ամենասուրբ են քեզի եւ որդիներուդ համար: **10** Ամենասուրբ տեղին մէջ կեր զայն. ամէն արու թող ուտէ զայն. ան սուրբ պիտի ըլլայ քեզի: **11** Սա՛ ալ քուկդ պիտի ըլլայ.— անոնց պարգեւներուն բարձրացնելիք ընծաները, նաեւ Իսրայէլի որդիներուն բոլոր երերցնելիք ընծաները: Զանոնք յափտենական կանոնով տուի քեզի եւ որդիներուդ ու աղջիկներուդ՝ քեզի հետ. քու տանդ մէջ ամէն մաքուր եղող անկէ թող ուտէ: **12** Իւղին ընտրելագոյնը, քաղցուին եւ ցորենին ընտրելագոյնը – **ամբողջ** թերախայրիքը՝ որ Տէրոց պիտի մատուցանեն – քեզի՝ տուի: **13** Անոնց երկրին մէջ եղող բոլոր բերքերուն երախայրիքը, որ Տէրոց կը բերեն, քո՛ւկդ պիտի ըլլայ. քու տանդ մէջ ամէն մաքուր եղող անկէ թող ուտէ: **14** Իսրայէլի մէջ ամէն նուէր քուկդ պիտի ըլլայ: **15** Բոլոր մարմիններուն մէջ ամէն արգանդ բացող՝ որ Տէրոց կը մատուցանեն, մարդ ըլլայ թէ անասուն, քո՛ւկդ պիտի ըլլայ. միայն թէ մարդուն անդրանիկը **անպատճառ** պիտի փրկես. անմաքուր անասունին առջիննեկն ալ պիտի փրկես: **16** Երբ փրկուելիքները մէկ ամսուան ըլլան, փրկէ՛ **զանոնք** քու գնահատումիդ համեմատ, **այսինքն** հինգ սիկո դրամով՝ սրբարանի սիկոյին համեմատ, որ քսան կերատ է: **17** Բայց կովին առջիննեկը, ոչխարին առջիննեկը կամ այծին առջիննեկը մի՛ փրկեր. անոնք սուրբ են: Սրսկէ՛ անոնց արիւնը զոհասեղանին վրայ, եւ այրէ՛ անոնց ճարպը՝ որպէս անուշահոտ պատարագ Տէրոց: **18** Անոնց միսը քո՛ւկդ պիտի ըլլայ, ինչպէս երերցնելիք երբուժն ու աջ զիստը քուկդ են: **19** Սուրբ բաներէն բոլոր բարձրացնելիք ընծաները, որ Իսրայէլի որդիները Տէրոց կը մատուցանեն, յափտենական կանոնով տուի քեզի եւ որդիներուդ ու աղջիկներուդ՝ քեզի հետ. ասիկա Տէրոց առջեւ աղի ուխտ մըն է յափտենան՝ քեզի համար եւ քեզի հետ քու զարմիդ համար»: **20** Նաեւ Տէրը Ահարոնի քսաւ. «Անոնց երկրին մէջ դուն ժառանգութիւն պիտի չունենաս, ու անոնց մէջ բաժին պիտի չունենաս. ե՞ս եմ քու բաժինդ ու ժառանգութիւնդ՝ Իսրայէլի որդիներուն մէջ»:

ՂԵՒԱՑԻՆԵՐՈՒՆ ԲԱԺԻՆԸ

21 «Ահա՛ Իսրայէլի ամբողջ տասանորդը Ղեկի որդիներուն տուի իբր ժառանգութիւն՝ իրենց ըրած ժառայութեան փոխարէն, **այսինքն**՝ Հանդիպումի վրանին ժառայութեան համար: **22** Ուստի Իսրայէլի որդիները ա՛ Հանդիպումի վրանին թող չմօտենան, որպէսզի մեղք չկրեն ու չմեռնին: **23** Ղեւտացիները պիտի ժառայեն Հանդիպումի վրանին, եւ իրենք պիտի կրեն իրենց անօրէնութիւնը: Ասիկա ճեր սերունդներուն մէջ յափտենական

^գ **Եբր.**՝ պահպանութիւնը

^է **Եբր.**՝ որ կրակէն պահուած են

^լ **Եբր.**՝ ամբողջ ճարպը

^բ **Եբր.**՝ առաջինները

^ժ **Եբր.**՝ տան

կանոն պիտի ըլլայ, որ անոնք հսրայէլի որդիներուն մէջ ժառանգութիւն չունենան: **24** Արդարեւ հսրայէլի որդիներուն տասանորդները, որ Տէրոց կը մատուցանեն իբր բարձրացնելիք ընծայ, Ղետացիներուն տուի իբր ժառանգութիւն. հետեւաբար անոնց համար ըսի թէ հսրայէլի որդիներուն մէջ ժառանգութիւն պիտի չունենան»:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐՈՒՆ ՏԱՍԱՆՈՐԴԸ

25 *Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով.* **26** «Սա՛պէս խօսէ Ղետացիներուն եւ ըսէ՛ անոնց. “Երբ հսրայէլի որդիներէն տասանորդը առնէք՝ որ անոնցմէ ծեզի տուի իբր ժառանգութիւն, անկէ բարձրացնելիք ընծայ՝ մը մատուցանեցէք *Տէրոց, այսինքն* տասանորդին մէկ տասներորդը: **27** *Այս* ծեր բարձրացնելիք ընծան՝ կալի ցորենի պէս ու հնծանի ՚արդիւնքի պէս պիտի սեպուի ծեզի: **28** *Այսպէս՝ դո՛ւք* ալ բարձրացնելիք ընծայ պիտի մատուցանէք *Տէրոց, հսրայէլի որդիներէն ծեր ստացած բոլոր տասանորդներէն.* Ահարոն քահանային տուէք *Տէրոց բարձրացնելիք ընծան,* **որ** անոնցմէ *պիտի մատուցանէք:* **29** *Տէրոց ամբողջ բարձրացնելիք ընծան մատուցանեցէք ծեզի եղած բոլոր պարգևներէն, անոնց ընտրելագոյնէն, անոնց սուրբ մասէն: **30** Ուստի ըսէ՛ անոնց. “Երբ անոնց ընտրելագոյնէն ՚մատուցանէք, *մնացածը* կալի բերքի պէս եւ հնծանի բերքի պէս պիտի սեպուի Ղետացիներուն: **31** *Ամէ՛ն տեղ կերէք զայն,* դուք ու ծեր ընտանիքները. որովհետեւ ան ծեր վարձք է՝ Հանդիպումի վրանին մէջ ծեր *ընելիք* ծառայութեան փոխարէն: **32** *Անոնց ընտրելագոյնը ՚մատուցանելէն ետք՝ անոնց համար մեղք պիտի չկրէք, եւ հսրայէլի որդիներուն սուրբ բաները պիտի չպղծէք ու պիտի չմեռնիք:*»:*

ԿԱՐՄԻՐ ԵՐԻՆՉԻՆ ՄՈԽԻՐԸ

19

Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով. **2** «Ահա՛ասիկ օրէնքին կանոնը, որ *Տէրը պատուիրեց՝ ըսելով.* “Խօսէ՛ հսրայէլի որդիներուն՝ որ քեզի շէկ, անարատ երինջ մը բերեն, որ ո՛չ մէկ արատ ունենայ եւ որուն վրայ բնաւ լուծ դրուած չըլլայ: **3** Եղիազար քահանային տուէք զայն, որպէսզի բանակավայրէն դուրս հանէ զայն եւ իր առջեւ մորթեն զայն: **4** Եղիազար քահանան իր մատով անոր արիւնէն թող առնէ ու դէպի Հանդիպումի վրանին առջեւի կողմը՝ եօթը անգամ սրսկէ անոր արիւնէն: **5** Յետոյ իր աչքերուն առջեւ երինջը թող այրեն. անոր մորթը, միսը եւ արիւնը թող այրեն՝ թրիքին հետ: **6** Քահանան մայրիի փայտ, զոպայ եւ կրկնակի կարմիր թող առնէ, ու երինջը այրող *կրակին* մէջ նետէ: **7** Քահանան իր հագուստները եւ մարմինը ջուրով թող լուայ, յետոյ բանակավայրը մտնէ. քահանան մինչեւ իրիկուն անմաքուր պիտի ըլլայ: **8** Զայն այրողն ալ իր հագուստներն ու մարմինը ջուրով թող լուայ, եւ մինչեւ իրիկուն անմաքուր ըլլայ: **9** Մաքուր մարդ մը երինջին մոխիրը թող հաւաքէ ու բանակավայրէն դուրս՝ մաքուր տեղ մը զետեղէ. հսրայէլի որդիներուն համայնքին համար պիտի պահուի ան՝ իբր ՚մաքրութեան ջուր. ասիկա մեղքի պատարագ է: **10** Երինջին մոխիրը հաւաքողը իր հագուստները թող

^հ *Երը՝ լիութեան*

^ւ *Երը՝ բարձրացնէք*

^{իւ} *Երը՝ բարձրացնելէն*

^{ւա} *Երը՝ կեղտոտութեան*

լուայ ու մինչեւ իրիկուն անմաքուր ըլլայ: Ասիկա հսրայէլի որդիներուն եւ անոնց մէջ պանդիստացած գաղթականին համար յաւիտենական կանոն պիտի ըլլայ□»:

ԴԻԱԿԻ ՄԸ ՀՊՈՒՄԸ

11 «Ո՞վ որ մեռած մարդու մը մարմինին դպչի, եօթը օր անմաքուր պիտի ըլլայ: 12 Երրորդ օրը թող՝ մաքրուի անով, ու եօթներորդ օրը մաքրուած պիտի ըլլայ. բայց եթէ երրորդ օրը չմաքրուի, եօթներորդ օրը մաքրուած պիտի չըլլայ: 13 Ո՞վ որ մեռած մարդու մարմինին դպչի եւ չմաքրուի, Տէրոց խորանը կը պղծէ. այդ անձը հսրայէլէն պիտի բնաջնջուի: Արդարեւ անոր վրայ մաքրութեան ջուրը սրսկուած չէ, ան անմաքուր է. իր անմաքրութիւնը տակաւին իր վրայ է: 14 Ահա՛ասիկ օրէնքը՝ երբ մարդ մը վրանի մէջ մեռնի. — ո՞վ որ այդ վրանին մէջ մտնէ եւ ամէն ինչ որ այդ վրանին մէջ է՝ եօթը օր անմաքուր պիտի ըլլայ: 15 Ամէն բաց անօթ՝ որ իր վրայ կապուած կափարիչ չունի, անմաքուր պիտի ըլլայ: 16 Ո՞վ որ դպչի բաց դաշտի մէջ՝ սուրով սպաննուածի մը, կամ բնական մահով մեռածի մը, կամ մարդու ոսկորի մը եւ կամ գերեզմանի մը, եօթը օր թող անմաքուր ըլլայ: 17 Անմաքուր եղողին համար՝ մեղքի պատարագի համար այրուած երինջին մոխիրէն թող առնեն, ու վրան կենսաւէտ ջուր դնեն՝ անօթի մը մէջ: 18 Մաքուր մարդ մը զոպայ թող առնէ, զայն ջուրի մէջ թաթխէ եւ սրսկէ վրանին վրայ ու բոլոր առարկաներուն վրայ, նաեւ հոն եղող մարդոց վրայ, ու ոսկորի մը, կամ սպաննուածի մը, կամ մեռածի մը, եւ կամ գերեզմանի մը դպչողին վրայ: 19 Մաքուր մարդը թող սրսկէ անմաքուրին վրայ՝ երրորդ օրը ու եօթներորդ օրը, եւ եօթներորդ օրը զայն մաքրէ: Ան ալ իր հագուստները թող լուայ, ջուրով լուացուի, ու իրիկունը մաքրուած պիտի ըլլայ: 20 Բայց այն մարդը որ անմաքուր ըլլալէ ետք չի մաքրուիր, այդ անձը համախմբումին մէջէն պիտի բնաջնջուի, որովհետեւ Տէրոց սրբարանը պղծեց. անոր վրայ մաքրութեան ջուրը չսրսկուեցաւ, ան անմաքուր է: 21 Ասիկա յաւիտենական կանոն մը պիտի ըլլայ անոնց, որ մաքրութեան ջուրը սրսկողը իր հագուստները լուայ, եւ մաքրութեան ջուրին դպչողը մինչեւ իրիկուն անմաքուր ըլլայ: 22 Անմաքուրը ի՞նչ բանի որ դպչի՝ անմաքուր պիտի ըլլայ, ու անոր դպչող անձը մինչեւ իրիկուն անմաքուր պիտի ըլլայ□»:

ԴԵՊԵՐ ԿԱՂԷՍԻ ՄԷՋ

(Ելք. 17. 1-7)

20

հսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը Սինի անապատը հասաւ առաջին ամիսը, եւ ժողովուրդը կարէս կեցաւ: Մարիամ հոն մեռաւ ու հոն թաղուեցաւ:

2 Համայնքին խմելու ջուր չկար, ուստի Մովսէսի դէմ եւ Ահարոնի դէմ համախմբուեցան: 3 ժողովուրդը Մովսէսի հետ վիճեցաւ, ու խօսեցան՝ ըսելով. «Երանի՛թէ մենք ալ մեր շունչը տուած ըլլայինք, երբ մեր եղբայրները իրենց շունչը տուին Տէրոց առցեւ: 4 Ինչո՞ւ Տէրոց համախմբումը այս անապատը բերիք, որ մենք եւ մեր

^բ Եբր.՝ մեղքէ մաքրուի

^գ Այսինքն՝ մաքրութեան ջուրով

^դ Եբր.՝ դաշտի մակերեսը

^ե Այսինքն՝ ակի

անասունները հոս մեռնինք: **5** Ինչո՞ւ մեզ Եգիպտոսէն բարձրացուցիք՝ մեզ այս վատ տեղը բերելու համար: **Հոս** ո՞չ սերմ **ցանելու** տեղ է, ո՞չ ալ՝ թզենիներու, որթատունկերու եւ նոնենիներու. խմելու ջուր անգամ չկայ»: **6** Մովսէս ու Ահարոն համախմբումին առջեւէն **ելլելով** Հանդիպումի վրանին մուտքը գացին եւ իրենց երեսին վրայ ինկան, ու **Տէրոց** փառքը իրենց երեւցաւ:

7 **Տէրը** խօսեցաւ **Մովսէսի՝ ըսելով.** **8** «Ա՛ն գաւազանը եւ համախմբէ՛ համայնքը, դուն ու քու եղբայրդ՝ Ահարոն, եւ անոնց աշքերուն առջեւ խօսեցէ՛ք ժայռին, ու իր ջուրը պիտի տայ: Դուն ժայռէ՛ն ջուր պիտի հանես անոնց, եւ համայնքին ու անոնց անասուններուն խմցնես»: **9** **Մովսէս** **Տէրոց** առջեւէն առաւ գաւազանը, ինչպէս իրեն պատուիրեց: **10** **Մովսէս** եւ Ահարոն համախմբումը ժայռին առջեւ ՚հաւաքեցին, ու անոնց ըսաւ. «Մտի՛կ ըրէք այժմ, **ո՞վ** անհնազանդներ. ծեզի այս ժայռէ՛ն ջուր հանենք»: **11** Ապա **Մովսէս** իր ծեռքը վերցուց, եւ իր գաւազանով երկու անգամ ժայռին զարկաւ: Զուրը առատօրէն դուրս ելաւ, ու համայնքը եւ անոր անասունները խմեցին:

12 **Տէրը** խօսեցաւ **Մովսէսի** ու Ահարոնի. «Որովհետեւ ինձի չհաւատացիք՝ հսրայէլի որդիներուն աշքերուն առջեւ զիս ^բփառաւորելու համար, այս համախմբումը դո՛ւք պիտի չտանիք այն երկիրը՝ որ անոնց տուի»: **13** Այս է ^գՄերիպայի ջուրը. որովհետեւ հսրայէլի որդիները **Տէրոց** դէմ վիճեցան, եւ ինք սուրբ եղաւ անոնց մէջ:

ԵԴՈՎՄԻ ԹԱԳԱԽՈՐԸ Կ'ԱՐԳԻԼԷ ԻՍՐԱՅԵԼԻ ԱՆՑՔԸ

14 **Մովսէս** Կադէսէն պատգամաւորներ դրկեց Եդովմի թագաւորին **ու ըսաւ.** «Սա՛ կ'ըսէ քու եղբայրդ՝ հսրայէլ. «Մեզի պատահած ամբողջ տաժանքը գիտես. **15** ինչպէս մեր հայրերը Եգիպտոս իջան ու երկար ժամանակ Եգիպտոսի մէջ բնակեցանք: Եգիպտացիները չարչարեցին մեզ եւ մեր հայրերը, **16** ու երբ մենք **Տէրոց** աղաղակեցինք՝ լսեց մեր ծայնք. հրեշտակ մը դրկեց, մեզ Եգիպտոսէն հանեց, եւ ահա՛ մենք Կադէս ենք, քու հողամասիդ ծայրի քաղաքք: **17** Կ'աղերսենք, **թո՞ղ** որ անցնինք քու երկրէդ. արտերէն ու այգիներէն պիտի չանցնինք եւ հորերէն ջուր պիտի չխմենք. թագաւորին ճամբայէն պիտի քալենք, աջ կողմ կամ ձախ կողմ պիտի չշեղինք՝ մինչեւ որ քու հողամասէդ անցնինք[□]: **18** Բայց Եդովմ անոր ըսաւ. «Դիմ երկրէս» մի՛ անցնիր, որպէսզի սուրով դուրս չելլեմ քու դիմացդ»: **19** Հսրայէլի որդիները ըսին անոր. «Մենք պողոտայէ՛ն պիտի բարձրանանք. եթէ ես ու իմ խաշինքս քու ջուրէդ խմենք, անոր գինը պիտի վճարեմ. առանց ուրիշ բան մը ընելու՝ միայն ոտքերովս պիտի անցնիմ»: **20** Բայց ան ըսաւ. «Պիտի չանցնինք». ու Եդովմ մեծ բազմութեամբ եւ ուժեղ ծեռքով դուրս ելաւ անոնց դիմաց: **21** Այսպէս՝ Եդովմ մերժեց իր հողամասէն հսրայէլի ճամբայ տալ. ուստի հսրայէլ շեղեցաւ անկէ:

ԱՀԱՐՈՆԻ ՄԱՍԸ

22 Կադէսէն մեկնեցան, ու հսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը **Հովր լեռը** հասաւ:

^ա **Եբր.**՝ համախմբեցին

^բ **Եբր.**՝ սրբացնելու

^գ **Այսինքն**՝ Վիճաբանութեան

^դ **Եբր.**՝ Ինձմէ

23 Տէրը խօսեցաւ Մովսէսի եւ Ահարոնի՝ Հովր լեռը, Եղովմի Երկրին սահմանին քով, լսելով. **24** «Ահարոն իր ժողովուրդին մէջ պիտի ամփոփուի. արդարեւ պիտի չմտնէ այն Երկիրը՝ որ Իսրայէլի որդիներուն տուի, քանի որ Մերիապայի ջուրին քով իմ հրամանիս դէմ ընդունեցաք: **25** Ահարոնը եւ անոր որդին՝ Եղիազարը ա՛ն, ու Հովր լեռը բարձրացուր գանոնք: **26** Ահարոնը իր հագուստներէն մերկացո՞ւր, եւ անոր որդիին՝ Եղիազարի՝ հագուր գանոնք. որովհետեւ Ահարոն **իր ժողովուրդին մէջ** պիտի ամփոփուի, ու հո՞ն մեռնի»: **27** Մովսէս Տէրոց պատուիրածին համաձայն ըրաւ, եւ ամբողջ համայնքին աշքերուն առջեւ Հովր լեռը բարձրացան: **28** Մովսէս մերկացուց Ահարոնը իր հագուստներէն, ու անոր որդիին՝ Եղիազարի հագուց գանոնք: Ահարոն հոն մեռաւ, լերան գագաթը, իսկ Մովսէս ու Եղիազար լեռնէն իջան: **29** Երբ ամբողջ համայնքը տեսաւ թէ Ահարոն շունչը տուած է, Իսրայէլի ամբողջ տունը երեսուն օր լացաւ Ահարոնի համար:

ՅԱՂԹԱՆԱԿ ՔԱՆԱՆԱՑԻՆԵՐՈՒԻՆ ՎՐԱՅ

21

Հարաւային կողմը բնակող Արադի ^աքանանացի թագաւորը, լսելով թէ Իսրայէլ Աթարիմի ճամբայէն կու գայ, Իսրայէլի դէմ պատերազմեցաւ եւ անոնցմէ գերիներ տարաւ: **2** Ուստի Իսրայէլ Տէրոց ուխտ ըրաւ ու ըսաւ. «Եթէ այս ժողովուրդը իմ ձեռքս մատնես, անոնց քաղաքները պիտի ^բնզովեմ»: **3** Տէրը Իսրայէլի ծայնը լսեց, եւ Քանանացիները **անոր ձեռքը** մատնեց: **իսրայէլ** նզովեց գանոնք ու անոնց քաղաքները, եւ այդ տեղին անունը ^գՀորմա կոչեց:

ՊՐԻՆՉԵ ՕՉԸ

4 Հովր լեռնէն մեկնեցան՝ Կարմիր ծովուն ճամբայով, Եղովմի Երկրին շուրջը դառնալու համար, եւ ճամբան ժողովուրդին ^հսիրտը վհատեցաւ: **5** Ժողովուրդը Աստուծոյ դէմ ու Մովսէսի դէմ խօսեցաւ. «Ինչո՞ւ մեզ Եգիպտոսէն բարձրացուցիք, որ անապատին մէջ մեռնինք. քանի որ հաց չկայ, ջուր չկայ, եւ այս չնչին հացէն մեր ^եսիրտը զգուեր է»: **6** Ուստի Տէրը ժողովուրդին վրայ կիզող օձեր ղրկեց, որոնք խածին ժողովուրդը, ու Իսրայէլէն շատ ժողովուրդ մեռաւ: **7** Ժողովուրդը Մովսէսի եկաւ եւ ըսաւ. «Մեղանչեցինք՝ Տէրոց դէմ ու քեզի դէմ խօսելով. աղօթէ՛ Տէրոց, որ մեր վրայէն հեռացնէ օձերը»: Մովսէս ժողովուրդին համար աղօթեց, **8** եւ Տէրը Մովսէսի ըսաւ. «Քեզի կիզող օ՛ձ մը շինէ, ու զայն ձողի՛ մը վրայ դիր: Ո՛վ որ խածնուի եւ անոր նայի՛ ողջ պիտի մնայ»: **9** Մովսէս պղինձէ օծ մը շինեց ու զայն ձողի մը վրայ դրաւ: Երբ օծ մը մարդ մը խածնէր եւ ան պղինձէ օծին նայէր՝ ^ակ'առողջանար:

^ա Կամ՝ Քանանիս

^բ Այսինքն՝ աւերեմ

^գ Այսինքն՝ նզովք, կամ՝ աւերում

^հ Երբ.՝ անձը

^ի Երբ.՝ անձը

^ո Երբ.՝ ողջ կը մնար

ՀՈՎՐ ԼԵՌՆԷՆ ԴԵՊԻ ՄՈՎԱԲԻ ՀՈՎԻՏԸ

10 Իսրայէլի որդիները մեկնեցան, եւ Ոբովթի մէջ բանակեցան: **11** Ոբովթէն մեկնեցան, ու Իյէ-Աբարիմի մէջ բանակեցան, Մովաբի դիմաց եղող անապատին մէջ՝ դէպի արեւելեան կողմը: **12** Անկէ ալ մեկնեցան եւ Զարեղի ձորին մէջ բանակեցան:

13 Անկէ մեկնեցան ու բանակեցան Առնոնի միւս կողմը, որ Ամորհացիներու հողամասէն դուրս ելելով անապատին մէջէն **Կ'անցնի**. արդարեւ Առնոն Մովաբացիներու սահմանն է, Մովաբացիներուն եւ Ամորհացիներուն մէջտեղ: **14** Ասոր համար Տէրոց Պատերազմներու գիրքին մէջ ըսուած է.

«Սուֆայի մէջ Վահէպը,

Ու Առնոնի ձորերը,

15 Եւ ձորերուն յործանքը՝

Որ Կ'երկարի դէպի Արի հբնակավայրը,

Ու կը կոթնի Մովաբի սահմանին վրայ»:

16 Անկէ Զրհորը **Եկան**: Ասիկա այն ջրհորն է, որուն համար Տէրը ըսեր էր Մովսէսի. «Հաւաքէ՛ ժողովուրդը, ու ես անոնց ջուր պիտի տամ»: **17** Այն ատեն իսրայէլ սա՛ երգը երգեց.

«Ո՛վ հոր, բխէ՛. թխմբերգեցէ՛ք անոր:

18 Իշխանաւորները փորեցին հորը,

Ժողովուրդին ազնուականները՝ օրէնսդրին **հրամանով**.

Իրենց ցուպերով փորեցին զայն»:

19 Անապատէն Մաթանա **գացին**, Մաթանայէն Նահալիէլ, Նահալիէլէն Բամոթ, **20** Եւ Բամոթէն Մովաբի դաշտավայրին մէջ եղող հովիտը, Փասգայի գագաթը, որ դէպի Եսիմոն կը նայի:

ՅԱՂԹԱՆԱԿ ՍԵՆՈՆ ԵՒ ՈՎԳ ԹԱԳԱԽՈՐՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

21 Իսրայէլ պատգամաւորներ դրկեց Ամորհացիներու Սեհոն թագաւորին՝ ըսելով. **22** «**Թո՞ղ** որ երկրէդ անցնինք. արտերու կամ այգիներու մէջ պիտի չշեղինք, հորի ջուրերէն պիտի չխմենք. թագաւորին ճամբայէն պիտի քալենք՝ մինչեւ որ քու հողամասէդ անցնինք»: **23** Բայց Սեհոն չթոյլատրեց որ իսրայէլ իր հողամասէն անցնի. հապա Սեհոն իր ամբողջ ժողովուրդը հաւաքեց, ու դէպի անապատը դուրս ելաւ՝ իսրայէլի դիմաց. Յասսա եկաւ, եւ իսրայէլի դէմ պատերազմեցաւ: **24** Իսրայէլ սուրի բերանէ անցուց զայն ու տիրացաւ անոր երկրին, Առնոնէն մինչեւ Յաքով, մինչեւ Ամմոնի որդիներուն **երկիրը**, որովհետեւ Ամմոնի որդիներուն սահմանը ամուր էր: **25** Իսրայէլ այս բոլոր քաղաքները առաւ, եւ իսրայէլ Ամորհացիներուն բոլոր քաղաքները բնակեցաւ, Եսեբոն ու անոր բոլոր հգիտերուն մէջ: **26** Արդարեւ Եսեբոն Ամորհացիներու Սեհոն թագաւորին քաղաքն էր,

^է **Եբր.**՝ բնակութիւնը

^թ **Եբր.**՝ բարձրացի՛ր

^թ **Եբր.**՝ պատասխանելով **երգեցէ՛ք**

^ժ **Կամ**՝ անապատը

^ի **Եբր.**՝ աղջիկներուն

որովհետեւ ան Մովաքի նախկին թագաւորին դէմ պատերազմելով՝ անոր ձեռքէն առած էր անոր ամբողջ երկիրը, մինչեւ Առնոն: **27** Ասոր համար առակախօսները կ'ըսեն.

«Եսեքո՞ն եկէք.

Սեհոնի քաղաքը թող կառուցանուի եւ պատրաստուի.

28 Որովհետեւ Եսեքոնէն կրակ ելաւ

Ու Սեհոնի բերդաքաղաքէն՝ բոց.

Մովաքի Արք սպառեց,

Եւ Առնոնի բարձր տեղերուն տէրերը:

29 Վայ քեզ, Մովաք,

Ով Քամովսի ժողովուրդ, կորսուեցա՛ր.

Իր ազատած որդիներն ու աղջիկները՝

Ամորհացիներու Սեհոն թագաւորին գերութեան տուաւ.

30 Անոնց վրայ Շետեր արձակեցինք.

Եսեքոն կորսուեցաւ մինչեւ Դեբոն,

Եւ ամայացուցինք զանոնք

Մինչեւ Նոփա, որ Մեդաբայի քով է»:

31 Այսպէս՝ հսրայէլ Ամորհացիներուն երկրին մէջ բնակեցաւ: **32** Մովսէս մարդ դրկեց Յազերը լրտեսելու, եւ անոր գիւղերը գրաւեցին, ու հոն եղող Ամորհացիները վտարեցին:

33 Յետոյ դարձան ու Բասանի ճամբան բարձրացան: Բասանի Ովգ թագաւորը դուրս ելաւ՝ անոնց դիմաց, ինք եւ իր ամբողջ ժողովուրդը, Եդրայի մէջ պատերազմելու: **34**

Տէրը Մովսէսի ըսաւ. «Մի՛ վախնար անկէ, քանի որ քու ձեռքդ մատնեցի զայն, անոր ամբողջ ժողովուրդն ու անոր երկիրը. ըրէ՛ անոր, ինչպէս Եսեքոն բնակող Ամորհացիներու Սեհոն թագաւորին ըրիր»: **35** Այսպէս զարկին զայն, անոր որդիներն ու անոր ամբողջ ժողովուրդը, մինչեւ որ ո՛չ մէկ մնացորդ ժողովուրդն անկէ, եւ անոր երկրին տիրացան:

ՄՈՎԱՔԻ ԹԱԳԱԽՈՐԸ ՊԱՏԳԱՍԱԻՈՐ ԿԸ ՂՐԿԵ ԲԱՂԱՍՄԻ

22

Հսրայէլի որդիները մեկնեցան ու Մովաքի դաշտերուն մէջ բանակեցան, Յորդանանի միւս կողմը՝ Երիքովի դիմաց:

2 Սեպիորի որդին՝ Բաղակ տեսաւ ամէն ինչ որ հսրայէլ ըրաւ Ամորհացիներուն: **3**

Մովաք չափազանց վախցաւ ժողովուրդէն, որովհետեւ բազմաթիւ էր, ու Մովաք հսրայէլի ահաբեկեցաւ: **4** Ուստի Մովաք Մադիամի երէցներուն ըսաւ. «Հիմա այս

համախմբումը մեր շուրջը եղող ամէն ինչ պիտի ճարակէ, ինչպէս եզր դաշտին խոտը կը ճարակէ»: Այդ ատեն Սեպիորի որդին՝ Բաղակ Մովաքի թագաւորն էր: **5** ^բԲէովրի որդիին՝

Բաղաամի պատգամաւորներ դրկեց Փաթուր քաղաքը, (որուն ժողովուրդին որդիներուն երկիրը՝ Գետին եզերքն էր), զայն կանչելու եւ ըսելու. «Ահա՛ Եգիպտոսէն ժողովուրդ մը ելաւ, ահա՛ երկրին մակերեսը ծածկեց ու իմ դիմացս կը բնակի: **6** Ուստի հիմա կ'աղերսե՛մ, եկո՛ր եւ ինծի համար անհծէ՛ այս ժողովուրդը, քանի որ ան ինձմէ հզօր է. թերեւս կարենամ զայն զարնել, ու երկրէն զայն վոնտեմ. որովհետեւ գիտեմ թէ քու

^ա **Երր.**՝ որդիներուն երեսէն

^բ **Կամ** Փաթուր քաղաքը պատգամաւորներ դրկեց Բէովրի որդիին՝ Բաղաամի, որուն հայրենիքը Գետին եզերքն էր

^գ **Երր.**՝ աչքը

օրհնածդ օրհնեալ է, եւ քու անիծածդ՝ անիծեալ»:

7 Մովաբի երէցներն ու Մաղիամի երէցները գացին՝ իրենց ձեռքերուն մէջ դիւթութեան վարձքերով, Բաղաամի հասան, եւ Բաղակի խօսքերը հաղորդեցին անոր: **8** Ան ալ իրենց ըսաւ. «Այս գիշեր հո՞ս իջեւանեցէք, ու ձեզի լուր պիտի բերեմ՝ ի՞նչպէս որ Տէրը ինծի խօսի»: Ուստի Մովաբի իշխանաւորները Բաղաամի քով մնացին: **9** Աստուած Բաղաամի եկաւ եւ ըսաւ. «Ո՞վ են այդ մարդիկը՝ որ քովի են»: **10** Բաղաամ Աստուծոյ ըսաւ. «Մովաբի թագաւորը՝ Սեպիորեան Բաղակ ինծի դրկեց ասոնք՝ ըսելով. **11** “Ահա՝ Եգիպտոսէն ելլող ժողովուրդը երկրին մակերեսը ծածկեց. հիմա եկո՛ր ու ինծի համար անիծէ՛ զայն. թերեւս կարենամ անոր դէմ պատերազմիլ եւ զայն վոնտել»: **12** Աստուած Բաղաամի ըսաւ. «Ասոնց հետ մի՛ երթար ու ժողովուրդը մի՛ անիծեր, որովհետեւ ան օրհնեալ է»: **13** Բաղաամ առտուն ելաւ եւ Բաղակի իշխանաւորներուն ըսաւ. «Դուք ձեր երկիրը գացէք, որովհետեւ Տէրը կը մերժէ որ ձեզի հետ երթամ»: **14** Մովաբի իշխանաւորները կանգնեցան, Բաղակի եկան ու ըսին. «Բաղաամ մերժեց մեզի հետ գալ»:

15 Բաղակ Պվերստին իշխանաւորներ դրկեց, անոնցմէ աւելի շատ եւ աւելի պատուաւոր: **16** Ասոնք Բաղաամի հասան ու անոր ըսին. «Սեպիորի որդին՝ Բաղակ սա՛ կ’ըսէ. “Կ’աղերսէ՛մ, ինծի գալէ մի՛ արգիլուիր. **17** քանի որ քեզ շատ պիտի պատուեմ, եւ ինծի ինչ որ ըսես՝ պիտի ընեմ: Ուստի կ’աղերսէ՛մ, եկո՛ր, անիծէ՛ այս ժողովուրդը ինծի համար»: **18** Բաղաամ պատասխանեց Բաղակի ծառաներուն. «Եթէ Բաղակ իր տունն ալ տայ ինծի՛ արծաթով ու ոսկիով լեցուած, Տէրոց՝ իմ Աստուծոյս հրամանը չեմ կրնար անտեսել, պզտիկ կամ մեծ բան մը ընելով: **19** Ուստի հիմա կ’աղերսէ՛մ, այս գիշեր դո՛ք ալ այստեղ կեցէք, որպէսզի գիտնամ թէ Տէրը ուրիշ ի՞նչ պիտի ըսէ ինծի»: **20** Աստուած գիշերը Բաղաամի եկաւ եւ անոր ըսաւ. «Եթէ մարդիկը եկած են քեզ կանչելու համար, կանգնէ՛, անոնց հետ գնա՛. բայց ինչ որ քեզի ըսեմ, միայն զայն ըրէ»:

ԲԱԴԱԱՄԻ ԷՇԸ ԿԸ ԽՈՍԻ

21 Բաղաամ առտուն ելաւ, իր էշը համետեց եւ Մովաբի իշխանաւորներուն հետ գնաց: **22** Բայց Աստուծոյ բարկութիւնը բորբոքեցաւ՝ քանի որ գնաց, ու Տէրոց հրեշտակը ճամբային վրայ կայնեցաւ՝ անոր ընդդիմանալու համար, **մինչ** իր իշուն վրայ հեծած էր եւ իր երկու սպասաւորները իրեն հետ էին: **23** Էշը տեսաւ Տէրոց հրեշտակը, որ ճամբային մէջ կայնած էր՝ մերկ սուրը իր ձեռքին մէջ. ուստի էշը ճամբայէն շեղեցաւ եւ արտը մտաւ: Բաղաամ էշը ծեծեց, որպէսզի ճամբան վերադարձնէ զայն: **24** Իսկ Տէրոց հրեշտակը այգիներուն արահետին մէջ կայնեցաւ, **ուր** մէկ կողմէն ցանկապատ ու միւս կողմէն ցանկապատ կար: **25** Երբ էշը Տէրոց հրեշտակը տեսաւ, պատին քով սեղմուեցաւ եւ Բաղաամի ոտքը պատին դէմ սեղմեց. ան ալ վերստին ծեծեց զայն: **26** Տէրոց հրեշտակը անդին անցաւ ու նեղ տեղ մը կայնեցաւ, ուր աջ կողմը կամ ձախ կողմը շեղելու ճամբայ չկար: **27** Երբ էշը Տէրոց հրեշտակը տեսաւ, Բաղաամի տակ պառկեցաւ. Բաղաամի բարկութիւնը բորբոքեցաւ ու գաւազանով ծեծեց էշը: **28** Տէրը իշուն բերանը բացաւ, եւ ան Բաղաամի ըսաւ. «Ի՞նչ ըրի քեզի, որ այս երեք անգամ է որ զիս ծեծեցիր»: **29** Բաղաամ իշուն ըսաւ. «Քանի որ զիս անպատուեցիր. Երանի՛ թէ ծեռքս սուր մը ըլլար, որպէսզի հիմա քեզ մեռցնէի»: **30** Էշը Բաղաամի ըսաւ. «Միթէ ես քու էշդ չե՞մ, որուն վրայ կը հեծնէիր քու մանկութենէդ” մինչեւ այսօր. քեզի այսպէս ընելու սովորութիւն ունէի՛»: Ան ալ ըսաւ. «Ո՛չ»: **31** **Այն ատեն** Տէրը բացաւ Բաղաամի աչքերը, ու երբ տեսաւ

^a **Երբ.**՝ անգամ մըն ալ վերստին

^b **Կամ** քուկող ըլլալէս

թէ Տէրոց հրեշտակը ճամբային վրայ կայնած էր՝ մերկ սուրը իր ձեռքին մէջ, խոնարհեցաւ եւ իր դէմքին վրայ երկրպագեց: **32** Տէրոց հրեշտակը անոր ըսաւ. «Ինչո՞ւ այս երեք անգամ է որ էշդ ծեծեցիր: Ահա՛ ես դուրս ելայ որ քեզի ընդդիմանամ, որովհետեւ **քու** ճամբադ ուղիղ չէ իմ առջեւս: **33** Էշը զիս տեսաւ ու այս երեք անգամ է որ առջեւէս շեղեցաւ: Եթէ ան առջեւէս չշեղէր, հիմա քեզ **անշուշտ** մեոցուցած պիտի ըլլայի, իսկ զայն՝ ողջ պահած»: **34** Բաղաամ Տէրոց հրեշտակին ըսաւ. «Մեղանչեցի, քանի որ չէի գիտեր թէ ճամբային վրայ կայնած էիր՝ իմ դիմացս. ուստի հիմա վերադառնամ, եթէ քեզի անհաճոյ” է **իմ երթալս»:** **35** Տէրոց հրեշտակը Բաղաամի ըսաւ. «Գնա՛ այդ մարդոց հետ. բայց այն խօսքը որ քեզի պիտի ըսեմ, միայն զայն ըսէ»: Ուստի Բաղաամ գնաց Բաղակի իշխանաւորներուն հետ:

ԲԱՂԱԿ ԿՇՆԴՈՒՆԻ ԲԱՂԱԱՍԸ

36 Երբ Բաղակ լսեց թէ Բաղաամ կու գայ, զայն դիմաւորելու համար դուրս ելաւ մինչեւ **իր** սահմանը եղող Առնոն գետից քովի Մովաբացիներուն մէկ քաղաքը, որ հողամասին ծայրն է: **37** Բաղակ Բաղաամի ըսաւ. «Ձեզ կանչելու համար պատգամաւորներ չղրկեցի՞ քեզի. ինչո՞ւ չեկար ինծի: Ի՞րապէս չեմ կրնար քեզ պատուել»: **38** Բաղաամ Բաղակի ըսաւ. «Ահա՛ եկայ քեզի. **բայց** հիմա կրնա՞մ որեւէ բան ըսել: Աստուած իմ բերանս ինչ խօսք որ դնէ, զայն պիտի ըսեմ»: **39** Բաղաամ Բաղակի հետ գնաց, ու Կարիաթ-Հուսովթ հասան: **40** Բաղակ արջաներ եւ ոչխարներ զոհեց, ու Բաղաամի եւ անոր հետ եղող իշխանաւորներուն դրկեց:

41 Առտուն՝ Բաղակ առաւ Բաղաամը ու Բահաղի բարձր տեղերը հանեց զայն, որ անկէ ժողովուրդին ծայրը տեսնէ:

ԲԱՂԱԱՍԻ ԱՊԱՋԻՆ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

23

Բաղաամ Բաղակի ըսաւ. «Այստեղ ինծի ե՞օթը զոհասեղան կառուցանէ, եւ այստեղ ինծի եօ՛թը զուարակ ու եօ՛թը խոյ պատրաստէ»: **2** Բաղակ Բաղաամի ըսածին համածայն ըրաւ, եւ Բաղակ ու Բաղաամ **իլրաքանչիլր** զոհասեղանի վրայ զուարակ մը եւ խոյ մը մատուցանեցին: **3** Ապա Բաղաամ Բաղակի ըսաւ. «Դուն ողջակէզի՞ քով կայնէ, իսկ ես պիտի երթամ. թերեւս Տէրը ինծի հանդիպի, եւ ինչ որ ինծի ցոյց տայ՝ քեզի պիտի իմացնեմ»: ու **բլրակ** մը գնաց: **4** Աստուած Բաղաամի հանդիպեցաւ, ու **Բաղաամ** անոր ըսաւ. «Եօթը զոհասեղան պատրաստեցի, եւ **իլրաքանչիլր** զոհասեղանի վրայ զուարակ մը ու խոյ մը մատուցանեցի»: **5** Տէրը Բաղաամի բերանը խօսք որաւ եւ ըսաւ. «Վերադարձիր Բաղակի, եւ այսպէս խօսէ»: **6** Վերադարձաւ անոր, ու ահա՛ ան իր ողջակէզին քով կայնած էր, ինք եւ Մովաբի բոլոր իշխանաւորները: **7** Ուստի իր առակը սկսելով՝ ըսաւ.

«Մովաբի թագաւորը՝ Բաղակ, զիս **Արամէն**՝

^գ **Երը.**՝ Երեսէս

^է **Երը.**՝ աչքերուդ գէշ

^ա **Կամ** բաց տեղ

^բ **Այսիհքըն**՝ Սուլիիայէն

Արեւելեան լեռներէն՝ գբերաւ, ըսելով.

“Եկո՛ւր, Յակո՛րը անհծէ ինծի համար,

Եկո՛ւր, Իսրայէլը բանադրէ՛:

8 Աստուծոյ չանհծածը ի՞նչպէս անհծեմ,

Կամ Տէրոց չբանադրածը ի՞նչպէս բանադրեմ.

9 Որովհետեւ վէմերուն գագաթէն կը տեսնեմ զայն,

Ու բլուրներէն կը նայիմ անոր.

Ահա՛ այս ժողովուրդը առանձին պիտի բնակի,

Եւ ազգերուն հետ պիտի չհաշուուի:

10 Ո՞վ կրնայ համրել Յակորի ո՞հողը,

Ու իսրայէլի քառորդին թիւը:

Իմ անձս ուղիղ ներուն մահով թող մեռնի,

Եւ իմ վախճանս անոնց վախճանին նման ըլլայ»:

11 Բաղակ Բաղաամի ըսաւ. «Այդ ի՞նչ ըրիր ինծի. Ես քեզ բերի իմ թշնամիներս անհծելու, Եւ ահա՛ դուն բոլորովին օրհնեցիր»: 12 Ան ալ պատասխանեց. «Միթէ ուշադիր պիտի չըլլա՞մ՝ ըսելու ինչ որ Տէրը իմ բերանս կը դնէ»:

ԲԱՂԱԱՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

13 Բաղակ դարձեալ անոր ըսաւ. «Կ'աղերսե՞մ, ինծի հետ ուրի՛շ տեղ մը եկուր, որպէսզի անկէ տեսնես զանոնք: Միայն անոնց ծայրը պիտի տեսնես. զանոնք բոլորը պիտի չտեսնես: Անկէ՛ զանոնք անհծէ ինծի համար»: 14 Զայն տարաւ Սովիմի արտը, ։Փասգայի գագաթը, ու եօթը զոհասեղան կառուցանեց Եւ իւրաքանչիւր զոհասեղանի վրայ գուարակ մը ու խոյ մը մատուցանեց: 15 Բաղաամ Բաղակի ըսաւ. «Դուն հո՞ս կայնէ՛ ողջակէզիդ քով, իսկ Ես հոն Տէրոց պիտի հանդիպիմ»: 16 Տէրը Բաղաամի հանդիպեցաւ, անոր բերանը խօսք դրաւ ու ըսաւ. «Վերադարձի՛ր Բաղակի, Եւ այսպէս ըսէ»: 17 Երբ եկաւ անոր, ահա՛ ան իր ողջակէզին քով կայնած էր. Մովարի իշխանաւորներն ալ անոր հետ էին: Բաղակ անոր ըսաւ. «Տէրը ի՞նչ խօսեցաւ»: 18 Ան ալ իր առակը սկսելով՝ ըսաւ.

«Կանգնէ՛, ո՞վ Բաղակ, ու մտի՛կ ըրէ:

Ո՞վ Սեպիորի որդի, ունկնդրէ՛ ինծի:

19 Աստուած մարդ չէ՛ որ ստէ,

Ո՛չ ալ մարդու որդի՛ որ գղջայ.

Իր ըսածը պիտի չընէ՛:

Կամ իր խօսածը պիտի չհաստատէ՛:

20 Ահա՛ օրհնելու հրաման ստացայ.

Ինք օրհնեց, ու Ես չեմ կրնար գիափանել:

21 Յակորի վրայ անօրէնութիւն չնկատեց,

Ո՛չ ալ իսրայէլի վրայ անիրաւութիւն տեսաւ.

Տէրը՝ անոր Աստուածը իրեն հետ է,

^գ Երը.՝ առաջնորդեց

^դ Կամ՝ փոշին

^ե Կամ՝ բլուրին

^գ Երը.՝ Ետ դարձնել

Եւ անոր մէջ թագաւորի "ցնծութեան ձայն" կայ:

22 Աստուած հանեց զանոնք Եգիպտոսէն.

Ան բգոմէշի պէս ՞ոյժ ունի:

23 **Արդարեւ** Յակոբի դէմ հմայութիւն չ'ըլլար,

Ու հսրայէլի դէմ՝ դիւթութիւն:

Յակոբի եւ հսրայէլի մասին՝ ժամանակին

Պիտի ըսուի թէ "Աստուած ինչե՛ր ըրաւ՛:

24 Ահա՝ **այս** ժողովուրդը մատակ առիւծի պէս պիտի կանգնի,

Առիւծի պէս պիտի բարձրանայ.

Պիտի չպառկի՝ մինչեւ որ որսը չուտէ

Եւ սպաննուածներուն արհւնը չխմէ»:

25 Բաղակ Բաղաամի ըսաւ. «Ո՛չ անիծէ զանոնք, ո՛չ ալ՝ օրհնէ»: **26** Բաղաամ պատասխանելով՝ Բաղակի ըսաւ. «Միթէ քեզի չըսի⁹. "Ինչ որ Տէրը խօսի, զայն պիտի ընեմ՛»:

ԲԱՂԱԱՄԻ ԵՐՐՈՐԴ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

27 Բաղակ Բաղաամի ըսաւ. «Կ'աղերսե՞մ, եկո՞ւր, ուրի՛շ տեղ մը տանիմ քեզ. թերեւս ՝Աստուած հաճի» որ անկէ անիծես զանոնք ինծի համար»: **28** Ուստի Բաղակ տարաւ Բաղաամը Փէովրի գագաթը, որ դէպի Եսիմոն կը նայի: **29** Բաղաամ Բաղակի ըսաւ. «Այստեղ ինծի եօթը զոհասեղան կառուցանէ, եւ այստեղ ինծի եօթը զուարակ ու եօթը խոյ պատրաստէ»: **30** Բաղակ Բաղաամի ըսածին համաձայն ըրաւ, եւ **իրաքանչիւր** զոհասեղանի վրայ զուարակ մը ու խոյ մը մատուցանեց»:

24

Երբ Բաղաամ տեսաւ թէ Տէրը կը հաճի հսրայէլը օրհնել, **ալ** միս անգամներուն պէս հմայութիւններ ՚փնտոելու չգնաց, հապա իր երեսը դէպի անապատը դարձուց: **2** Բաղաամ աչքերը վերցնելով տեսաւ թէ հսրայէլ իր տոհմերուն կարգով **վրաններու տակ** բնակած է: Աստուծոյ Հոգին իր վրայ եկաւ, **3** եւ իր առակը սկսելով՝ ըսաւ.

«Բէովրի որդիին՝ Բաղաամի պատգամը,

Աչքը բաց մարդուն պատգամը,

4 Աստուծոյ խօսքերը լսողին,

Ամենակարողին տեսիլքը տեսնողին,

^է **Երր.**՝ գոչիւն

^ւ **Կամ**՝ միեղջերուի

^բ **Կամ**՝ փառք

^Ժ **Երր.**՝ Աստուծոյ առջեւ ուղիղ ըլլայ

^ա **Երր.**՝ դիմաւորելու

^բ **Կամ**՝ գոց

^գ **Երր.**՝ զօրաւոր մարդուն

ՎԵՐԱԳՈՒՄԻ ՄԷՉ ՀԱԿՈՂԻՆ

Ու իր աչքերը բացուողին պատգամը սա՛ է.-

5 Ո՞վ Յակոբ, քու վրաններդ,

Եւ ո՞վ հարայէլ, քու խորաններդ ի՞նչ լաւ են.

6 Զորերու պէս տարածուեցան,

Գետին **Եզերքը** եղող պարտէզներու պէս,

Տէրոց տնկած հալուէի ծառերուն

Ու ջուրին **Եզերքը** եղող մայրիններուն պէս են:

7 Անոր դոյլերէն ջուր պիտի հոսի,

Եւ անոր սերմը յորդառատ ջուրերու մէջ պիտի ըլլայ.

Անոր թագաւորը Ագագէ աւելի մեծ պիտի ըլլայ,

Ու թագաւորութիւնը բարձրանայ:

8 Աստուա՛ծ զայն Եգիպտոսէն հանեց:

Դոմէշի պէս նոյժ ունի.

Իրեն հակառակորդ ազգերը պիտի լափէ,

Անոնց ոսկորները պիտի կոտրտէ, եւ **Պանոնը** իր նետերով պիտի զարնէ»:

9 Առիւծի պէս ծոեցաւ, ու մատակ առիւծի պէս պառկեցաւ.

Զայն ո՞վ պիտի կանգնեցնէ:

Քեզ օրհնողները օրհնեա՛լ ըլլան,

Եւ քեզ անհծողները՝ անհծեա՛լ»:

10 Բաղակի բարկութիւնը բորբոքեցաւ Բաղաամի դէմ, ձեռքերը իրարու զարկաւ ու Բաղաամի ըսաւ. «Ես քեզ կանչեցի՝ որպէսզի իմ թշնամիներս անհծես, բայց ահա՛ այս երեք անգամ է որ **Պանոնը** օրհնեցիր: **11** Ուստի հիմա քու տե՛ղդ փախիր: ^հՍտադրած էի քեզ շատ պատուել. բայց ահա՛ Տէրը քեզ արգիլեց պատիւ **Ատանալէ»:** **12** Բաղաամ Բաղակի ըսաւ. «Ես քու դրկած պատգամաւորներուդ ալ չխօսեցա՞յ՝ ըսելով. **13** “Եթէ Բաղակ իր տունն ալ տայ ինծի՝ արծաթով եւ ոսկիով լեցուած, ես Տէրոց հրամանը չեմ կրնար անտեսել ու բես ինձմէ” լաւ կամ գէշ բան մը ընել: **Տէրը ինչ որ ըսէ, զայն պիտի խօսիմ»:**

ԲԱՂԱԱՄԻ ՎԵՐՁԻՆ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՆԸ

14 «Ահա՛ ես հիմա բհայրենիքս կ'երթամ: Եկո՛ւր որ քեզի ՚իմացնեմ թէ այս ժողովուրդը վերջին օրերը ի՞նչ պիտի ընէ քու ժողովուրդիդ»: **15** Ուստի իր առակը սկսելով՝ ըսաւ.

«Բէովրի որդիին՝ Բաղաամի պատգամը,

^հ **Կամ՝ Միեղջերուի**

^ե **Կամ՝ փառք**

^գ **Կամ՝ անոնց նետերը պիտի կոտրէ**

^հ **Եբր.՝ Ըսած**

^ե **Եբր.՝ իմ սիրտէս**

^ը **Եբր.՝ ժողովուրդիս**

^ժ **Եբր.՝ խորհուրդ տամ**

Աչքը բաց մարդուն պատգամը,

16 Աստուծոյ խօսքերը լսողին,

Ամենաբարձրին գիտութիւնը գիտցողին,

Ամենակարողին տեսիլքը տեսնողին,

Վերացումի մէջ ինկողին

Եւ իր աչքերը բացուղին պատգամը սա՛ է.-

17 Զայն պիտի տեսնեմ, բայց հիմա չէ.

Անոր պիտի նայիմ, բայց մօտերս չէ:

Յակոբէն աստղ մը պիտի ծագի,

Իսրայէլէն **իշխանութեաց** գաւազան մը պիտի կանգնի,

Ու Մովարի իշխանները պիտի գարնէ,

Եւ Սէրի բոլոր որդիները պիտի բնաշնչէ:

18 Նաեւ Եղովմ ստացուածք պիտի ըլլայ,

Սէիր ալ իր թշնամիներուն ստացուածք պիտի ըլլայ.

Իսրայէլ ոյժ պիտի բանեցնէ.

19 Յակոբէն **ելլողը** պիտի տիրապետէ,

Ու քաղաքէն վերապրողը պիտի կորսնցնէ»:

20 Յետոյ Ամաղէկի նայեցաւ, եւ իր առակը սկսելով՝ ըսաւ.

«Ամաղէկ ազգերուն առաջինն է,

Բայց անոր վախճանը յաւերժական կորուստ է»:

21 Ու Կենեցին նայեցաւ եւ իր առակը սկսելով՝ ըսաւ.

«Ձու բնակարանդ տոկուն է,

Ու քու բոյնդ ժայռի վրայ դրած ես:

22 Բայց Կենեցին պիտի վառի,

Մինչեւ որ Ասուր քեզ գերեվարէ»:

23 Յետոյ իր առակը սկսելով՝ ըսաւ.

«Ափսո՞ս, երբ Աստուած այս բաները ընէ, ո՞վ ողջ պիտի մնայ:

24 Բայց Կիտացիներուն ափերէն նաւեր **պիտի գաց**

Եւ Ասուրը պիտի տառապեցնեն ու Երերը տառապեցնեն,

Եւ անոնք ալ յաւերժ պիտի կորսուին»:

25 Յետոյ Բաղաամ կանգնեցաւ ու գնաց, եւ իր տեղը վերադարձաւ: Բաղակ ալ իր ճամբան գնաց:

ԻՍՐԱՅԵԼԱՑԻՆԵՐԸ ՍԱՏԻՄԻ ՄԷՋ

25

Իսրայէլ Սատիմի մէջ բնակեցաւ, եւ ժողովուրդը սկսաւ Մովարի աղջիկներուն հետ պոռնկիլ: 2 Անոնք ժողովուրդը հրաւիրեցին իրենց աստուածներուն զոհերուն, ու ժողովուրդը **զոհերէց** կերաւ եւ անոնց աստուածներուն երկրպագեց: 3 Իսրայէլ Բահաղ-Փէուվրի յարեցաւ, ուստի Տէրոց բարկութիւնը իսրայէլի դէմ բորբոքեցաւ: 4 Տէրը Մովսէսի ըսաւ. «Ա՞ն ժողովուրդին բոլոր գլխաւորները ու կախէ՛ զանոնք Տէրոց առջեւ՝ արեւին դիմաց, որպէսզի Տէրոց բորբոքած բարկութիւնը իսրայէլէն հեռանայ»: 5 Մովսէս ալ իսրայէլի դատաւորներուն ըսաւ. «Զեզմէ իւրաքանչիւրը թող մեղցնէ իր մարդուցն անոնք՝ որ Բահաղ-Փէուվրի յարեցան»:

6 Եւ ահա՛ իսրայէլի որդիներէն մէկը եկաւ, ու իր եղբայրներուն մադիանացի կին մը

⁵ Կամ՝ ծայրերը

Աերկայացուց՝ Մովսէսի աչքերուն առջեւ եւ Խրայէլի որդիներուն ամբողջ համայնքին աչքերուն առջեւ, երբ անոնք Հանդիպումի վրանին մուտքը կու լային: **7** Երբ Փենեհէս, Ահարոն քահանային որդիին՝ Եղիազարի որդին, **ասիկա** տեսաւ, համայնքին մէջէն կանգնեցաւ, ծեռքը գեղարդ մը առաւ, **8** եւ Խրայէլացի մարդուն ետեւէն սենեակը մտնելով՝ երկուքն ալ, **այսինքն** խրայէլացի մարդն ու կինը, փորէն խոցեց. ուստի պատուհասը Խրայէլի որդիներուն մէջէն դադրեցաւ: **9** Պատուհասէն մեռածները քսանչորս հազար հոգի էին:

10 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **11** «Փենեհէս, Ահարոն քահանային որդիին՝ Եղիազարի որդին, իմ ցասումս Խրայէլի որդիներէն հեռացուց, որովհետեւ ինձի համար նախանձախնդիր եղաւ անոնց մէջ. ուստի Խրայէլի որդիները չսպառեցի իմ նախանձախնդրութեամբս: **12** Հետեւաբար ըսէ՛. “Ահա՛ ես անոր կու տամ իմ խաղաղութեան ուխտու: **13** Ասիկա յափտենական քահանայութեան ուխտ մը պիտի ըլլայ անոր եւ անկէ ետք՝ անոր զարմին, որովհետեւ իր Աստուծոյն համար նախանձախնդիր եղաւ ու Խրայէլի որդիներուն համար քաւութիւն ըրաւ[□]: **14** Զարնուած Խրայէլացիին – **այսինքն** մադիանացի կնոց հետ զարնուածին – անոնք Զամբրի էր. Սալուի որդին **էր**, ու Շմաւոնեաններուն մէկ նահապետութեան իշխանը: **15** Իսկ զարնուած մադիանացի կնոց անոնք Քազբի էր. ան Մադիամի մէջ ժողովուրդի մը, **այսինքն** նահապետութեան մը գլխաւոր եղող Սուրի աղջիկն էր:

16 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **17** «Մադիանացիներուն թշնամացէ՛ք ու զանոնք գարկէ՛ք, **18** քանի որ անոնք իրենց նենգութիւններով ձեզի թշնամացան եւ անոնցմով ձեզի դաւաճանեցին Փէովրի արարքին մէջ եւ իրենց քրոջ՝ Քազբի արարքին մէջ, **այսինքն** մադիանացի իշխանին աղջիկին, որ պատուհասին օրը զարնուեցաւ Փէովրի պատճառով»:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ

26

Պատուհասէն ետք Տէրը խօսեցաւ Մովսէսի եւ Ահարոնի որդիին՝ Եղիազար քահանային, ըսելով. **2** «Առէ՛ք Խրայէլի որդիներուն ամբողջ համայնքին գումարը՝ իրենց նահապետութիւններուն համեմատ, **թուարկելով** քսան տարեկանէն վեր եղողները, **այսինքն** Խրայէլի մէջ բոլոր զինուրութեան ^{“գացողները”}: **3** Ուստի Մովսէս ու Եղիազար քահանան՝ Մովսաբի դաշտերուն մէջ, Երիքովի **դիմաց**, Յորդանանի մօտ, անոնց հետ խօսեցան՝ ըսելով. **4** «Քսան տարեկանէն վեր եղողները **պիտի թուարկենք**, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեց»: **Ահաւասիկ** Եգիպտոսի Երկրէն ելած Խրայէլի որդիները. –

5 Ոուբէն՝ Խրայէլի անդրանիկը, եւ Ոուբէնի որդիները. Ենովքէ՛ Ենովքեաններուն գերդաստանը, Փաղոլուսէ՛ Փաղոլուսեաններուն գերդաստանը, **6** Եսրոնէ՛ Եսրոնեաններուն գերդաստանը, Քարմիէ՛ Քարմեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ**: **7** Ոուբէնեաններուն գերդաստանները ասոնք են. անոնց թուարկուածները քառասուններէք հազար եօթը հարիւր երեսուն հոգի էին: **8** Փաղոլուսի որդին Եղիաբ էր, **9** ու Եղիաբի որդիները՝ Նամուէլ, Դաթան եւ Աբիրոն էին: Այս Դաթանն ու Աբիրոնը համայնքին մէջ անուանիներ էին. **ասոնք էին** որ Տէրոջ դէմ ըմբոստացող Կորխի խումբին հետ՝ Մովսէսի դէմ եւ Ահարոնի դէմ ըմբոստացան, **10** ու Երկիրը իր բերանը բանալով կլեց զանոնք եւ Կորխն ալ, երբ այդ խումբը մեռաւ. կրակը **այդ** Երկու հարիւր յիսուն մարդիկը սպառեց, ու անոնք **բոլորին** օրինակ եղան: **11** Բայց Կորխի որդիները չմեռան:

12 Շմաւոնի որդիները՝ իրենց գերդաստաններով. «Նամուկէ՛ Նամուկէաններուն» գերդաստանը, Յամինէ՛ Յամիններուն գերդաստանը, Յաքինէ՛ Յաքիններուն գերդաստանը, **13** Զարայէ՛ Զարայեաններուն գերդաստանը, Սաւուլէ՛ Սաւուլներուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **14** Շմաւոններուն գերդաստանները ասոնք են – բաններկու հազար երկու հարիւր **հոգի:**

15 Գաղի որդիները՝ իրենց գերդաստաններով. Սափոնէ՛ Սափոննեաններուն գերդաստանը, Անգիէ՛ Անգեաններուն գերդաստանը, Սունիէ՛ Սուննեաններուն գերդաստանը, **16** Ազենիէ՛ Ազեննեաններուն գերդաստանը, Էրիէ՛ Էրեաններուն գերդաստանը, **17** Արողիէ՛ Արողեաններուն գերդաստանը, Արելիէ՛ Արելեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **18** Գաղի որդիներուն գերդաստանները ասոնք են. անոնց թուարկուածները քառասուն հազար հինգ հարիւր **հոգի էին:**

19 Յուդայի որդիները՝ Էր եւ Օնան **Էից.** բայց Էր ու Օնան Քանանի երկրին մէջ մեռան: **20** Ահա՛ասիկ Յուդայի որդիները՝ իրենց գերդաստաններով. Սելոմէ՛ Սելոմնեաններուն գերդաստանը, Փարէսէ՛ Փարէսեաններուն գերդաստանը, Զարայէ՛ Զարայեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **21** Ահա՛ասիկ Փարէսի որդիները. Եսրոնէ՛ Եսրոննեաններուն գերդաստանը, Համովէ՛ Համովեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **22** Յուդայի գերդաստանները ասոնք են. անոնց թուարկուածները եօթանասունվեց հազար հինգ հարիւր **հոգի էին:**

23 Իսաքարի որդիները՝ իրենց գերդաստաններով. Թովղայէ՛ Թովղայեաններուն գերդաստանը, Փուայէ՛ Փուայեաններուն գերդաստանը, **24** Յասուլէ՛ Յասուլեաններուն գերդաստանը, Սամրոնէ՛ Սամրոննեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **25** Իսաքարի գերդաստանները ասոնք են. անոնց թուարկուածները վաթսունչորս հազար երեք հարիւր **հոգի էին:**

26 Զաքուլոնի որդիները՝ իրենց գերդաստաններով. Սարերէ՛ Սարերեաններուն գերդաստանը, Ելոնէ՛ Ելոննեաններուն գերդաստանը, Յաղէլէ՛ Յաղէլեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **27** Զաքուլոնի գերդաստանները ասոնք են. անոնց թուարկուածները վաթսուն հազար հինգ հարիւր **հոգի էին:**

28 Յովսէփի որդիները Մանասէ ու Եփրեմ **Էից.** իրենց գերդաստաններով: **29** Մանասէի որդիները. Մաքիրէ՛ Մաքիրեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ,** Մաքիր ծնաւ Գաղաադը, ու Գաղաադէ՛ Գաղաադեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **30** Ահա՛ասիկ Գաղաադի որդիները. Իեզերէ՛ Իեզերեաններուն գերդաստանը, Ջեղեգէ՛ Ջեղեգեաններուն գերդաստանը, **31** Ասրիէլէ՛ Ասրիէլեաններուն գերդաստանը, Սիլքէմէ՛ Սիլքէմեաններուն գերդաստանը, **32** Սեմիդայէ՛ Սեմիդայեաններուն գերդաստանը, եւ Ոփերէ՛ Ոփերեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **33** Ոփերի որդին՝ Սալպաադ որդիներ չունեցաւ, հապա **միայն** աղջիկներ: Սալպաադի աղջիկներուն անունները՝ Մահալա, Նուա, Էգլա, Մեղքա ու Թերսա **էին:** **34** Մանասէի գերդաստանները ասոնք են. անոնց թուարկուածները յիսուններկու հազար եօթը հարիւր **հոգի էին:**

35 Ահա՛ասիկ Եփրեմի որդիները՝ իրենց գերդաստաններով. Սուտաղայէ՛ Սուտաղայեաններուն գերդաստանը, Բոքորէ՛ Բոքորեաններուն գերդաստանը, Թահանէ՛ Թահանեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **36** Ահա՛ասիկ Սուտաղայի որդիները. «Էրանէ՛ Էրանեաններուն» գերդաստանը **յառաջ եկաւ:** **37** Եփրեմի որդիներուն գերդաստանները ասոնք են. անոնց թուարկուածները երեսուններկու հազար հինգ հարիւր **հոգի էին:** Յովսէփի որդիները ասոնք են՝ իրենց գերդաստաններով:

^բ Կամ՝ Յամուկէլէն՝ Յամուկէեաններուն

^գ Կամ՝ Էղէնէշ՝ Էղէնեաններուն

38 Բենիամինի որդիները՝ իրենց գերդաստաններով. Բաղայէ՛ Բաղայեաններուն գերդաստանը, Ասբէլէ՛ Ասբէլեաններուն գերդաստանը, Աքիրամէ՛ Աքիրամեաններուն գերդաստանը, **39** Սուփամէ՛ Սուփամեաններուն գերդաստանը, Ոփիմէ՛ Ոփիմեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **40** Բաղայի որդիները՝ Արեդ ու Նէման էին. **Արեդէ՛** Արեդեաններուն գերդաստանը, Նէմանէ՛ Նէմանեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **41** Բենիամինի որդիները ասոնք են՝ իրենց գերդաստաններով. անոնց թուարկուածները քառասունհինգ հազար վեց հարիւր **հոգի էին:**

42 Ահա՛ասիկ Դանի որդիները՝ իրենց գերդաստաններով. Սուհամէ՛ Սուհամեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ.** Դանի գերդաստանները ասոնք են՝ իրենց գերդաստաններով: **43** Սուհամեաններուն բոլոր գերդաստաններուն թուարկուածները վաթսունչորս հազար չորս հարիւր **հոգի էին:**

44 Ասերի որդիները՝ իրենց գերդաստաններով. Յեմնայէ՛ Յեմնայեաններուն գերդաստանը, Յեսուիէ՛ Յեսուիեաններուն գերդաստանը, Բարիայէ՛ Բարիայեաններուն գերդաստանը: **45** Բարիայի որդիներէն Քաբերէ՛ Քաբերեաններուն գերդաստանը, Մեղքիէլէ՛ Մեղքիէլեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **46** Իսկ Ասերի աղջիկին անունը Սարա էր: **47** Ասերի որդիներուն գերդաստանները ասոնք են. անոնց թուարկուածները յիսուներեք հազար չորս հարիւր **հոգի էին:**

48 Նեփրաղիմի որդիները՝ իրենց գերդաստաններով. Յասիէլէ՛ Յասիէլեաններուն գերդաստանը, **49** Գումիէ՛ Գումեաններուն գերդաստանը, Յասերէ՛ Յասերեաններուն գերդաստանը, Սիլլեմէ՛ Սիլլեմեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **50** Նեփրաղիմի գերդաստանները ասոնք են՝ իրենց գերդաստաններով. անոնց թուարկուածները քառասունհինգ հազար չորս հարիւր **հոգի էին:**

51 Ասոնք էին Իսրայէլի որդիներուն թուարկուածները.— վեց հարիւր մէկ հազար եօթը հարիւր երեսուն **հոգի:**

52 *Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով.* **53** «Ասո՞նց պիտի բաժնուի **այն երկիրը՝** իբր ժառանգութիւն, **իրենց** անուններուն թիւին համեմատ: **54** Բազմաթիւ եղողին՝ շատ ժառանգութիւն տուր, ու փոքրաթիւ եղողին՝ քիչ ժառանգութիւն տուր. իրաքանչիւրին իր թուարկումին համեմատ ժառանգութիւն պիտի տրուի: **55** Սակայն երկիրը վիճակով պիտի բաժնուի, եւ իրենց հայրերուն տոհմերուն անուններուն համեմատ պիտի ժառանգեն: **56** Վիճակին համեմատ պիտի բաժնուի իրենց ժառանգութիւնը՝ բազմաթիւ ու փոքրաթիւ **եղողներուն միջեւ»:**

57 Ահա՛ասիկ Դեւտացիներուն թուարկուածները՝ իրենց գերդաստաններով. Գերսոնէ՛ Գերսոննեաններուն գերդաստանը, Կահաթէ՛ Կահաթեաններուն գերդաստանը, Մերարիէ՛ Մերարեաններուն գերդաստանը **յառաջ եկաւ:** **58** Ահա՛ասիկ Դեւտացիներուն գերդաստանները.— Դորենեաններուն գերդաստանը, Քերոննեաններուն գերդաստանը, Մոհողեաններուն գերդաստանը, Մուսեաններուն գերդաստանը **ու** Կորինեաններուն գերդաստանը: **59** Կահաթ ծնաւ Ամրամը. Ամրամի կնոջ անունը Ցոքաբեդ էր, Ղեկի աղջիկը, որուն **մայրը** զայն Եգիպտոսի մէջ ծնաւ Ղեկի: Ան Ամրամի ծնաւ Ահարոնը, Մովսէսը, եւ անոնց քոյրը՝ Մարիամը: **60** Ահարոնի ծնան՝ Նադաբ, Արիուտ, Եղիազար ու Իթամար. **61** բայց Նադաբ եւ Արիուտ մեռան, երբ *Sէրոց* առջեւ օստար կրակ կը մատուցանէին: **62** Ասոնցմէ թուարկուածները, **այսինքն** մէկ ամսականէն վեր եղող բոլոր արուները, քսաներեք հազար **հոգի էին.** արդարեւ անոնք Իսրայէլի որդիներուն հետ չթուարկուեցան, քանի որ Իսրայէլի որդիներուն մէջ անոնց ժառանգութիւն տրուած չէր:

63 Մովսարի դաշտերուն մէջ, Երիքովի **դիմաց,** Յորդանանի մօտ, Իսրայէլի որդիները թուարկող Մովսէսի ու Եղիազար քահանային թուարկածները ասոնք են: **64** Ասոնց մէջ բնաւ մարդ մը չկար Իսրայէլի որդիներուն **ճախապէս** թուարկուածներէն, որ Մովսէս եւ Ահարոն քահանան Սինայի անապատին մէջ թուարկեցին: **65** Արդարեւ *Sէրը* անոնց

համար ըստ էր թէ “**անշոնց** անապատին մէջ պիտի մեռնի՛՛. ուստի անոնցմէ ո՛չ մէկ մարդ մնաց, բացի Յեփոնեան Քաղէքէ ու Նաւեան Յեսուէ:

ՍԱԼԴԱՐԻ ԱՇԽԻԿՆԵՐԸ

27

Յովսէփի որդիին Մանասէի գերդաստաններէն՝ Մանասէի որդիին Մաքիրի որդիին Գաղաղաղի որդիին Ովերի որդիին Սալպաաղի աղջիկները մօտեցան (ահա՛ւասիկ անոր աղջիկներուն անունները.— Մահալա, Նուա, Էգու, Մեղքա ու Թերսա), **2** Մովսէսի, Եղիազար քահանային, իշխաններուն եւ ամբողջ համայնքին ներկայացան՝ Հանդիպումի վրանին մուտքը, ու ըսին. **3** «Մեր հայրը անապատին մէջ մեռաւ. ան Տէրոց դէմ հաւաքուածներուն խումբին մէջ — Կորխի խումբին մէջ — չէր, բայց իր մեղքով մեռաւ եւ որդիներ չուներ: **4** Ինչո՞ւ մեր հօր անունը իր գերդաստանին մէջէն ջնջուի, քանի որ որդի չուներ. մեզի կալուած տուէք մեր հօր եղբայրներուն մէջ»: **5** Մովսէս անոնց դատը Տէրոց ներկայացուց, **6** ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **7** «Սալպաաղի աղջիկները շիտակ խօսեցան. **ա՛նպատճառ** անոնց ժառանգութեան կալուած տուր իրենց հօր եղբայրներուն մէջ, եւ անոնց հօր ժառանգութիւնը իրենց փոխանցէ: **8** Նաեւ խօսէ՝ Իսրայէլի որդիներուն՝ ըսելով. “Եթէ մարդ մը մեռնի ու որդի չունենայ, անոր ժառանգութիւնը իր աղջիկին փոխանցեցէք: **9** Եթէ ան աղջիկ ալ չունենայ, անոր ժառանգութիւնը իր եղբայրներուն տուէք: **10** Եթէ եղբայրներ ալ չունենայ, անոր ժառանգութիւնը իր հօ՛ր եղբայրներուն տուէք: **11** Իսկ եթէ իր հայրը եղբայրներ չունենայ, անոր ժառանգութիւնը իր գերդաստանին մէջ իր ամենամօ՛տ ազգականին տուէք, եւ անիկա՛թող տիրանայ անոր: Ասիկա Իսրայէլի որդիներուն դատաստանի կանոն պիտի ըլլայ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեց□»:

ՅԵՍՈՒ Կ'ՇՆՏՐՈՒԻՆ ԻԲՐ ՄՈՎԱԲԵՒԻ ՅԱԶՈՐԴ

(F. Op. 31. 1-8)

12 Ձետոյ Տէրը Մովսէսի ըսաւ. «Բարձրացի՛ր այդ Աբարիմ լեռը ու տե՛ս այն երկիրը, որ հրայէլի որդիներուն կու տամ: **13** Զայն տեսնելէդ ետք՝ դո՛ւն ալ քու ժողովուրդիդ մէջ պիտի ամփոփուիս, ինչպէս եղբայր Ահարոն ամփոփուեցաւ. **14** որովհետեւ դուք իմ հրամանիս դէմ ընդզգեցաք Սինի անապատին մէջ՝ համայնքին վիճաբանութեան ատենը, եւ անոնց առջեւ զիս “չփառաւորեցիք **այն** զուրին քով»: (Ասիկա Կադէսի մէջ՝ Մերիպայի ծուրեն է, Սինի անապատին մէջ:)

15 Մովսէս Տէրոց խօսեցաւ՝ ըսելով. **16** «Տէրը, բոլոր բմարդոց հոգիներուն Աստուածը, այս համայնքին վրայ մարդ մը թող նշանակէ, **17** որպէսզի ան անոնց առջեւէն ելլէ ու մտնէ, եւ զանոնք հանէ ու մտցնէ, որպէսզի Տէրոց համայնքը անհովիւ ոչխարներու պէս չըլլայ»:

18 *Տէրը Մովսէսի ըսաւ. «Ա՞ռ քեզի Նաւէի որդին՝ Յետուն, որուն վրայ Հոգի կայ, եւ դի՛ք ձեռքդ անոր վրայ:* **19** *Կայնեցո՞ւր զայն Եղիազար քահանային ու ամբողջ համայնքին առջեւ, պատուէ՛ր տուր անոր՝ անոնց աշքերուն առջեւ, **20** եւ դի՛ք քու պատիւէդ անոր վրայ, որպէսզի հսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը **անոր** հնազանդի:* **21** *ԱՅ Եղիազար քահանային առջեւ պիտի կայնի, որ անոր համար Ուրիմին դատավճիռը պիտի*

^ս ԵՐԵ.՝ ՀԱՐՔԱԳՈՒՅԻՔ

Բ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐՄԻԱՆԵՐՈՒ

հարցնէ Տէրոց առջեւ: Անոր հրամանով պիտի ելլեն ու անոր հրամանով պիտի մտնեն, ինք եւ իրեն հետ բոլոր իսրայէլի որդիներն ու ամբողջ համայնքը»: **22** Մովսէս ըրաւ ինչպէս Տէրը իրեն պատուիրեր էր. առաւ Յեսուն, զայն Եղիազար քահանային եւ ամբողջ համայնքին առջեւ կայնեցուց, **23** ու իր ձեռքերը անոր վրայ դնելով՝ անոր պատուեր տուաւ, ինչպէս Տէրը Մովսէսի ^գմիջոցով ըսեր էր:

ԿԱՆՈՆԱԻՈՐ ԸՆԾԱՆԵՐԸ (Ելք. 29. 38-46)

28

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **2** «Պատուիրէ՛ Իսրայէլի որդիներուն եւ ըսէ՛. «Ուշադի՛ր եղէք որ իմ մատաղս **եւ** անուշահոտ պատարագներուս համար ընծայուած հացս՝ սահմանուած ատենին ինձի մատուցանէք»: **3** Անոնց ըսէ՛. «Ահա՛ասիկ այն պատարագը՝ որ Տէրոց պիտի մատուցանէք.— ամէն օր մէկ տարեկան երկու անարատ գառ՝ իբր մշտատեւ ողջակէզ: **4** Մէկ գառը առտո՛ն մատուցանէ, իսկ միւս գառը իրիկուա՛ն դէմ մատուցանէ: **5** Նաեւ արդուի մը մէկ տասներորդ մասը նաշիհով հացի ընծայ՝ մատուցանէ՛, շաղուած քառորդ հիմէն ծեծուած իւղով: **6** **Ասիկա** Սինա լերան վրայ սահմանուած մշտատեւ ողջակէզն է, իբր անուշահոտ պատարագ Տէրոց: **7** Անոր թափելիք նուէրը քառորդ հիմէն ըլլայ՝ մէկ գառի համար. սուրբ տեղին մէջ թափէ օյիհ՝ **իբր** թափելիք նուէր Տէրոց: **8** Միւս գառը իրիկուա՛ն դէմ մատուցանէ. **զայն** մատուցանէ՛ առտուան հացի ընծային պէս եւ անոր թափելիք նուէրին պէս, **իբր** անուշահոտ պատարագ Տէրոց»:

ԾԱԲԱԹ ՕՐՈՒԱՆ ԸՆԾԱՆ

9 «Իսկ Ծաբաթ օրը մէկ տարեկան երկո՛ւ անարատ գառ մատուցանէ, ու իւղով շաղուած երկու տասներորդ նաշիհ՝ հացի ընծայի համար, եւ անոր թափելիք նուէրը: **10** **Ասիկա** ամէն Ծաբաթ օրուան ողջակէզն է, մշտատեւ ողջակէզէն ու անոր թափելիք նուէրէն զատ»:

ԱՍՍԱԳԼՈՒԽԻ ԸՆԾԱՆ

11 «Չեր ամսագլուխներուն՝ **իբր** ողջակէզ Տէրո՛ց մատուցանեցէք արջառներէն երկու գուարակ, մէկ խոյ **ու** մէկ տարեկան եօթը անարատ գառ: **12** **Մատուցանեցէք** նաեւ իւղով շաղուած երեք տասներորդ նաշիհ **իբր** հացի ընծայ՝ մէկ գուարակի համար, իւղով շաղուած երկու տասներորդ նաշիհ **իբր** հացի ընծայ՝ մէկ խոյի համար, **13** ու իւղով շաղուած մէկ տասներորդ նաշիհ **իբր** հացի ընծայ՝ մէկ գառի համար. **ասիկա** ողջակէզ **եւ** անուշահոտ պատարագ է Տէրոց: **14** Անոնց թափելիք նուէրները պիտի ըլլան՝ կէս հիմէն գինի մէկ գուարակի համար, մէկ երրորդ հիմէն՝ մէկ խոյի համար, եւ մէկ քառորդ հիմէն՝ մէկ գառի համար: **Ասիկա** բամէն ամիս» **մատուցուելիք** ողջակէզն է՝ տարուան **բոլոր** ամիսներուն համար: **15** Մշտատեւ ողջակէզէն զատ, մեղքի պատարագի համար այժերէն

^գ **Եբր.**՝ ձեռքով

^ա **Կամ** ընծայուած, **կամ** կատարուած

^բ **Եբր.**՝ ամիսէ ամիս

նոխազ մը՝ իր թափելիք նուէրով միասին՝ թող մատուցանուի Տէրոց»:

ԲԱՂԱՐՁԱԿԵՐՁԻ ՏՕՆԻՆ ԸՆԾԱՆԵՐԸ

(ՂԵԼ. 23. 5-14)

16 «Առաջին ամսուան տասնչորրորդ օրը Տէրոց Զատիկն է: 17 Այդ ամսուան տասնինգերորդ օրը տօն է: Եօթը օր բաղարց թող ուտուի: 18 Առաջին օրը սուրբ ժողով գումարեցէք. ո՛չ մէկ ծառայական գործ ըրէք: 19 Տէրոց պատարագ՝ ու ողջակէ՛զ մատուցանեցէք՝ արջառներէն երկու զուարակ, մէկ խոյ, ու մէկ տարեկան եօթը գառ. անարա՛տ առէք զանոնք: 20 Անոնց հացի ընծան իւղով շաղուած նաշին ըլլայ. երեք տասներորդ մատուցանեցէք մէկ զուարակի համար, ու երկու տասներորդ՝ մէկ խոյի համար: 21 Մէկ տասներորդ մատուցանեցէք եօթը գառներէն ամէն մէկ գառի համար: 22 Նաեւ մէկ նոխազ մատուցանեցէք իբր մեղքի պատարագ՝ ծեզի քաւութիւն ընելու համար: 23 Ասոնք մատուցանէք առոտուան ողջակէզէն զատ, որ մշտատեւ ողջակէզն է: 24 Այդ եօթը օրերուն՝ ամէն օր այսպէս անուշահոտ պատարագ՝ մատուցանեցէք Տէրոց. ասիկա պիտի մատուցուի մշտատեւ ողջակէզէն եւ անոր թափելիք նուէրէն զատ: 25 Եօթներորդ օրը սուրբ ժողով գումարեցէք. ո՛չ մէկ ծառայական գործ ըրէք»:

ՀՈՒՆՉՁԻ ՏՕՆԻՆ ԸՆԾԱՆԵՐԸ

(ՂԵԼ. 23. 15-22)

26 «Երախայրիքի օրը, երբ ձեր Շաբաթներու տօնին մէջ Տէրոց նոր հացի ընծայ մատուցանէք, սուրբ ժողով գումարեցէք. ո՛չ մէկ ծառայական գործ ըրէք: 27 Տէրոց անուշահոտ ողջակէզի համար՝ արջառներէն երկու զուարակ, մէկ խոյ, ու մէկ տարեկան եօթը գառ մատուցանեցէք: 28 Անոնց հացի ընծան իւղով շաղուած նաշին ըլլայ.՝ երեք տասներորդ՝ մէկ զուարակի համար, երկու տասներորդ՝ մէկ խոյի համար, 29 մէկ տասներորդ՝ եօթը գառներէն ամէն մէկ գառի համար: 30 Նաեւ այծերէն մէկ նոխազ մատուցանեցէք՝ ծեզի քաւութիւն ընելու համար: 31 Ասոնք՝ իրենց թափելիք նուէրներով՝ մատուցանեցէք՝ մշտատեւ ողջակէզէն եւ անոր հացի ընծայէն զատ. անարա՛տ առէք զանոնք»:

ԱՍԱՆՈՐԻ ՏՕՆԻՆ ԸՆԾԱՆԵՐԸ

(ՂԵԼ. 23. 23-25)

29

«Եօթներորդ ամիսը, ամսուան առաջին օրը, սուրբ ժողով գումարեցէք. ո՛չ մէկ ծառայական գործ ըրէք: «Փող հնչեցնելու» օր ըլլայ ծեզի: 2 Տէրոց անուշահոտ ողջակէզի համար՝ արջառներէն մէկ զուարակ, մէկ խոյ ու մէկ տարեկան եօթը անարատ գառ մատուցանեցէք: 3 Անոնց հացի ընծան իւղով շաղուած նաշին ըլլայ.՝ երեք տասներորդ՝

^գ Երը.՝ ունեցէք

^Դ Երը.՝ պատարագի հաց

^Ե Երը.՝ ունեցէք

^Խ Երը.՝ գոչիւնի

մէկ զուարակի համար, երկու տասներորդ՝ մէկ խոյի համար, **4** եւ մէկ տասներորդ՝ եօթը գառներէն **ամէց** մէկ գառի համար: **5** Նաեւ այծերէն մէկ նոխազ **մատուցանեցէք** իբր մեղքի պատարագ՝ ձեզի քաւութիւն ընելու համար, **6** ամսագումի ողջակէզն ու անոր հացի ընծան, նաեւ մշտատեւ ողջակէզն ու անոր հացի ընծան, եւ ասոնց թափելիք նուէրները իրենց կանոնին համաձայն **մատուցանելէց** զատ՝ **իբր** անուշահոտ պատարագ **Տէրոց»:**

ՔԱԻՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ԸՆԾԱՆԵՐԸ (ՂԵ. 23. 26-32)

7 «Այս եօթներորդ ամսուան տասներորդ **օրը** սուրբ ժողով գումարեցէք ու ձեր անձե՞րը խոնարհեցուցէք. ո՛չ մէկ գործ ըրէք: **8** Տէրոց անուշահոտ ողջակէզի համար՝ արջառներէն մէկ զուարակ, մէկ խոյ **եւ** մէկ տարեկան եօթը գառ մատուցանեցէք. անարա՛տ ⁴առէք զանոնք: **9** Անոնց հացի ընծան իւղով շաղուած նաշիհ **ըլլայ**.— Երեք տասներորդ՝ մէկ զուարակի համար, երկու տասներորդ՝ մէկ խոյի համար, **10** ու մէկ տասներորդ՝ եօթը գառներէն **ամէց** մէկ գառի համար: **11** Նաեւ այծերէն մէկ նոխազ **մատուցանեցէք** իբր մեղքի պատարագ, քաւութեան **օրը** **մատուցանուած** մեղքի պատարագէն, մշտատեւ ողջակէզն **եւ** անոր հացի ընծայէն, ու ասոնց թափելիք նուէրներէն զատ»:

ՏԱՂԱԻԱՐՆԵՐՈՒ ՏՕՆԻՆ ԸՆԾԱՆԵՐԸ (ՂԵ. 23. 33-44)

12 «Եօթներորդ ամսուան տասնհինգերորդ **օրը** սուրբ ժողով գումարեցէք. ո՛չ մէկ ծառայական գործ ըրէք: **Եօթը** օր **Տէրոց** տօն կատարեցէք: **13** **Տէրոց** ողջակէզի **եւ** անուշահոտ պատարագի համար՝ արջառներէն տասներեք զուարակ, երկու խոյ **ու** մէկ տարեկան տասնչո՛րս գառ մատուցանեցէք. անոնք անարատ թող **ըլլան**: **14** Անոնց հացի ընծան իւղով շաղուած նաշիհ **ըլլայ**.— Երեք տասներորդ՝ տասներեք զուարակներէն **ամէց** մէկ զուարակի համար, երկու տասներորդ՝ երկու խոյերէն **ամէց** մէկ գառի համար, **15** ու մէկ տասներորդ՝ տասնչորս գառներէն **ամէց** մէկ գառի համար: **16** Նաեւ այծերէն մէկ նոխազ **մատուցանեցէք** իբր մեղքի պատարագ, մշտատեւ ողջակէզն, անոր հացի ընծայէն **եւ** թափելիք նուէրէն զատ:

17 Երկրորդ օրը արջառներէն տասներկու զուարակ, երկու խոյ **ու** մէկ տարեկան տասնչո՛րս անարատ գառ **մատուցանեցէք**: **18** Անոնց հացի ընծան **եւ** թափելիք նուէրները՝ զուարակներուն, խոյերուն ու գառներուն համար, իրենց թիւին համեմատ **ըլլան**, կանոնին համաձայն: **19** Նաեւ այծերէն մէկ նոխազ **մատուցանեցէք** իբր մեղքի պատարագ, մշտատեւ ողջակէզն **եւ** անոր հացի ընծայէն ու թափելիք նուէրներէն զատ:

20 Երրորդ օրը տասնմէկ զուարակ, երկու խոյ **եւ** մէկ տարեկան տասնչո՛րս անարատ գառ **մատուցանեցէք**: **21** Անոնց հացի ընծան ու թափելիք նուէրները՝ զուարակներուն, խոյերուն **եւ** գառներուն համար, իրենց թիւին համեմատ **ըլլան**, կանոնին համաձայն: **22** Նաեւ մէկ նոխազ **մատուցանեցէք** իբր մեղքի պատարագ, մշտատեւ ողջակէզն **եւ** անոր հացի ընծայէն ու թափելիք նուէրէն զատ:

23 Չորրորդ օրը տա՛սը զուարակ, երկու խոյ **եւ** մէկ տարեկան տասնչո՛րս անարատ

^բ **Եբր.**՝ տառապեցուցէք

^գ **Եբր.**՝ ունեցէք

գառ **մատուցանեցէք:** 24 Անոնց **հացի** ընծան ու թափելիք նուէրները՝ զուարակներուն, խոյերուն եւ գառներուն համար, իրենց թիւին համեմատ ըլլան՝ կանոնին համաձայն: 25 Նաեւ այծերէն մէ՛կ նոխազ **մատուցանեցէք** իբր մեղքի պատարագ, մշտատեւ ողջակէզէն եւ անոր **հացի** ընծայէն ու թափելիք նուէրէն զատ:

26 Հինգերորդ օրը ի՞նը զուարակ, երկու խոյ **եւ** մէկ տարեկան տասնչորս անարատ գառ **մատուցանեցէք:** 27 Անոնց **հացի** ընծան ու թափելիք նուէրները՝ զուարակներուն, խոյերուն եւ գառներուն համար, իրենց թիւին համեմատ ըլլան՝ կանոնին համաձայն: 28 Նաեւ մէ՛կ նոխազ **մատուցանեցէք** իբր մեղքի պատարագ, մշտատեւ ողջակէզէն եւ անոր **հացի** ընծայէն ու թափելիք նուէրէն զատ:

29 Վեցերորդ օրը ո՞ւղը զուարակ, երկու խոյ **եւ** մէկ տարեկան տասնչորս անարատ գառ **մատուցանեցէք:** 30 Անոնց **հացի** ընծան ու թափելիք նուէրները՝ զուարակներուն, խոյերուն եւ գառներուն համար, իրենց թիւին համեմատ ըլլան՝ կանոնին համաձայն: 31 Նաեւ մէ՛կ նոխազ **մատուցանեցէք** իբր մեղքի պատարագ, մշտատեւ ողջակէզէն եւ անոր **հացի** ընծայէն ու թափելիք նուէրէն զատ:

32 Եօթներորդ օրը եօթը զուարակ, երկու խոյ **եւ** մէկ տարեկան տասնչորս անարատ գառ **մատուցանեցէք:** 33 Անոնց **հացի** ընծան ու թափելիք նուէրները՝ զուարակներուն, խոյերուն եւ գառներուն համար, իրենց թիւին համեմատ ըլլան՝ կանոնին համաձայն: 34 Նաեւ մէ՛կ նոխազ **մատուցանեցէք** իբր մեղքի պատարագ, մշտատեւ ողջակէզէն եւ անոր **հացի** ընծայէն ու թափելիք նուէրէն զատ:

35 Ութերորդ օրը տօնախմբութիւն պիտի ըլլայ. ո՞չ մէկ ծառայական գործ ըրէք: 36 Տէրոց ողջակէզի **եւ** անուշահոտ պատարագի համար՝ մէ՛կ զուարակ, մէ՛կ խոյ **ու** մէկ տարեկան եօթը անարատ գառ **մատուցանեցէք:** 37 Անոնց **հացի** ընծան ու թափելիք նուէրները՝ զուարակին, խոյին ու գառներուն համար, իրենց թիւին համեմատ ըլլան՝ կանոնին համաձայն: 38 Նաեւ մէ՛կ նոխազ **մատուցանեցէք** իբր մեղքի պատարագ, մշտատեւ ողջակէզէն եւ անոր **հացի** ընծայէն ու թափելիք նուէրէն զատ:

39 Զեր հանդիսաւոր տօներուն մէջ ասո՞նք մատուցանեցէք Տէրոց, ձեր ուխտերուն եւ յօժարակամ ընծաներուն **վերաբերեալ** ողջակէզներէն, **հացի** ընծաներէն, թափելիք նուէրներէն ու խաղաղութեան **զոհերէն** զատ»:

40 Մովսէս Խսրայէլի որդիներուն հաղորդեց ամէն ինչ որ Տէրը Մովսէսի պատուիրեր էր:

ՈՒԽՏԵՐՈՒ ՕՐԵՆՔՆԵՐ

30

Մովսէս Խսրայէլի որդիներուն ^ատոհմապետներուն խօսեցաւ՝ ըսելով. 2 «Ահա՛ ասիկ ինչ որ Տէրը պատուիրեց. եթէ մարդ մը Տէրոց ուխտ ընէ, կամ երդում ընելով բարտաւորութիւն մը ստանձնէ», իր խօսքը թող չդրժէ. իր բերանէն ելած ամէն **խոստում** թող գործադրէ:

3 Եթէ կին մը Տէրոց ուխտ ընէ եւ պարտաւորութիւն մը ստանձնէ իր երիտասարդութեան ատեն՝ իր հօր տան մէջ, 4 ու անոր հայրը լսէ անոր ուխտը եւ անոր ստանձնած պարտաւորութիւնը, բայց անոր հայրը լոէ անոր հանդէպ, անոր բոլոր ուխտերը պիտի հաստատուին. նաեւ անոր ստանձնած ամէն պարտաւորութիւն պիտի հաստատուի: 5 Իսկ եթէ անոր հայրը մերժէ անոր **ուխտը**՝ իր լսած օրը, անոր ուխտերէն եւ

^ա **Այսինքն՝** տոհմերու գլխաւորներուն

^բ **Եբբ.**՝ իր անձը կապով մը կապէ

անոր ստանձնած պարտաւորութիւններէն ո՛չ մէկը պիտի հաստատուի, ու **Տէրը** անոր պիտի ներէ, քանի որ անոր հայրը մերժած է անոր **ուխտը**:

6 Եթէ ամուսին ունի՝ ուխտ ըրած կամ իր շրթունքէն ^Պստանձնումի անխոհեմ խօսք մը ելած ատեն, **7** ու անոր ամուսինը լսէ եւ անոր հանդէպ լոէ իր լսած օրը, անոր ուխտերը պիտի հաստատուին. նաեւ անոր ստանձնած պարտաւորութիւնները պիտի հաստատուին:
8 Բայց եթէ անոր ամուսինը մերժէ անոր **ուխտը**՝ իր լսած օրը, անոր ըրած ուխտն ու շրթունքէն ելած ստանձնումի անխոհեմ խօսքը պիտի խզէ, եւ **Տէրը** անոր պիտի ներէ:

9 Բայց այրիի մը կամ վոնտուած **կնոջ** մը ուխտը – ստանձնուած որեւէ **պարտաւորութիւն** – պիտի հաստատուի իրեն համար: **10** Եթէ ան իր ամուսինին տան մէջ ուխտ ըրած է, կամ երդումով պարտաւորութիւն մը ստանձնած է, **11** եւ անոր ամուսինը՝ լսած ըլլալով՝ անոր հանդէպ լոած է **ու** մերժած չէ անոր **ուխտը**, անոր բոլոր ուխտերը պիտի հաստատուին. նաեւ անոր ստանձնած ամէն պարտաւորութիւն պիտի հաստատուի:
12 Բայց եթէ անոր ամուսինը զանոնք խզած է իր լսած օրը, ուխտ ընելու կամ ստանձնումի համար անոր շրթունքէն ելած ոչինչ պիտի հաստատուի, **քանի որ** անոր ամուսինը զանոնք խզած է, ու **Տէրը** անոր պիտի ներէ: **13** Անոր ամուսինը կրնայ հաստատել կամ անոր ամուսինը կրնայ խզել ամէն ուխտ եւ **ինքզինք** ^Պխոնարհեցնելու համար ստանձնուած ամէն երդում: **14** Եթէ անոր ամուսինը անոր հանդէպ լոէ օրէ օր, հաստատած կ'ըլլայ անոր բոլոր ուխտերն ու անոր ստանձնած բոլոր պարտաւորութիւնները. զանոնք հաստատած կ'ըլլայ, քանի որ անոր հանդէպ լոած է իր լսած օրը: **15** Բայց եթէ իր լսած օրէնք ետք որեւէ կերպով զանոնք խզէ, ի՞նք պիտի կրէ անոր անօրէնութիւնը»:

16 Մարդու մը եւ անոր կնոջ միջեւ, **ու** հօր մը եւ երիտասարդութեան ատեն իր հօր տունը **բնակող** աղջիկին միջեւ **պահուելիք** կանոնները ասո՞նք են, որ **Տէրը** Մովսէսի պատուիրեց:

ՍՈՒՐԲ ՊԱՏԵՐԱՋՄ ՄԱԴԻԱՆԱՑԻՆԵՐՈՒՆ ԴՀՄ

31

Տէրը Մովսէսի խօսեցաւ՝ ըսելով. **2** «Մադիանացիներէն իսրայէլի որդիներուն վրէ՛ժը առ. ապա քու ժողովուրդիդ մէջ պիտի ամփոփուիս»: **3** Մովսէս ալ ժողովուրդին խօսեցաւ՝ ըսելով. «Զեզմէ մարդիկ թող զինուին զինուորութեան համար, ու Մադիամի դէմ ^Պերթան, որ Մադիամէն **Տէրոց** վրէժը առնեն: **4** Ամէն տոհմէ հազար՝ **մարդ** զինուորութեան դրկեցէք, իսրայէլի բոլոր տոհմերէն»: **5** Ուստի իսրայէլի հազարաւորներէն՝ իրաքանչիւր տոհմէն հազար **մարդ** ընտրուեցաւ, **այսինքն** տասներկու հազար **մարդ**^Պպատերազմի համար զինուած: **6** Մովսէս զինուորութեան դրկեց զանոնք, իրաքանչիւր տոհմէն հազար **մարդ**. ու անոնց հետ ^Պպատերազմի **դրկեց** Եղիազար քահանային որդին՝ **Փենեհէսը**, որուն ձեռքն էին սուրբ առարկաներն ու մեծագոյն փողերը: **7** Մադիանացիներուն դէմ ^Պպատերազմի **գացին**, ինչպէս **Տէրը** Մովսէսի պատուիրեր էր, եւ **անոնց** բոլոր արուները

^Պ **Եբր.**՝ իր անձը կապող

^Պ **Եբր.**՝ տառապեցնելու

^Պ **Եբր.**՝ ըլլան

^Պ **Եբր.**՝ զինուորութեան

^Պ **Եբր.**՝ զինուորութեան

^Պ **Եբր.**՝ զինուորութեան

մեղուցին: **8** Անոնց սպաննուածներէն զատ՝ Մադիամի թագաւորներն ալ մեղուցին, **այսինքն՝** Ելին, Ռոկոմը, Սուլը, Ուրը եւ Ռոբէն – Մադիամի հինգ թագաւորները: Բէռվրի որդին՝ Բաղաամն ալ սուլով մեղուցին: **9** Իսրայէլի որդիները Մադիամի կիներն ու անոնց մանուկները գերեվարեցին, եւ անոնց բոլոր անասունները, ամբողջ խաշինքն ու ամբողջ գոյքերը կողոպսեցին: **10** Անոնց բնակած բոլոր քաղաքները եւ բոլոր գիւղակները կրակով այրեցին: **11** Ամբողջ աւարն ու ամբողջ թաղանքը յափշտակեցին՝ մարդէ մինչեւ անասուն, **12** ու գերիները, թալանը եւ աւարը բերին Մովսէսի, Եղիազար քահանային ու իսրայէլի որդիներուն համայնքին, բանակավայրը՝ որ Երիքովի **դիմաց**, Յորդանանի մօտ, Մովարի դաշտերուն մէջ էր:

ԲԱՆԱԿԸ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ

13 Մովսէս, Եղիազար քահանան ու համայնքին բոլոր իշխանները բանակավայրէն դուրս ելան զանոնք դիմաւորելու: **14** Մովսէս զայրացաւ ^եպատերազմէն վերադարձող զօրագունդերու վերատեսուցներուն՝ հազարապետներուն ու հարիւրապետներուն դէմ, **15** եւ ըսաւ անոնց. «Միթէ բոլոր կիները ո՞ղջ պահեցիք: **16** Ահա՝ Բաղաամի ^եխրատով ատոնք **պատճառ** եղան, որ իսրայէլի որդիները **Տէրոց** հանդէպ ուխտազանց ըլլան Փէռվրի արարքին մէջ, եւ **Տէրոց** համայնքին վրայ **այն** պատուհասը եղաւ: **17** Ուստի հիմա մեղուցէք մանուկներէն ամէն արու. նաեւ մեղուցէք ամէն կին՝ որ ^{այր} մարդու՝ անկողին գիտցած է: **18** Սակայն ձեզի համար ո՞ղջ պահեցէք այն բոլոր մանկահասակ կիները, որ այր մարդու անկողին գիտցած չեն: **19** Իսկ դուք եօթը օր բանակավայրէն դուրս մնացէք. ո՞վ որ անձ մը մեղուցեր է եւ ո՞վ որ սպաննուածի մը դպեր է, երրորդ օրն ու եօթներորդ օրը թող թմաքրուի, թէ՛ դուք եւ թէ՛ ձեր գերիները: **20** Մաքրեցէք ամէն հագուստ, ամէն մորթէ առարկայ, ամէն այծի մազէ բանուածք, ու ամէն փայտէ անօթ»:

21 Եղիազար քահանան պատերազմի գացող զինուորներուն ըսաւ. «Ահաւասիկ օրէնքին կանոնը, որ **Տէրը** Մովսէսի պատուիրեց.՝ **22** միայն ոսկին, արծաթը, պղինձը, երկաթը, անագն ու կապարը **23** – ամէն բան որ կրնայ կրակի ^գդիմանալ – կրակէ՛ անցուցէք, որ մաքրուած ըլլայ. սակայն ^մմաքրութեան ջուրով **ալ** մաքրեցէք: Կրակի չդիմացող ամէն բան ջուրէ՛ անցուցէք, **24** ու եօթներորդ օրը ձեր հագուստները լուացէք, որ մաքրուած ըլլաք. յե՛տոյ բանակավայրին մէջ մտէք»:

ԱԻԱՐԻՆ ԲԱԺԱՆՈՒԽԸ

^ե **Եբր.**՝ զինուորութենէն

^գ **Եբր.**՝ էգերը

^է **Եբր.**՝ խօսքով

^թ **Եբր.**՝ արուի

^թ **Եբր.**՝ մեղքէ մաքրուի

^ժ **Եբր.**՝ մէջ մտնել

^ի **Եբր.**՝ կեղտոտութեան

25 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **26** «Եղիազար քահանային ու համայնքին նահապետներուն հետ՝ առնուած թալանին գումարը առ, մարդէ մինչեւ անասուն: **27** Այս թալանը երկուն մասի բաժնէ՝ զինուորութեան գացող պատերազմիկներէն Տէրոց հարկը հաւաքէ – հինգ հարիւրէն ծմէկը – թէ՛ մարդոցմէն, թէ՛ արջառներէն, թէ՛ էշերէն եւ թէ ոչխարներէն. **28** Զինուորութեան գացող պատերազմիկներէն Տէրոց հարկը հաւաքէ – հինգ հարիւրէն ծմէկը – թէ՛ մարդոցմէն, թէ՛ արջառներէն, թէ՛ էշերէն եւ թէ ոչխարներէն. **29** այս հարկը անոնց ստացած կէսէն ա՛ռ ու Եղիազար քահանային տուր՝ իբր Տէրոց բարձրացնելիք ընծայ: **30** Իսկ հսրայէլի որդիներուն ստացած կէսէն յիսունէն մէ՛կ մասը առ, թէ՛ մարդոցմէն, թէ՛ արջառներէն, թէ՛ էշերէն, թէ՛ ոչխարներէն, **եւ թէ** ամէն տեսակ անասունէ, ու զանոնք Տէրոց խորանին պաշտօնը կատարող՝ Ղետացիներուն տուր»: **31** Մովսէս ու Եղիազար քահանան Տէրոց Մովսէսի պատուիրածին համաձայն ըրին:

32 Թալանը, **այսինքն** զինուորներուն գրաւած կողոպուտին գումարը, սա՛ էր. – Վեց հարիւր եօթանասունինգ հազար ոչխար, **33** եօթանասուներկու հազար արջառ, **34** եւ վաթունմէկ հազար էշ. **35** իսկ այր մարդու անկողին չգիտցող կիները՝ բոլորը երեսուներկու հազար անձ էին:

36 Զինուորութեան գացողներուն բաժինը – **ստացած կէսը** – սա՛ եղաւ. – թիւով երեք հարիւր երեսունեօթը հազար հինգ հարիւր ոչխար **37** – ոչխարներէն Տէրոց հարկը վեց հարիւր եօթանասունինգ եղաւ –, **38** երեսունվեց հազար արջառ – որոնցմէ Տէրոց հարկը եօթանասուներկու եղաւ –, **39** երեսուն հազար հինգ հարիւր էշ – որոնցմէ Տէրոց հարկը վաթունմէկ եղաւ –, **40** եւ տասնվեց հազար անձ – որոնցմէ Տէրոց հարկը երեսուներկու անձ եղաւ: **41** Մովսէս Տէրոց բարձրացնելիք ընծային հարկը Եղիազար քահանային տուաւ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր:

42 Իսրայէլի որդիներուն **ստացած կէսէն** ալ, որ Մովսէս զինուորներուն **բաժինը** գատեր էր, **43** (համայնքին կէս մասը երեք հարիւր երեսունեօթը հազար հինգ հարիւր ոչխար, **44** երեսունվեց հազար արջառ, **45** երեսուն հազար հինգ հարիւր էշ **46** ու տասնվեց հազար անձ էր,) **47** Մովսէս Իսրայէլի որդիներուն **այս կէսէն՝ թէ՛ մարդէն, թէ՛ անասունէն՝ յիսունէն մէկ մասը առաւ եւ Տէրոց խորանին պաշտօնը կատարող՝ Ղետացիներուն տուաւ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր:**

48 Զօրքին հազարաւորներուն վերատեսուչները, **այսինքն** հազարապետներն ու հարիւրապետները, Մովսէսի մօտեցան **49** եւ Մովսէսի ըսին. «Ձու ծառաներդ՝ մեր ծեռքին տակ եղող պատերազմիկներուն գումարը առինք, ու մեզմէ ո՛չ մէկ մարդ կը պակսի: **50** Ուստի Տէրոց մատաղ կը մատուցանենք իւրաքանչիւրս՝ ինչ որ գտանք – ուսկիէ իրեր, շղթաներ, ապարանջաններ, մատանիներ, գիներ – եւ **մանեակներ** –, մեր անձերուն

¹ **Եբր.**՝ դուրս ելլող

² **Եբր.**՝ պատերազմը բոնողներուն

³ **Եբր.**՝ մէկ անձ

⁴ **Եբր.**՝ պահպանութիւնը ընող

⁵ **Կամ՝** մնացորդը, **եւ կամ՝** բազմութիւնը

⁶ **Եբր.**՝ մարդկային անձ

⁷ **Եբր.**՝ պահպանութիւնը ընող

⁸ **Կամ՝** լանջագեղ կամարներ

քաւութիւն ընելու համար Տէրոց առջեւ»: **51** Մովսէս ու Եղիազար քահանան անոնցմէ ոսկին առին. բոլորն ալ բանուած իրեր էին: **52** Հազարապետներէն եւ հարիւրապետներէն Տէրոց մատուցանուած բարձրացնելիք ընծային ամբողջ ոսկին՝ տասնվեց հազար եօթը հարիւր յիսուն սիկող էր: **53** (Զինուորներէն իւրաքանչիւրը իրեն համար կողոպուտ առեր էր:) **54** Մովսէս ու Եղիազար քահանան՝ հազարապետներէն եւ հարիւրապետներէն ոսկին առին ու Հանդիպումի վրանը բերին, որպէս Խորայէլի որդիներուն յիշատակը Տէրոց առջեւ:

ՅՈՐԴԱՆԱՆԻ ԱՐԵՒԵԼՔԸ ԳՏՆՈՒՈՂ ՏՈՂՄԵՐԸ (Բ.Օր. 3. 12-22)

32

Գաղի որդիները եւ Ռուբէնի որդիները յոյժ շատ խաշինք ունեին. տեսան Յազերի երկիրն ու Գաղաարի երկիրը, եւ ահա՝ **այդ** տեղը խաշինք **պահելու յարմար** տեղ մըն էր: **2** **Ուստի** Գաղի որդիներն ու Ռուբէնի որդիները գացին եւ Մովսէսի, Եղիազար քահանային ու համայնքի իշխաններուն ըսին. **3** «Ատարովթ, Դեբոն, Յազեր, Նամրա, Եսեբոն, Եղէաղէ, Սեբամա, Նաբաւ եւ Բէան, **4** **այսիհըց** Տէրոց Խորայէլի համայնքին առջեւ զարկած երկիրը, խաշինք **պահելու յարմար** երկիր մըն է, ու քու ծառաներոդ խաշինք ունին»: **5** Ուստի ըսին. «Եթէ մենք **“առջեւի շնորհք գտանք**, այս երկիրը քու ծառաներուդ թող տրուի իբր կալուած. մեզ Յորդանանէն մի՛ անցըներ»:

6 Մովսէս Գաղի որդիներուն եւ Ռուբէնի որդիներուն ըսաւ. «**Զեր** Եղբայրները պատերազմի երթան, իսկ դուք հո՞ս կենաք: **7** Ինչո՞ւ Խորայէլի որդիներուն սիրտը կը բեկանէք, որ չանցնին այն երկիրը՝ որ Տէրը անոնց տուած է: **8** **Զեր** հայրերը այսպէս ըրին, երբ զանոնք Կաղէս-Բառնեայէն դրկեցի՝ երկիրը տեսնելու համար: **9** Արդարեւ անոնք մինչեւ Եսքողի ձորը բարձրացան ու երկիրը տեսան, եւ Խորայէլի որդիներուն սիրտը բեկանեցին, որպէսզի չմտնեն այն երկիրը՝ որ Տէրը անոնց տուեր էր: **10** Նոյն օրը Տէրոց բարկութիւնը բորբոքեցաւ ու Երդում ըրաւ՝ ըսելով. **11** “Եգիպտոսէն բարձրացած մարդիկը – քսան տարեկանէն վեր Եղողները – բնա՛ւ պիտի չտեսնեն այն բերկիրը, որ Երդումով **խոստացայ** Աբրահամի, Խահակի եւ Յակոբի. քանի որ լման չետեւեցան ինծի, **12** բացի Կենեզեան Յեփոննէի որդիէն՝ Քաղէբէ, ու Նաւէի որդիէն՝ Յեսուէ, որոնք լման հետեւեցան **Տէրոց**: **13** Տէրոց բարկութիւնը Խորայէլի դէմ բորբոքեցաւ, ու զանոնք քառասուն տարի անապատին մէջ թափառեցուց, մինչեւ որ Տէրոց առջեւ չարիք գործող ամբողջ սերունդը սպառեցաւ: **14** Եւ ահա՝ դուք, մեղաւոր մարդոց շառափեներ, ձեր հայրերուն տեղը կանգնած էք, որպէսզի Խորայէլի դէմ Տէրոց բորբոքած բարկութիւնը դարձեալ աւելցնէք: **15** Արդարեւ Եթէ դուք անկէ հեռանաք, ան ալ դարձեալ այս **ժողովուրդը** անապատին մէջ պիտի ձգէ, ու դուք այս ամբողջ ժողովուրդը պիտի բնացնցէք»:

16 Անոնք մօտեցան անոր եւ ըսին. «**Մենք** հոս փարախներ պիտի կառուցանենք մեր խաշինքին համար, ու քաղաքներ՝ մեր մանուկներուն համար: **17** Բայց մենք արտորալով պիտի զինուինք եւ Խորայէլի որդիներուն առջեւէն **Երթահը**, մինչեւ որ զանոնք իրենց տեղը տանինք. իսկ մեր մանուկները պարսպապատ քաղաքներուն մէջ պիտի մնան՝

^ա **Երր.**՝ աչքերուդ

^բ **Երր.**՝ հողը

երկրին բնակիչներուն պատճառով։ **18** Մինչեւ որ հսրայէլի որդիներէն իւրաքանչիւրը իր ժառանգութիւնը չժառանգէ, մենք մեր տուները պիտի չվերադառնանք։ **19** արդարեւ մենք անոնց հետ պիտի չժառանգենք Յորդանանի միւս կողմը, **աւելի** անդին, որովհետեւ մեր ժառանգութիւնը մեզի տրուած է Յորդանանի այս կողմը, դէպի արեւելք»։

20 Մովսէս անոնց ըսաւ. «Եթէ սա՛ բանը ընէք, եթէ Տէրոց առջեւ զինուիք պատերազմի համար, **21** ու բոլորդ զինուած՝ Յորդանանէն անցնիք Տէրոց առջեւ, մինչեւ որ ան իր թշնամիները իր առջեւէն վտարէ **22** եւ **այս** երկիրը Տէրոց առջեւ նուանուի, ու յետոյ վերադառնաք, Տէրոց առջեւ եւ հսրայէլի առջեւ անմեղ պիտի ըլլաք ու այս երկիրը Տէրոց առջեւ ծեր կալուածը պիտի ըլլայ: **23** Բայց եթէ այսպէս չընէք, ահա՛ Տէրոց դէմ մեղանչած կ'ըլլաք, եւ գիտցէ՛ք թէ ծեր մեղքը ծեզ պիտի գտնէ: **24** Զեր մանուկներուն համար քաղաքներ կառուցանեցէ՛ք, ու ծեր ոչխարներուն համար՝ փարախներ. բայց ծեր բերանէն ելած **խոստումը** գործադրեցէ՛ք»։

25 Գաղի որդիները եւ Ռուբէնի որդիները խօսեցան Մովսէսի՝ ըսելով. «Ծառաներդ մեր տիրոց պատուիրածին համաձայն պիտի ընենք: **26** Մեր մանուկները, մեր կիները, մեր խաշինքն ու մեր բոլոր անասունները հո՞ս՝ Գաղաադի քաղաքներուն մէջ թող մնան: **27** Բայց ծառաներդ՝ մեր տիրոց ըսածին համաձայն, բոլորս ալ՝ զինուորութեան համար զինուած՝ Տէրոց առջեւ պիտի անցնինք պատերազմի համար»։

28 Հետեւաբար Մովսէս անոնց մասին պատուէր տուաւ Եղիազար քահանային, Նաւէի որդիին՝ Յեսուի, եւ հսրայէլի որդիներուն տոհմերու նահապետներուն. **29** Մովսէս անոնց ըսաւ. «Եթէ Գաղի որդիներն ու Ռուբէնի որդիները՝ բոլորն ալ պատերազմի համար զինուած՝ Տէրոց առջեւ Յորդանանէն անցնին ծեզի հետ, եւ **այս** երկիրը ծեր առջեւ նուանուի, Գաղաադի երկիրը անո՞ց տուէք իբր կալուած: **30** Բայց եթէ զինուած չանցնին ծեզի հետ, Քանանի երկրին մէջ պիտի ստանան իրենց կալուածը՝ ծեզի հետ»։ **31** Գաղի որդիներն ու Ռուբէնի որդիները պատասխանեցին. «Տէրը քու ծառաներուդ ի՞նչպէս պատուիրեց, ա՛յնպէս պիտի ընենք: **32** Մենք՝ զինուած՝ Քանանի երկիրը պիտի անցնինք Տէրոց առջեւ, որպէսզի մեր ժառանգութեան կալուածը Յորդանանի այս կողմը ըլլայ»։ **33** Ուստի Մովսէս անոնց – **այսինքն՝** Գաղի որդիներուն, Ռուբէնի որդիներուն եւ Յովսէփիեան Մանասէի կէս տոհմին – տուաւ Ամորհացիներու Սեհոն թագաւորին թագաւորութիւնը ու Բասանի Ովգ թագաւորին թագաւորութիւնը, երկիրը՝ իր քաղաքներով **ու** երկրին քաղաքներուն շրջակայ հողամասերով։

34 Գաղի որդիները կառուցանեցին Դեբոնը, Ատարովթը, Արոէրը, **35** Ատրոթ-Սովփանը, Յազերը, Յոգբեհան, **36** Բեթնամրան ու Բեթարանը – պարսպապատ քաղաքներ –, նաեւ ոչխարներու փարախներ։

37 Ռուբէնի որդիները կառուցանեցին Եսեբոնը, Եղէաղէն, Կարիաթեմը, **38** Նաբաւը եւ Բահադ-Մէոնը – որոնց անունները փոխուեցան –, նաեւ Սեբաման, ու իրենց կառուցանած քաղաքները **իրենց** անուններով կոչեցին։

39 Մանասէան Մաքիրի որդիները Գաղաադ գացին, զայն գրաւեցին, եւ անոր մէջ բնակող Ամորհացիները վտարեցին: **40** Մովսէս Գաղաադը տուաւ Մանասէան Մաքիրի, եւ ան հոն բնակեցաւ: **41** Մանասէան Յայիր գնաց, անոնց գիւղաքաղաքները գրաւեց, ու

^գ **Եբր.**՝ Երեսէն

^դ **Եբր.**՝ Եկած

^ե **Եբր.**՝ ըլլան

^գ Կամ՝ ուրիշ

զանոնք "Հաւոթ-Յայիր" կոչեց: **42** Իսկ Նոբահ գնաց, Կանաթը եւ անոր գիտերը գրաւեց, ու զայն Նոբահ կոչեց՝ իր անունով:

ԵԳԻՊՏՈՍԻՆ ՄՈՎԱԲ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

33

Ահա՛ասիկ Մովսէսի եւ Ահարոնի ամիջոցով Եգիպտոսի երկրէն իրենց զօրաբաժիններով ելլող հսրայէլի որդիներուն իշեւանները: **2** Մովսէս անոնց իշեւաններուն համեմատ իրենց երթերը գրեց՝ *Տէրոջ հրամանով*, ու իրենց երթերուն համեմատ ահա՛ասիկ անոնց իշեւանները: **3** Առաջին ամսուան մէջ, **այսինքն** առաջին ամսուան տասնհինգերորդ օրը, Ռամսէսէն մեկնեցան. Զատիկին հետեւեալ օրը՝ հսրայէլի որդիները բարձրացած ձեռքով դուրս ելան բոլոր Եգիպտացիներուն աշքերուն առցեւ, **4** երբ Եգիպտացիները **իրենց մեռելները** կը թաղէին, քանի որ *Տէրը անոնց բոլոր անդրանիկները զարկեր էր*, եւ *Տէրը անոնց աստուածներուն դէմ բատավճիռ արձակեր էր*:

5 Իսրայէլի որդիները Ռամսէսէն մեկնելով՝ *Սոկքովթ բանակեցան*, **6** ու *Սոկքովթէն մեկնելով՝ Ոթոմ բանակեցան*, որ անապատին ծայրն է: **7** Ոթոմէն մեկնելով դէսի Փիայիրոթ Վերադարձան, որ *Բահաղ-Սեփոնի դիմաց է*, եւ *Մագդողի առցեւ բանակեցան*: **8** Փիայիրոթի առցեւէն մեկնելով ու ծովուն մէջտեղէն անցնելով՝ անապատը **հասան**, եւ Ոթոմի անապատին մէջ երեք օրուան ճամբայ քալելով՝ *Մարա բանակեցան*: **9** Մարայէն մեկնելով՝ *Եղիմ հասան*. Եղիմի մէջ տասներկու ջուրի ակ ու *Եօթանասուն արմաւենի կային*, եւ հոն բանակեցան: **10** Եղիմէն մեկնելով՝ *Կարմիր ծովուն քով բանակեցան*. **11** Կարմիր ծովէն մեկնելով՝ *Սինի անապատը բանակեցան*. **12** *Սինի անապատէն մեկնելով՝ Դափկա բանակեցան*. **13** *Դափկայէն մեկնելով՝ Եղուս բանակեցան*. **14** *Եղուսէն մեկնելով՝ Ռափիդիմ բանակեցան*, ուր ժողովուրդին համար խմելու ջուր չկար: **15** *Ռափիդիմէն մեկնելով՝ Սինայի անապատը բանակեցան*. **16** *Սինայի անապատէն մեկնելով՝ Կիբրոթ-Հաթթաւա բանակեցան*. **17** *Կիբրոթ-Հաթթաւայէն մեկնելով՝ Ասերովթ բանակեցան*. **18** *Ասերովթէն մեկնելով՝ Ռաթամա բանակեցան*. **19** *Ռաթամայէն մեկնելով՝ Ռեմօն-Փարէս բանակեցան*. **20** *Ռեմօն-Փարէսէն մեկնելով՝ Լեբնա բանակեցան*. **21** *Լեբնայէն մեկնելով՝ Ռեսսա բանակեցան*. **22** *Ռեսսայէն մեկնելով՝ Կէլաթա բանակեցան*. **23** *Կէլաթայէն մեկնելով՝ Սոփար լեռը բանակեցան*. **24** *Սոփար լեռնէն մեկնելով՝ Ջարադա բանակեցան*. **25** *Ջարադայէն մեկնելով՝ Մակեդոթ բանակեցան*. **26** *Մակեդոթէն մեկնելով՝ Թահաթ բանակեցան*. **27** *Թահաթէն մեկնելով՝ Թարա բանակեցան*. **28** *Թարայէն մեկնելով՝ Մատեկա բանակեցան*. **29** *Մատեկայէն մեկնելով՝ Հասմոնա բանակեցան*. **30** *Հասմոնայէն մեկնելով՝ Մոսերոթ բանակեցան*. **31** *Մոսերոթէն մեկնելով՝ Բանէ-Յական բանակեցան*. **32** *Բանէ-Յականէն մեկնելով՝ Հոր-Գադադ բանակեցան*. **33** *Հոր-Գադադէն մեկնելով՝ Ետերաթա բանակեցան*. **34** *Ետերաթայէն մեկնելով՝ Եբրոնա բանակեցան*. **35** *Եբրոնայէն մեկնելով՝ Գասիոն-Գաբեր բանակեցան*. **36** եւ *Գասիոն-Գաբերէն մեկնելով՝ Սինի անապատը բանակեցան, այսինքն՝ Կադէս:*

37 Կադէսէն մեկնելով՝ *Հովր լեռը բանակեցան*, որ *Եղովմի երկրին ծայրն է*: **38** Ահարոն քահանան *Տէրոջ հրամանով Հովր լեռը բարձրացաւ ու հոն մեռաւ, հսրայէլի որդիներուն*

^է **այսինքն՝** Յայիրի գիտաքաղաքները

^ա **Եբր.**՝ ձեռքով

^բ **Եբր.**՝ դատաստան ըրեր էր

Եգիպտոսի երկրէն ելլելուն քառասուներորդ տարուան հինգերորդ ամսուան առաջին **օրը**:

39 Ահարոն Հովր լերան վրայ մեռած ատեն հարիւր քսաներեք տարեկան էր:

40 Քանանի երկրին հարաւային կողմը բնակող Արադի ⁴ Քանանիս թագաւորը իսրայէլի որդիներուն հասնիլը լսեց:

41 Հովր լեռնէն մեկնելով՝ Սելմոնա բանակեցան. **42** Սելմոնայէն մեկնելով՝ Փունոն բանակեցան. **43** Փունոնէն մեկնելով՝ Ոբովթ բանակեցան. **44** Ոբովթէն մեկնելով՝ Մովարի սահմանին մէջ եղող Իյէ-Աբարիմ բանակեցան. **45** Իյէ-Աբարիմէն մեկնելով՝ Դերոն-Գադ բանակեցան. **46** Դերոն-Գադէն մեկնելով՝ Գելմոն-Դերլաթէմ բանակեցան. **47** Գելմոն-Դերլաթէմէն մեկնելով՝ Աբարիմի լեռները բանակեցան, Նաբալի առջեւ. **48** Եւ Աբարիմի լեռներէն մեկնելով՝ Մովարի դաշտերուն մէջ բանակեցան, Երիքովի **դիմաց**, Յորդանանի մօտ: **49** Ուստի անոնք Յորդանանի մօտ բանակեցան, Բեթեսիմոթէն մինչեւ Աբէլ-Սատիմ, Մովարի դաշտերուն մէջ:

ՊԱՏՈՒԷՐՆԵՐ՝ ՅՈՐԴԱՆԱՆԻ ԱՆՑՆԵԼԵ ԱՌԱՋ

50 **Տէրը** Մովարի դաշտերուն մէջ, Երիքովի **դիմաց**, Յորդանանի մօտ, խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **51** «Խօսէ՛ իսրայէլի որդիներուն եւ ըսէ՛ անոնց. “Երբ Յորդանանէն Քանանացիներուն երկիրը անցնիք, **52** **այդ** երկրին բոլոր բնակիչները ձեր առջեւէն վտարեցէք, անոնց բոլոր պատկերազարդ **կոթողները** կործանեցէք, բոլոր “ձուլածոյ կուռքերը” կործանեցէք, ու բոլոր բարձր տեղերը փլցուցէք: **53** **Այդ** երկրին տիրացէք եւ անոր մէջ բնակեցէք, որովհետեւ **այդ** երկիրը ձեզի՛ տուի՛ որ անոր տիրանաք: **54** **Այդ** երկիրը վիճակով պիտի ժառանգէք ձեր գերդաստաններուն համեմատ. բազմաթիւ եղողին՝ շատ ժառանգութիւն պիտի տաք, ու փոքրաթիւ եղողին՝ քիչ ժառանգութիւն պիտի տաք. իւրաքանչիւրին **կալուածը** պիտի ըլլայ **այն տեղը**, ուր իր վիճակը ելած է. ձեր հայրերուն տոհմերուն համեմատ պիտի ժառանգէք: **55** Բայց եթէ **այդ** երկրին բնակիչները ձեր առջեւէն չվտարէք, իրենցմէ անոնք որ թողուք՝ ձեր աչքերուն խայթոցներ եւ ձեր կողերուն փուշեր պիտի ըլլան, ու ձեր բնակած երկրին մէջ ձեզի պիտի թշնամանան: **56** Եւ ինչ որ մտածեր էի անոնց ընել, **Ճոյնը** պիտի ընեմ ձեզի[□]»:

ԵՐԿՐԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

34

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **2** «Իսրայէլի որդիներուն պատուիրէ՛ եւ անոնց ըսէ՛. “Երբ Քանանի երկիրը մտնէք, (ահանասիկ այն երկիրը՝ որ պիտի “տրուի ձեզի իբր ժառանգութիւն, **այսինքն** Քանանի երկիրը՝ իր սահմաններով,) **3** ձեր հարաւային բահմանը՝ Սինի անապատէն մինչեւ Եղերքը պիտի ըլլայ: Արեւելքէն՝ ձեր հարաւային սահմանը Աղի ծովուն ծայրէն պիտի սկսի. **4** յետոյ ձեր սահմանը Ակրաբիմի զառիվերին հարաւային կողմը պիտի դառնայ, Սինէն պիտի անցնի, եւ Կաղէս-Բառնեայի

⁴ **Կամ՝** քանանացի

⁵ **Եբր.**՝ ձուլածոյ պատկերները

⁶ **Եբր.**՝ իյնայ

⁷ **Եբր.**՝ կողմը

⁸ **Եբր.**՝ ըլլայ

հարաւային կողմը յանգի. ապա Ասար-Ադդարէն ելլելով Ասեմոնէն պիտի անցնի, **5** ու սահմանը Ասեմոնէն մինչեւ Եգիպտոսի վտակը պիտի դառնայ եւ ծովը յանգի:

6 Արեւմտեան սահմանին համար՝ **"Մեծ ծովը"** պիտի ունենաք իբր սահման. այս պիտի ըլլայ ձեր արեւմտեան սահմանը:

7 Ահա՛ւասիկ ձեր հիւսիսային սահմանը.— Մեծ ծովէն մինչեւ Հովր լեռը նշանակեցէք ձեզի. **8** Հովր լեռնէն մինչեւ Եմաթի մուտքը նշանակեցէք, ու սահմանը Սեղադ պիտի յանգի: **9** Ապա սահմանը Զեփրոնէն պիտի ելլէ եւ Ասար-Ենան յանգի. այս պիտի ըլլայ ձեր հիւսիսային սահմանը:

10 Չեր արեւելեան սահմանին համար՝ Ասար-Ենանէն մինչեւ Սեփամ նշանակեցէք: **11** Այս սահմանը Սեփամէն Ռեբդա պիտի իջնէ, Այինի արեւելեան կողմը. յետոյ սահմանը պիտի իջնէ ու Քեներէթի ծովուն **"Եզերքին դպչի"**, արեւելեան կողմը: **12** Ապա սահմանը Յորդանան պիտի իջնէ եւ Աղի ծովը յանգի: Այս պիտի ըլլայ ձեր Երկիրը՝ իր շրջակայ սահմաններով□»:

13 Մովսէս Խորայէլի որդիներուն պատուիրեց. «Այս է այն Երկիրը, որ դուք վիճակով պիտի ժառանգէք, ինչպէս Տէրը պատուիրեց որ ինը տոհմերուն ու կէս տոհմին տրուի. **14** արդարեւ Ռուբէնի որդիներուն տոհմը՝ իրենց նահապետութիւններուն համեմատ, Գաղի որդիներուն տոհմը՝ իրենց նահապետութիւններուն համեմատ, եւ Մանասէի կէս տոհմը իրենց ժառանգութիւնը ստացան: **15** Այս Երկու տոհմերն ու կէս տոհմը իրենց ժառանգութիւնը ստացան Յորդանանի այս կողմը, Երիքովի **Դիմաց**, դէպի արեւելք»:

ԵՐԿՐԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԻՆ ՊԱՏԱԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ ԱՆՈՒՆԵՐԸ

16 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **17** «Ահա՛ւասիկ այն մարդոց անունները՝ որոնք Երկիրը ձեզի ժառանգել պիտի տան.— Եղիազար քահանան, Նաւէի որդին՝ Յեսու, **18** եւ ամէն տոհմէ **ալ** իշխան մը առէք՝ որպէսզի Երկիրը ժառանգել տան: **19** Ահա՛ւասիկ **այդ** մարդոց անունները.— Յուլայի տոհմէն Յեփոնէի որդին՝ Ջաղէք, **20** Շմաւոնի որդիներուն տոհմէն Ամիուտի որդին՝ Սամուէլ, **21** Բենիամինի տոհմէն Ջասոնի որդին՝ Ելդադ, **22** Դանի որդիներուն տոհմէն Եգորի որդին՝ Բոկկի իշխանը, **23** Յովսէփի որդիներէն՝ Մանասէի որդիներուն տոհմէն Եփոտի որդին՝ Անիէլ իշխանը, **24** ու Եփրեմի որդիներուն տոհմէն Սափաթանի որդին՝ Կամուէլ իշխանը, **25** Զաբուղոնի որդիներուն տոհմէն Փառնակի որդին՝ Եղիսափան իշխանը, **26** Խսաքարի որդիներուն տոհմէն Ազանի որդին՝ Փաղտիէլ իշխանը, **27** Ասերի որդիներուն տոհմէն Սելոմիի որդին՝ Աքիուդ իշխանը, **28** ու Նեփթաղիմի որդիներուն տոհմէն Ամիուտի որդին՝ Փաղայէլ իշխանը: **29** Ասոնք են **այն մարդիկը**, որոնց Տէրը պատուիրեց Խորայէլի որդիներուն ժառանգութիւնը տալու՝ թանանի Երկրին մէջ»:

ՂԵՒՏԱՅԻՆԵՐՈՒՆ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ՔԱՂԱՔՆԵՐԸ

35

Տէրը Մովսարի դաշտերուն մէջ, Երիքովի **Դիմաց**, Յորդանանի մօտ, խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **2** «Պատուիրէ՝ Խորայէլի որդիներուն, որ իրենց ժառանգութեան կալուածէն քաղաքներ տան Ղետացիներուն՝ **անոնց** մէջ բնակելու համար. նաև քաղաքներուն

^a Այսիցը՝ Միջերկրականը

^b Եբը՝ ուսին զարնուի

շրջակայ արուարձանները տուէք Ղետացիներուն: **3** Քաղաքները պիտի ունենան՝ **անոնց** մէջ բնակելու համար, իսկ անոնց արուարձանները՝ իրենց անասուններուն, ինչքին եւ բոլոր կենդանիներուն համար պիտի ըլլան: **4** Քաղաքներուն արուարձանները՝ որ Ղետացիներուն պիտի տաք, քաղաքին պարիսպէն դէպի դուրս՝ բոլորածեւ հազար կանգուն ընդարձակութիւն թող ունենան: **5** Ուստի քաղաքին դուրսը՝ արեւելեան կողմէն չափեցէք երկու հազար կանգուն, հարաւային կողմէն՝ երկու հազար կանգուն, արեւմտեան կողմէն՝ երկու հազար կանգուն, ու հիւսիսային կողմէն՝ երկու հազար կանգուն, քաղաքը մէջտեղը ըլլալով. այսպէս պիտի ըլլան իրենց քաղաքներուն արուարձանները: **6** Ղետացիներուն ծեր տալիք քաղաքներէն վեցը ապաստանի քաղաք թող ըլլան. զանոնք սորոշեցէք, որպէսզի մարդասպանը հոն փախչի: Ասոնցմէ զատ՝ քառասուներկու քաղաք **ալ** տուէք: **7** Ղետացիներուն ծեր տալիք բոլոր քաղաքները՝ քառասունութ քաղաք պիտի ըլլան. զանոնք իրենց արուարձաններով պիտի տաք: **8** Եւ այն քաղաքներուն համար՝ որ հսրայէլի որդիներուն կալուածէն պիտի տաք, բազմաթիւ եղողէն շատ առէք, փոքրաթիւ եղողէն քիչ առէք: հիրաքանչիւրը իր քաղաքներէն թող տայ Ղետացիներուն՝ իր ստացած ժառանգութեան համեմատ»:

ԱՊԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

(Բ. Օր. 19. 1-13: Ձես. 20. 1-9)

9 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **10** «Խօսէ՛ հսրայէլի որդիներուն եւ ըսէ՛ անոնց. «Երբ Ձորդանանէն Քանանի երկիրը անցնիք, **11** դուք ձեզի գաղաքներ՝ որոշեցէք», որ ձեզի ապաստանի քաղաքներ ըլլան, ու հոն փախչի այն մարդասպանը՝ որ սխալմամբ անձ մը սպաններ է: **12** Անոնք ձեզի ապաստանի քաղաքներ թող ըլլան **արիւնի** վրէժխնդիրէն, որպէսզի մարդասպանը չմեռնի՝ դատաստանի համար համայնքին ներկայանալէ առաջ: **13** Զեր տալիք քաղաքներէն վեցը ձեզի ապաստանի քաղաք թող ըլլան: **14** Երեք քաղաք Ձորդանանի այս կողմը տուէք, ու երեք քաղաք Քանանի երկրին մէջ տուէք. անոնք ապաստանի քաղաքներ պիտի ըլլան: **15** Այս վեց քաղաքները հսրայէլի որդիներուն, գաղթականին եւ ծեր մէջ քանակող հիւրին ապաստանարան պիտի ըլլան, որպէսզի ո՞վ որ սխալմամբ անձ մը սպաննէ՝ հոն փախչի:

16 Իսկ եթէ մարդ երկարէ առարկայով մը զարնէ մէկուն եւ մեոցնէ զայն, անիկա մարդասպան է. մարդասպանը **անշոնցտ** պիտի մեոցուի: **17** Կամ եթէ ծեռքը **բռնած** մահառիթ քարով մը զարնէ մէկուն ու մեոցնէ զայն, անիկա մարդասպան է. մարդասպանը **անշոնցտ** պիտի մեոցուի: **18** Կամ եթէ ծեռքը **բռնած** փայտէ մահառիթ առարկայով մը զարնէ մէկուն եւ ան մեոցնի, անիկա մարդասպան է. մարդասպանը **անշոնցտ** պիտի մեոցուի: **19** Արիւնի վրէժխնդիրը պիտի մեոցնէ մարդասպանը. Երբ անոր հանդիպի, ինք պիտի մեոցնէ զայն: **20** Կամ եթէ ատելութեամբ հրէ մէկը,

^ս **Եբր.**՝ տուէք

^բ **Եբր.**՝ սպաննողը

^գ **Եբր.**՝ քաղաքներուն հանդիպեցէք

^դ **Եբր.**՝ զարկեր

^ե **Եբր.**՝ զարնէ

^գ **Եբր.**՝ անոր

կանխամտածումով վրան **բան մը նետէ ու մեոցնէ զայն, 21 եւ կամ թշնամութեամբ իր ձեռքով զարնէ անոր ու մեոցնէ զայն, զարնողը **անշուշտ** պիտի մեոցուի. անիկա մարդասապան է: Արիւնի վրէժխնդիրը պիտի մեոցնէ մարդասապանը, երբ անոր հանդիպի:**

22 Բայց եթէ յանկարծ հրէ մէկը՝ առանց թշնամութեան, կամ թէ անոր վրայ որեւէ առարկայ նետէ՝ առանց կանխամտածումի, **23** կամ թէ՝ առանց տեսնելու՝ անոր վրայ որեւէ մահառիթ քար ծգէ եւ զայն մեոցնէ, **թէպէտ ինը** անոր թշնամի չէր ու անոր չարիքը չէր հուզեր, **24** համայնքը մարդասապանին եւ արիւնի վրէժխնդիրին միջեւ սա՛ կանոններուն համաձայն պիտի դատէ. — **25** համայնքը արիւնի վրէժխնդիրին ձեռքէն պիտի ազատէ մարդասապանը, ու համայնքը զինք պիտի վերադարձնէ իր ապաստանի քաղաքը՝ ուր փախած էր: Ինը հոն թող բնակի, մինչեւ որ սուրբ իւղով օծուած քահանայապետը մեռնի: **26** Բայց եթէ երբեք մարդասապանը դուրս ելլէ իր ապաստանի քաղաքին հողամասէն՝ ուր փախած էր, **27** եւ արիւնի վրէժխնդիրը զինք իր ապաստանի քաղաքին հողամասէն դուրս գտնէ ու արիւնի վրէժխնդիրը մարդասապանը մեոցնէ, արիւնի **պարտական** պիտի չսեպուի. **28** որովհետեւ անիկա իր ապաստանի քաղաքը կենալու էր՝ մինչեւ քահանայապետին մահը. բայց քահանայապետին մահէն ետք՝ մարդասապանը իր կալուածին երկիրը թող վերադառնայ: **29** Ասոնք ձեզի դատաստանի կանոններ պիտի ըլլան ձեր սերունդներուն **ու ձեր բոլոր բնակութիւններուն մէջ:**

30 Ո՞վ որ անձ մը սպաննէ, մարդասապանը վկաներու խօսքով պիտի մեոցուի. բայց անձ մը մեոցնելու համար՝ **միայն** մէկ վկայ թող՝ **չվկայէ:** **31** Մահապարտ մարդասապանին կեանքին համար փրկանք մի՛ առնէք, հապա ան **անշուշտ** պիտի մեոցուի: **32** Իր ապաստանի քաղաքը փախչողին համար փրկանք մի՛ առնէք, որպէսզի ան իր քաղաքը վերադառնայ ու բնակի քահանային մահէն առաջ: **33** Չեր բնակած երկիրը մի՛ պղծէք, քանի որ արիւնը կը պղծէ երկիրը. իր մէջ թափուած արիւնին համար՝ երկրի **մը ուրիշ բանով** քաւութիւն չ'ըլլար, բայց միայն զայն թափողին արիւնով: **34** Ուրեմն ձեր բնակած երկիրը անմաքուր մի՛ ընէք, որուն մէջտեղը ես կը բնակիմ. որովհետեւ ես՝ **Տէրս՝ հսրայէլի** որդիներուն մէջտեղը կը բնակիմ

ԱՄՈՒՍՆԱՅԱԾ ԿԻՆԵՐՈՒՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

36

Յովսէփի որդիներուն գերդաստաններէն՝ Մանասէի որդիին Մաքիրի որդիին Գաղաադի որդիներուն գերդաստանին նահապետները մօտեցան, Մովսէսի առջեւ ու իշխաններուն – հսրայէլի որդիներուն նահապետներուն – առջեւ խօսեցան, **2** եւ ըսին. «Տէրը մեր տիրոց պատուիրեց, որ երկիրը վիճակո՞վ իբր ժառանգութիւն տայ հսրայէլի որդիներուն. ու Տէրը

^է **ԵՐԾ.**՝ փնտոեր

^զ **ԵՐԾ.**՝ զարնողին

^թ **ԵՐԾ.**՝ զարնէ

^ժ **ԵՐԾ.**՝ բերանով

^ի **ԵՐԾ.**՝ չպատասխանէ

^լ **ԵՐԾ.**՝ անձին

^{իւ} **ԵՐԾ.**՝ եղած

մեր տիրոջ պատուիրեց, որ մեր եղբօր՝ Սալպաադի ժառանգութիւնը անոր աղջիկներուն տայ: **3** Բայց եթէ անոնք Իսրայէլի որդիներուն **ուրիշ** տոհմերուն որդիներէն մէկուն կին ըլլան, անոնց ժառանգութիւնը մեր հայրերուն ժառանգութենէն պիտի պակսի, եւ այն տոհմին ժառանգութեան վրայ պիտի աւելնայ՝ որուն մէջ պիտի ըլլան. ուրեմն մեր ժառանգութեան վիճակէն պիտի պակսի: **4** Իսրայէլի որդիներուն Յոթելեանին^ա անոնց ժառանգութիւնը այն տոհմին ժառանգութեան վրայ պիտի աւելնայ՝ որուն մէջ պիտի ըլլան. **այս կերպով** անոնց ժառանգութիւնը մեր հայրերուն տոհմին ժառանգութենէն պիտի պակսի»:

5 Մովսէս Տէրոց հրամանին համաձայն Իսրայէլի որդիներուն պատուիրեց. «Յովսէփի որդիներուն տոհմը շիտակ կը խօսի: **6** Ահա՛ ասիկ ինչ որ Տէրը պատուիրեց Սալպաադի աղջիկներուն մասին. «Անոնք թող կին ըլլան անոնց՝ ^աորոնց կը հաճին». **սակայն** միայն իրենց հօր տոհմին **մէկ** գերդաստանէն **եղողներուն** կին թող ըլլան, **7** որպէսզի Իսրայէլի որդիներուն ժառանգութիւնը տոհմէ տոհմ ^բչանցնի. քանի որ Իսրայէլի որդիներէն իւրաքանչիւրը իր հայրերուն տոհմին ժառանգութեան պիտի յարի: **8** Ամէն աղջիկ՝ որ Իսրայէլի որդիներուն տոհմերուն մէջ ժառանգութեան մը կը տիրանայ, իր հօր տոհմին **մէկ** գերդաստանէն **եղող** մէկուն կինը թող ըլլայ, որպէսզի Իսրայէլի որդիներէն իւրաքանչիւրը իր հայրերուն ժառանգութեան տիրանայ: **9** Ժառանգութիւնը տոհմէ տոհմ թող չանցնի, հապա Իսրայէլի որդիներուն տոհմերէն իւրաքանչիւրը իր ժառանգութեան թող յարի[□]»:

10 Սալպաադի աղջիկները ըրին այնպէս՝ ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեց: **11** Արդարեւ Սալպաադի աղջիկները՝ Մահալա, Թերսա, Էգղա, Մեղքա ու Նուա՝ իրենց հօրեղօրորդիներուն կիները եղան. **12** **այսպէս**՝ Յովսէփիեան Մանասէի որդիներուն գերդաստաններէն **եղողներու** կին եղան, եւ անոնց ժառանգութիւնը իրենց հօր տոհմին **ու** գերդաստանին **մէջ** մնաց:

13 Ասոնք են այն պատուիրաններն ու կանոնները, որ Տէրը Մովսէսի ^ամիջոցով Իսրայէլի որդիներուն պատուիրեց Մովաքի դաշտերուն մէջ, Երիքովի **դիմաց**, Յորդանանի մօս:

^ա **Եբր.**՝ որոնք իրենց աչքերուն լաւ են

^բ **Եբր.**՝ չշրջի

^գ **Եբր.**՝ ձեռքով